

Գ. Հ. Ճաղարյան

ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ
ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐՈՒՄ
ԵՎ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԺԱՄԱՆԱԿ

Ուսումնական ձեռնարկ

Գ. Հ. Ճաղարյան

ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԱՐՏԱԿԱՐԳ
ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐՈՒՄ
ԵՎ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԺԱՄԱՆԱԿ

(Ոլորտը կանոնակարգող օրենսդրական
հիմնավորումներ)

Ուսումնական ձեռնարկ

Երևան
Հեղինակային հրատարակություն

2016

ՀՏԴ 351.86 (07)

ԳՄԴ 68.9 ց 7

Ճ 180

Երաշխավորվել է հրատարակման է ֆիզիկական կուլտուրայի հայկական պետական ինստիտուտի (ՖԿՀՊԻ) գիտական խորհրդի որոշմամբ:

Գ. Հ. Ճաղարյան

Ճ 180

Բնակչության պաշտպանությունը արտակարգ իրավիճակներում և պատերազմի ժամանակ: Ուսումնական ձեռնարկ / Գ. Հ. Ճաղարյան – Եր.: Հեղ. Հրատ., 2016 – 162 էջ

Գրախոսներ՝ ՖԿՀՊԻ-ի Կիռառական մարզաձևերի ամբիոնի

դոցենտ Ս.Հ. Դանիելյան

Երևանի Հյուսիսային համալսարանի

Մանկավարժության և հոգեբանության ամբիոնի

դոցենտ Ե. Ա. Սարգսյան

Ուսումնական ձեռնարկում դիտարկվում են արտակարգ իրավիճակների (ԱԻ) և պատերազմի ժամանակ բնակչության պաշտպանության ուղղված հիմնահարցեր, ինչպիսիք են՝ բնակչության ազդարարումը, տարհանումը, պատսպարումը և պաշտպանությունը անհատական պաշտպանական միջոցներով: Ձեռնարկում մասնավորապես ներկայացված է Քաղաքացիական պաշտպանության (ՔՊ) համակարգը, գլխավոր խնդիրները, գործունեության սկզբունքները, իրավական ապահովման հիմքերը, դեկավար կազմը, ՔՊ միջոցառումները: Տրված է հարձակման ժամանակակից սովորական միջոցների հակիրճ բնութագիրը, զանգվածային ոչնչացման զենքերի խոցող գործոնները և նրանցից պաշտպանվելու ձևերը, ինչպես նաև ահաբեկչությունը, որպես իրական սպառնալիք ազգային անվտանգությանը: Դիտարկված է նաև ԱԻ-ում փրկարարական և անհետաձգելի

վթարավերականգնողական աշխատանքների նպատակները և իրականացման ձևերը: Ներկայացված է ԱԻ-ում բնակչության բարոյահոգեբանական հնարավոր խանգարումների

դրսևորումները, խուճապի և նրանց հաղթահարման ձևերը:

ՀՏԴ 351. 86 (07)

ԳՄԴ 68. 9 ց 7

ISBN 978-9939-0-1727-3

© Ճաղարյան Գ. Հ., 2016

Ն Ե Ր Ա Ծ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Այսօր պետության անվտանգության ապահովման համակարգում կարևոր սոցիալ-տնտեսական խնդիր է հանդիսանում հնարավոր վտանգավոր երևույթների՝ այդ թվում պատերազմների կանխատեսումը, կանխարգելումը և հետևանքների վերացումը: Ավելին՝ խնդիրը, հանդիսանալով ընդհանուր պետական պաշտպանական համակարգի բաղկացուցիչ մաս, պահանջում է համապարփակ լուծում և բոլոր պետական կառույցների փոխհամագործակցություն:

Ուսումնական ձեռնարկը նախատեսված է՝ Ֆիզիկական կուլտուրայի հայկական պետական ինստիտուտի բակալավրի ուսումնական ծրագրի շրջանակում «ՔՊ և ԱԻ հիմնահարցեր» առարկան ուսուցանվող ուսանողների համար: Ներկայացված նյութը ուսումնասիրելու համար բավարար է միջնակարգ կրթության ուսումնական ծրագրով ձեռք բերված գիտելիքները: Յուրաքանչյուր գլխի և կամ թեմայի մեկնաբանումից առաջ ներկայացվում է լուսաբանվող հարցերը, ուսուցման նպատակը, ակնկալվող ուսումնական արդյունքները, և այդ արդյունքը ապահովող կատարման չափանիշները: Շարադրված նյութի որոշակի հատվածներ ընդգծված են, որը ըստ հեղինակի ուսանողների համար առավել ուսանելի և կարևոր մասերն են:

Փորձ է արվում՝

- ունկնդիրներին իրազեկելու ԱԻ-ի և պատերազմի ժամանակ պետության կողմից իրականացվող ՔՊ միջոցառումներին՝ կարևորելով այդ գործընթացներներում քաղաքացիների իրավունքների և պարտականությունների, ինչպես նաև նախընտրելի վարքագծի դրսևորման լուսաբանումը,
- ուսանողների մոտ ձևավորելու ՔՊ անհատական և կոլեկտիվ պաշտպանական միջոցներից օգտվելու հմտություններ,
- ունկնդիրներին ուսուցանելու, տարաբնույթ ԱԻ-ում, նախընտրելի վարվելակերպի դրսևորման ունակություններ,

խոցող գործոններից պաշտպանվելու կարողություններ,
 - իրազեկելու, ԱԻ-ում և պատերազմի ժամանակ,
 փրկարարական և անհետաձգելի վթարավերականգնողական
 աշխատանքների իրականացման փուլերին և իրականացվող
 միջոցառումներին,
 - ներկայացնելու ԱԻ-ում բնակչության
 բարոյահոգեբանական հնարավոր խանգարումները, ըստ
 ժամամական հատվածի, խուճապի դրսևորման և նրանց
 հաղթահարման ձևերը, հնարքները,
 - իրազեկելու ԱԻ-ի և պատերազմի ժամանակ բնակչության
 ազդարարման կարգին և ազդարարման ազդանշանների
 տրման դեպքում բնակչության գործողություններին,
 - ձևավորելու պատկերացումներ ԱԻ-ում հումանիտար
 օգնության, սոցիալ-հոգեբանական աջակցության
 իրականացման սկզբունքների և իրականացման
 գործողությունների վերաբերյալ:
 Առաջադրվող ուսումնական նյութը հասանելի է
 հասարակության լայն շերտերին՝ անկախ
 մասնագիտությունից և կրթական աստիճանից:
 Ուսումնական ձեռնարկից կարող են օգտվել նաև
 միջնակարգ, միջնակարգ մասնագիտական կրթություն
 ապահովող հաստատությունների զինղեկները,
 աշակերտները և ուսանողները:

ԳԼՈՒԽ 1. ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Մեկնաբանվող հարցեր՝

1. ՔՊ համակարգը: Համակարգում ընդգրկված կառույցները, ղեկավարումը, գործունեության սկզբունքները, իրավական հիմքերը,
2. ՔՊ սահմանումը, քաղաքացիների իրավունքները և պարտականությունները ՔՊ բնագավառում,
3. ՔՊ միջոցառումները,
4. ՔՊ համակարգի խնդիրները և լուծման եղանակները:

Ուսուցման նպատակը՝

1. ուսանողներին հակիրճ ծանոթացնել ՔՊ համակարգին, նրա խնդիրներին, ՔՊ միջոցառումներին,
2. ունկնդիրների մոտ ձևավորել իմացություններ, ՔՊ բնագավառում Հայաստանի հանրապետության (ՀՀ) քաղաքացիների իրավունքների և պարտականությունների վերաբերյալ:

Ուսումնական արդյունք՝

1. ներկայացնել ՔՊ և ԱԻ համակարգը:

Կատարման չափանիշներ՝

1. ճիշտ է մեկնաբանում ՔՊ հասկացությունը,
2. ճիշտ է ներկայացնում ՔՊ և ԱԻ համակարգում ներառված կառույցները և համակարգի ղեկավարումը,
3. ճիշտ է ձևակերպում քաղաքացիների իրավունքները և պարտականությունները ՔՊ բնագավառում,
4. կարողանում է ներկայացնել ՔՊ համակարգի խնդիրները, և այդ խնդիրների լուծման եղանակները,
5. կարողանում է մեկնաբանել ՔՊ նախապատրաստական և հիմնական միջոցառումները:

1.1. ՔՊ համակարգը

ՔՊ-ն միջոցառումների համակարգ է՝ ուղղված բնակչության և նյութական արժեքների պաշտպանությանը

կամ պաշտպանության նախապատրաստմանը ՀՀ-ի վրա զինված հարձակման, դրա անմիջական վտանգի առկայության կամ ՀՀ Ազգային ժողովի (ԱԺ) կողմից պատերազմ հայտարարվելու դեպքում (6):

ՔՊ կազմակերպումը և իրականացումը պետության կարևորագույն գործառնություններից մեկն է և ազգային անվտանգության բաղկացուցիչ ու անբաժանելի մասը: ՔՊ համակարգը ներառում է պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինները, կազմակերպությունները (6): Պետությունը ՔՊ խնդրիներին պատրաստվում է նախապես խաղաղ պայմաններում:

ՔՊ սկզբունքներն են՝

ա) ՔՊ կազմակերպումը և իրականացումը ՀՀ ամբողջ տարածքում:

բ) ՔՊ իրականացումը՝ ըստ ռազմավարական, տարիքային, տարածքային, արտադրա-տարածքային առանձնահատկությունների:

գ) ՔՊ կազմակերպումը կենտրոնացված կառավարման սկզբունքով (6):

ՔՊ համակարգի ղեկավար կազմը

ՀՀ վարչապետը ՀՀ ՔՊ պետն է (6): ՔՊ բնագավառում ՀՀ կառավարության լիազոր մարմինը ՀՀ Արտակարգ իրավիճակների նախարարությունն (ԱԻՆ): ՀՀ նախարարները (գերատեսչությունների ղեկավարները), մարզպետները (Երևանի քաղաքապետը), համայնքների և կազմակերպությունների ղեկավարները, համապատասխանաբար նախարարությունների (գերատեսչությունների), մարզերի (Երևան քաղաքի), համայնքների և կազմակերպությունների ՔՊ պետերն են (6):

1.2. Համակարգի գործունեության իրավական սպառնալուծման հիմքերը

Համակարգի գործունեության իրավական սպառնալուծման հիմքերն են՝

- ՀՀ սահմանադրությունը (1995 թ. Հունիս, 2005 թ. նոյեմբերի),
- ՀՀ միջազգային պայմանագրերը,
- ՀՀ օրենքը ԱԻ-ում բնակչության պաշտպանության մասին (1998 թ. դեկտեմբեր),
- ՀՀ օրենքը ՔՊ մասին (2002 թ. մարտ),
- ՀՀ օրենքը սեյսմիկ պաշտպանության մասին (2002 թ. հունիսի),
- ՀՀ օրենքը Հայաստանի փրկարար ծառայության մասին (2005 թ. հուլիսի),
- ՀՀ օրենքը հրդեհային անվտանգության մասին (2001թ. ապրիլ),
- ՀՀ օրենքը փրկարար ուժերի և փրկարարի կարգավիճակի մասին (2004 թ. մայիս),
- ՀՀ կառավարության որոշումը վտանգավոր տարածքներից բնակչության տարահանման կարգը հաստատելու մասին (1999 թ. մարտ),
- ՀՀ կառավարության որոշումը ՀՀ տարածքում ԱԻ-ի առաջացման մասին բնակչության ազդարարման կարգը հաստատելու մասին (2005 թ նոյեմբեր),
- ՀՀ Կառավարության որոշումը ՀՀ տարածքում ԱԻ առաջացման մասին տեղեկատվության ստացման և ազդարարման կարգը հաստատելու մասին (2003 թ. հոկտեմբեր),
- ՀՀ կառավարության որոշումը բնակչությանն անհատական պաշտպանության միջոցներով ապահիվելու կարգը հաստատելու մասին (2000 թ հոկտեմբեր),
- ՀՀ կառավարության որոշումը բնակչության պատսպարման կարգը հաստատելու մասին (2000 թ սեպտեմբեր),
- ՀՀ կառավարության որոշումը ՔՊ վտանգավոր տարածքների բացահայտման, ճառագայթային, քիմիական և մանրէաբանական միջոցներից վնասագերծման ու վարակագերծման կարգը սահմանելու մասին (2012 թ. հոկտեմբեր) և ոլորտին առնչվող այլ իրավական ակտեր:

1.3. ՀՀ քաղաքացիների իրավունքները և պարտականությունները ՔՊ բնագավառում

ՀՀ յուրաքանչյուր քաղաքացի պարտավոր է մասնակցել ԱԻ-ի հետևանքներից բնակչության պաշտպանության միջոցառումների իրականացմանը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

ՀՀ յուրաքանչյուր քաղաքացի, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, իրավունք ունի ստանալ ԱԻ-ի հետևանքով իր կրած վնասների փոխհատուցում, ինչպես նաև՝ ճշգրիտ տեղեկություն ԱԻ-ի, դրանց առաջացման վտանգի և իր պաշտպանվածության աստիճանի մասին:

ԱԻ-ում քաղաքացիների սեփականության օտարումը կամ ժամանակավոր օգտագործումը հասարակության և պետության կարիքների համար կարող է կատարվել նախնական համարժեք փոխհատուցմամբ (միայն կյանքի փրկության հետ կապված փրկարարական աշխատանքների նպատակահարմար իրականացման համար)՝ ՀՀ կառավարության սահմանած կարգով (5):

ՀՀ քաղաքացիություն չունեցող անձինք և օտարերկրյա քաղաքացիները պարտավոր են կատարել ՔՊ միջոցառումների ուղղությամբ ՔՊ կառավարման մարմինների բոլոր ցուցումները: ՀՀ քաղաքացիություն չունեցող անձինք և օտարերկրյա քաղաքացիները ՔՊ միջոցառումներում ներգրավվում են ՔՊ մասին ՀՀ օրենքի և ՀՀ միջազգային պայմանագրերին համապատասխան (6):

1.4. ՔՊ և ԱԻ համակարգի գլխավոր խնդիրները

ԱԻ-ի և պատերազմի ժամանակ ՔՊ և ԱԻ համակարգի գլխավոր խնդիրներն են.

1. բնակչության հուսալի պաշտպանության ապահովումը,
2. հատուկ, կարևորագույն, պետական և ռազմավարական նշանակության, բարձր վտանգավորություն ունեցող ու բնակչության կենսագործունեությունն ապահովող օբյեկտների կայուն աշխատանքի ապահովումը,

3. խոցված օջախներում փրկարարական և անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքների իրականացումը,

4. բնակչության ազդարարումը:

Բնակչության հուսալի պաշտպանության ապահովմանը ուղղված հիմնական միջոցառումներից են.

- ազդարարման համակարգի կայուն աշխատանքի ապահովումը,

բնակչության ապահովումը ՔՊ պաշտպանական կառույցներով և անհատական պաշտպանական միջոցներով

- տարհանման միջոցառումները,

- կենսաապահովման ապահովագրական պաշարների ստեղծումը,

- բնակչությանը տարաբնույթ ԱԻ-ում վարքի կանոնների ուսուցանումը և այլն:

Հատուկ, կարևորագույն նշանակության օբյեկտների հուսալի աշխատանքի ապահովմանը ուղղված հիմնական միջոցառումներից են.

- արտադրական հիմնական ֆոնդերի պաշտպանության կազմակերպումը,

- արտադրական տեխնոլոգիաների կայունության բարձրացումը,

- նյութատեխնիկական միջոցների, հումքի ապահովագրական պաշարների ստեղծումը,

- այլընտրանքային էներգիայի աղբյուրների և

էներգակիրների ապահովագրական պաշարների ստեղծումը,

- օբյեկտների պաշտպանության ուժեղացումը,

- արտադրական հերթափոխների վերադասավորումը և այլն:

Փրկարարական և անհետաձգելի

վթարավերականգնողական գործընթացների

իրականացման միջոցառումներից են.

- խոցված օջախի հետախուզումը,

- տուժած բնակչության որոնում, փրկում, առաջին օգնության ցուցաբերումը,

- անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքների իրականացումը՝ ուղղված մարդկանց կյանքին և առողջությանը սպառնացող այնպիսի վտանգների վերացմանը, որոնք խոչընդոտում են փրկարարական աշխատանքներին:

Բնակչության ազդարարումը իրականացվում է ՀՀ տարածքում ԱԻ-ի առաջացման մասին տեղեկատվության ստացման և ազդարարման կարգը հաստատելու մասին ՀՀ Կառավարության որոշման համաձայն՝ (2003 թ. հոկտեմբեր):

1.5. ՔՊ միջոցառումները

ՔՊ միջոցառումները բաժանվում են նախապատրաստական և հիմնական միջոցառումների:

ՔՊ նախապատրաստական միջոցառումներն իրականացվում են նախապես: ՔՊ հիմնական միջոցառումներն իրականացվում են ՀՀ վրա զինված հարձակման, դրա անմիջական վտանգի առկայության կամ ՀՀ ԱԺ կողմից պատերազմ հայտարարվելու դեպքում:

ՔՊ նախապատրաստական միջոցառումներն են՝
ա) ՔՊ ուժերի ստեղծումը, պատրաստումը և մշտական պատրաստվածության ապահովումը.

բ) ՔՊ տեսանկյունից՝ բնակավայրերի, գործառնական այլ տարածքների գլխավոր հատակագծերում և մանրամասն հատակագծման նախագծերում հատուկ, կարևորագույն նշանակության օբյեկտների գործունեության կայունության ապահովումը և նպատակահարմար տեղաբաշխումը.

գ) շենքերի, շինությունների, ինժեներական ցանցերի, հիդրոտեխնիկական կառույցների, տրանսպորտային հաղորդակցության ուղիների և մայրուղիների շինարարության անվտանգության ու հուսալիության ապահովումը.

դ) վտանգավոր օբյեկտների անվտանգ գործունեության

ապահովումը.

ե) կառավարման, կապի ու ազդարարման համակարգերի հիմնումը և դրանց բնականոն գործունեության ապահովումը.

զ) պետական, պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների ու կազմակերպությունների պատրաստումը և բնակչության ուսուցումը.

է) ճառագայթային, քիմիական ու մանրէաբանական իրավիճակի մշտական հսկողության համակարգի ստեղծումը և գործունեության ապահովումը.

ը) կառավարման մարմինների և բնակչության իրազեկման ապահովման համակարգի հիմնումը.

թ) պաշտպանական կառույցների շինարարությունը և պահպանումը.

ժ) անհատական պաշտպանության միջոցների ու ՔՊ նպատակով այլ գույքի անհրաժեշտ պաշարների կուտակումը և պահպանումը.

ժա) սննդամթերքի, բժշկական ու նյութատեխնիկական անհրաժեշտ պաշարների ստեղծումը և պահպանումը.

ժբ) ՔՊ պլանների մշակումը:

ՔՊ հիմնական միջոցառումներն են՝

ա) կառավարման մարմինների և բնակչության ազդարարումը.

բ) տարահանումը և տեղաբաշխումը.

գ) պատսպարումը.

դ) անհատական պաշտպանության միջոցներով բնակչության ապահովումը.

ե) քողարկումը.

զ) փրկարարական աշխատանքների իրականացումը.

է) բժշկական ապահովումը.

ը) հակահրդեհային ապահովումը.

թ) վտանգավոր տարածքների բացահայտումը,

վնասագերծումն ու վարակագերծումը ճառագայթային, քիմիական և մանրէաբանական միջոցներից.

ժ) բնակչության կենսագործունեության ապահովումը.

ժա) գոհվածների հաշվառումը և հուղարկավորումը.

ժբ) շրջակա միջավայրի, ջրի, սննդամթերքի վիճակի ու վարակվածության դիտարկման և հսկողության մշտական իրականացման ուժեղացումը.

ժգ) կառավարման մարմինների և բնակչության իրազեկման ապահովումը.

ժդ) քիմիական, ճառագայթային և մանրէաբանական ապահովումը.

ժե) անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքների կատարումը.

ժզ) հասարակական կարգի ապահովումը, ինչպես նաև հատուկ, կարևորագույն նշանակության օբյեկտների պահպանման ուժեղացումը.

ժէ) նյութատեխնիկական պաշարների, տրանսպորտային և այլ միջոցների նպատակային օգտագործման ապահովումը.

ժը) փրկարարական աշխատանքների կազմակերպման ու իրականացման համար կապի հանրապետական, գերատեսչական և տեղական ցանցերի առաջնահերթ օգտագործումը:

Նշված միջոցառումներն իրականացվում են ՀՀ կառավարության սահմանած կարգով:

ԳԼՈՒԽ 2. ԽՈՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՄԻՋՈՑՆԵՐ

Մեկնաբանվող հարցեր՝

1. հարձակման ժամանակակից սովորական միջոցների հակիրճ բնութագիրը,

2. զանգվածային ոչնչացման զենքեր,

2.1. ատոմային զենքի պայթույնի տեսակները, խոցող գործոնների հակիրճ բնութագիրը, պաշտպանությունը, պատմական հակիրճ ակնարկ զենքի կիրառման և սահմանափակումների վերաբերյալ,

2.2. քիմիական զենքի բնութագիրը, մարտական հատկանիշները, դասակարգումն ըստ մարդու վրա ունեցած ազդեցության, հնարավոր կիրառման նշանները, պաշտպանությունը քիմիական զենքից, պատմական հակիրճ ակնարկ քիմիական զենքի կիրառման և սահմանափակումների վերաբերյալ,

2.3. կենսաբանական զենքի բնութագիրը, կիրառման ձևերը, միջոցները, օգտագործվող մանրէի տեսակները և առանձնահատկությունները, մարտական հատկանիշները, կիրառման նշանները, պաշտպանությունը կենսաբանական զենքից, վարքագծի կանոնները կենսաբանական վարակման օջախում:

Ուսուցման նպատակը՝

1. ունկնդիրներին իրազեկել հարձակման ժամանակակից միջոցների մասին,
2. ուսանողների մոտ ձևավորել զանգվածային ոչնչացման զենքերից պաշտպանվելու հմտություններ, կարողություններ:

Ուսումնական արդյունք՝

1. ներկայացնել հարձակման ժամանակակից սովորական միջոցները,
2. բնութագրել զանգվածային ոչնչացման զենքերի խոցող գործոնները, ներկայացնել մարտական հատկանիշները, ազդեցությունը մարդկանց և շրջակա միջավայրի վրա, և դրանցից պաշտպանվելու ձևերը:

Կատարման չափանիշներ՝

1. ճիշտ է ներկայացնում հարձակման ժամանակակից սովորական միջոցների մարտական հատկանիշները, ներգործության ձևերը,
2. ճիշտ է բնութագրում ատոմային զենքի խոցող գործոնները, մարտական հատկանիշները, տիրապետում է դրանցից պաշտպանվելու ձևերին, հնարքներին,
3. ճիշտ է բնութագրում քիմիական զենքը, մարտական հատկանիշները, կարողանում է դասակարգել քիմիական

զենքը, ըստ մարդու վրա ունեցած ազդեցության,

4.կարողանում է ներկայացնել քիմիական զենքի ազդեցության հետևանքները, տիրապետում է պաշտպանվելու ձևերին, հնարքներին,

5. ճիշտ է բնութագրում կենսաբանական զենքը, կիրառման հետևանքները, կարողանում է ներկայացնել հիվանդության մանրէն բնութագրող հատկանիշները,

6. ճիշտ է մեկնաբանում կենսաբանական զենքից

պաշտպանելու միջոցառումները, տիրապետում է վարքագծի կանոններին կենսաբանական վարակման օջախում:

Այսօր ամեն ինչ արվում է, որպեսզի ստեղծվի ավելի հզոր զենքեր, ավելի հզոր տեխնիկա, պետության անվտանգությունն ապահովելու կամ զավթողական հարցեր լուծելու համար: Գիտության ձեռքբերումների զգալի մասը ուղղվում է նոր զենքերի ստեղծմանը: Այժմ ստեղծված են գերհզոր զանգվածային ոչնչացման զենքեր, գերճշգրիտ զենքեր, առաջատար տեխնոլոգիաների օգտագործմամբ զենքերի բազմաթիվ տեսակներ, որոնք մեծ ուժգնությամբ և արագությամբ կարող են ոչնչացնել մեծամասշտաբ տարածքներ, մարդկային ռեսուրսներ:

2.1. Հարձակման ժամանակակից սովորական միջոցներ

Հարձակման ժամանակակից սովորական զենքերի խոցելիությունը հիմնականում պայմանավորված է պայթուցիկ նյութերի և հրկիզվող խառնուրդների ֆիզիկական, քիմիական փոխարկումների արդյունքում արտանետված էներգիայով, որը իր հերթին վերածվում է հարվածային կամ և ջերմային էներգիայի: Հատուկ տեղ են զբաղեցնում նաև գերճշգրիտ զենքերը:

Գերճշգրիտ զենքեր

Գերճշգրիտ զենքերը հիմնականում ավիառումբերն են, տարատեսակ հրթիռները և հրետանային այն միջոցները, որոնց նշանակետից շեղվելու հավանականությունը շատ փոքր է, իսկ շեղվելու չափը՝ մի քանի սանտիմետրից մինչև

1-2 մետր: Վերջին տասնամյակում ոչ մի զինատեսակ այդքան արագ չի կատարելագործվել, որքան գերձգրիտ զենքը: Դրանց զարգացմանը հատկապես նպաստել է տեղեկատվական և համակարգչային տեխնոլոգիաների զարգացումն ու ներդրումը ռազմական ոլորտում: Գերձգրիտ զենքերը, կրճատելով խոցման ժամանակը և ծախսերը, բարձրացնում են արդյունավետությունը: Գերձգրիտ զենքերի արդյունավետության դրսևորման վառ օրինակ կարող է հանդիսանալ 1991 թ-ին Պարսից ծոցի պատերազմում Իրաքի՝ շարքից դուրս բերված օբյեկտների 90 %-ը (1):

Հրթիռ՝ թռչող սարք, որը շարժվում է տարածության մեջ հրթիռային մասի սեփական զանգվածի արտանետման ընթացքում առաջացող ռեակտիվ քարշուժի շնորհիվ (2): Հրթիռները լցվում են վառելանյութով, որի այրումից առաջանում է գազերի հզոր հոսք: Գազերը բարձր ճնշման տակ արագ դուրս են հորդում ծայրափողակից, և առաջացած ռեակտիվ ուժը հրթիռը հրում է հակառակ ուղղությամբ: Կիրառվում են ռազմական բնագավառում, տիեզերական սարքերի արձակման, ինչպես նաև գիտական հետազոտությունների նպատակով: Հրթիռների մարտական հատկանիշներից են՝

- թռիչքի մեծ հեռավորությունը և արագությունը,
- անհրաժեշտ բեռը նպատակակետին հասցնելու կարողությունը,
- թիրախի խոցման բարձր ճշտությունը,
- մանևրելու ունակությունը,
- նվազ խոցելիությունը (2):

Օրինակ միջմայրցամաքային բալեստիկ հրթիռի թռիչքի հեռավորությունը գերազանցում է 10000 կմ, մեկնարկային զանգվածը միչև 150 տ, նպատակային բեռը 3.2 տ: Ռազմական ոլորտում հրթիռային զենքերն ըստ նշանակության բաժանվում են՝ **ստրատեգիական, օպերատիվ-տակտիկական և տակտիկական (2):**

Ստրատեգիական հրթիռային զենքերը նախատեսված են հակառակորդի ստրատեգիական օբյեկտները, վարչաքաղաքական, ռազմաարդյունաբերական կենտրոնները ոչնչացնելու համար: Կարող են արձակվել ստորգետնյա հորաններից, ինքնաթիռներից, ռազմանավերից (2):

Օպերատիվ-տակտիկական հրթիռային զենքերով զինվում են ցամաքային, ռազմաօդային և ռազմածովային ուժերը: Նախատեսված է հակառակորդի զանգվածային հարձակման միջոցների բազաները, երկաթուղային հանգույցները, օդանավակայանները ոչնչացնելու համար (2):

Տակտիկական հրթիռային զենքերը նախատեսված են հակառակորդի տակտիկական գոտում գտնվող օբյեկտների ոչնչացման համար: Արձակման ինքնագնաց կայանքները գտնվում են անմիջականորեն մարտական դիրքերում և աջակցում են վարվող մարտական գործողություններին: Այս զենքով են զինվում զանազան զորատեսակներ (2):

Ճառագայթային զենքեր

Այս զենքերի խոցող գործոն է հանդիսանում ճառագայթային էներգիայի միջոցով ջերմամեխանիկական ազդեցությունը թիրախի վրա: Գառագայթային զենքերից են՝ **լազերայինը, փնջայինը:**

Լազերային զենք

Իրենից ներկայացնում է լույսի արագությամբ էլեկտրամագնիսական էներգիայի ճառագայթման օպտիկական զենքատոր, որը կարող է նեղ ուղղորդված փնջով բարձր էներգիա ճառագայթել (1): Ազդեցության սկզբունքը ջերմամեխանիկական ազդեցության միջոցով նշանակետի խոցումն է՝ ի հաշիվ էլեկտրամագնիսական էներգիայի ճառագայթման: Խոցման կետում դրսևորվում է ջերմաստիճանի կտրուկ բարձրացում, որը հալեցնում, այրում կամ գոլորշիացնում է տվյալ հատվածը, մարդկանց մոտ կարող է առաջացնել կուրացում և թերմիկ այրվածքներ: **Լազերային զենքերը** կարող են արդյունավետ խոցել

տիեզերական սարքերը, օդային նշանակետերը, հրթիռների ինքնանշանառման գլխիկները, էլեկտրոնային օպտիկական միջոցները (1):

Փնջային զենք (արագացուցչային)

Այս զենքի խոցող գործոնը բարձր էներգիայով լիցքավորված մասնիկների (էլեկտրոններ, ատոմի միջուկներ), մագնիսական դաշտի միջոցով կառավարվող, սուր ուղղորդված փնջի կիրառումն է՝

- արբանյակների, բալեստիկ հրթիռների խոցման,
- կարևորագույն օբյեկտները, թևավոր հրթիռների հարձակումից պաշտպանելու,

- հրթիռների թողարկման սարքերի պաշտպանության

և այլ պաշտպանական խնդիրներ լուծելու համար: Փնջային զենքի համակարգը պետք է իր մեջ ընդգրկի լիցքավորված մասնիկների արագացուցիչ, էներգիայի աղբյուր, էներգիայի կուտակման, նպատակակետի հայտնաբերման և նշանառության սարքեր (1):

Ծավալային պայթյունի զենքեր (վակումային զենքեր)

Որպես մարտական լիցք օգտագործվում են հեղուկ ածխաջրածնային վառելիքներ: Որպես կանոն, վերջիններով լցված տարողությունները բացվում են նախատեսված բարձրություններում և առաջացնում գազային ամպ, որը պայթեցնում են հատուկ պայթուցիչով: Ձևավորվում է հզոր հարվածային ալիք, որը ավերում, ամայացնում է 1հա-ից ավելի տարածք: Ջերմաստիճանը հասնում է 2500–3000°C-ի (1): Էթիլեն օքսիդի, մեթիլացետիլենի, պրոպանի և աներգոլի խառնուրդի ժամանակ ստեղծվում է հարաբերական դատարկություն (վակուում) և հզոր հավելյալ ճնշում ունեցող գերձայնային հարվածող ալիք: Ավերիչ ուժով համեմատելի է միջուկային զենքի հարվածային ալիքին: Այս հանգամանքը հիմք է հանդիսացել, որպեսզի Միավորված ազգերի կազմակերպությունը (ՄԱԿ) որոշում կայացնի զենքի կիրառման արգելքի մասին:

Հրկիզող զենքեր

Խոցող ազդեցությունը հիմնված է հրկիզող նյութերի և խառնուրդների քիմիական փոխարկումների հետևանքով արտանետված բարձր ջերմաստիճանի վրա (1): Կիրառվում են հիմնականում ավիառումբերի ձևով: Ըստ կիրառվող հումքի՝ բաժանվում են հետևյալ խմբերի՝

1. **հրկիզող խառնուրդներ-նապալմ** (բենզին-90 %, թանձրացնող փոշի 3-10 %, այրման ջերմաստիճանը՝ 1200°C, այրման տևողությունը՝ 5-10 րոպե, թեթև է ջրից),
2. **նավթամթերքների խառնուրդներ-հրահեղներ** (նավթամթերք՝ ավելացված փոշենման մագնեզիում, հեղուկ ասֆալտ, սելիտրա և այլ նյութեր, այրման ջերմաստիճանը՝ 1600°C),
3. **թերմիտային խառնուրդներ** (երկաթի, ալյումինի փոշենման խառնուրդներ, բարիումի սելիտրա, ծծումբի և կապակցող նյութեր, ջերմաստիճանը՝ 3000°C) (1):

Գնդիկավոր ռումբեր

Կիրառվում են որպես ավիառումբեր: Չափերով թենիսի գնդակից մինչև ֆուտբոլի գնդակի մեծության են: Պարունակում են 300-ից ոչ պակաս մետաղյա կամ պլաստմասե 5-6 մմ տրամագծով գնդիկներ, ասեղներ, նետեր: Խոցման շառավիղը 15 մ է, ազդեցության մակերեսը՝ 160-250 մ² (1):

Ինֆրաձայնային զենքեր

Զենքի խոցող ազդեցությունը պայմանավորված է մարդու օրգանիզմի վրա ինֆրաձայնային ալիքների ազդեցությամբ: Միավոր հերց հաճախականությամբ ինֆրաձայնի փոքր հզորությունները մարդկանց մոտ առաջացնում է տազնապ, վախ, անհանգստություն, խուճապ: Հզոր ամպլիտուդներով կարճատև իմպուլսները առաջացնում են հոգեբանական բնույթի նոպաներ: Ինֆրաձայնային ալիքները հեշտությամբ թափանցում են բարձր խտության նյութերի միջով, որը հնարավորություն է ընձեռում խոցել մարտադաշտում՝ թաքստոցներում և ապաստարաններում, պատսպարվող

հակառակորդի կենդանի ուժը (1):

Պաշտպանությունը հարձակման ժամանակակից սովորական միջոցներից

- Եթե նախօրոք տեղեկացված ենք հարձակման մասին՝
- պատսպարում ՔՊ պաշտպանական կառույցներում,
 - բնակչության տարհանում անվտանգ տարածքներ,
 - հակահրդեհային միջոցառումների իրականացում,
- Հանկարծակի հարձակման դեպքում՝
- մակերևութապատկերի հնարավորությունների օգտագործում:

Արգելված զինատեսակներ

Պատերազմ վարելու մի շարք միջոցների արգելումը խարսխվում է միջազգային մարդասիրական սկզբունքների վրա: Միջազգային հանրությանը հաջողվել է ստեղծել միջազգային պայմանագրերի համակարգ, ըստ որի արգելվել է մի շարք զենքերի օգտագործումը:

Այդպիսի զինատեսակներից են՝

- հեղձուցիչ, թունավոր գազերը և հեղուկները,
- զանգվածային ոչնչացման զենքերը,
- մարդու մարմնում պտտվող խոցող միջոցները,
- բնությանը նպատակային վնաս պատճառող մարտական միջոցները,
- հակահետևակային ականները, ական-ծուղակները, ական-խաղալիքները,
- վակուումային, կասետային ռումբերը, հրկիզող զենքերը,
- զենքեր, որոնց բեկորները մարդու մարմնում չեն հայտնաբերվում ռենտգենի միջոցով:

2.2. Զանգվածային ոչնչացման զենքեր

Զանգվածային ոչնչացման զենքեր են՝ **միջուկային, քիմիական և կենսաբանական զենքերը** (30): Այս զենքերի հզորությունը պայմանավորված է նրանց խոցող գործոնների բազմազանությամբ, ազդեցության ոլորտի մասշտաբայնությամբ և որոշակի գործոնների ազդեցության

երկարատևությամբ:

2.2.1. Միջուկային զենք (ատոմային զենք)

Միջուկային զենքի հզորությունը պայմանավորված է ռադիոակտիվ (ծանր) տարրի ատոմների միջուկները նեյտրոններով ճեղքման արդյունքում արտանետված հզոր էներգիայով: Միջուկային պայթյուն կարող է առաջանալ նաև թեթև տարրերի (ջրածնի իզոտոպներ) ատոմների միջուկների միացման արդյունքում (թերմոմիջուկային ռեակցիա): Ատոմների միջուկների ճեղքումը իրականանում է շատ կարճ ժամանակահատվածում, միջավայր է արտանետվում ահռելի էներգիա:

Միջուկային զենքի հզորությունը ընդունված է չափել տրոտիլի (տրինիտրոտոլու) պայթյունի նկատմամբ ունեցած նրա համարժեքով: Օրինակ 20 կիլոտոննա (կտ) հզորությամբ միջուկային զենքի պայթյունից արտանետված էներգիան համարժեք է 20 կտ կամ 20 հազար տոննա տրոտիլի պայթյունից արտանետված էներգիային: Հայտնի է, որ 1 գ ուրանի ճեղքումից միջավայր է արտանետվում 20 տ տրոտիլի պայթյունին համարժեք էներգիա (28): Հետևաբար կարող ենք եզրակացնել, որ օրինակ 40 տ հզորությամբ միջուկային զենքի մարտագլխիկը պարունակում է 2 գ ուրան: Ըստ հզորության՝ միջուկային ռազմամթերքները լինում են **գերփոքր՝** միջև 1կտ, **փոքր՝** 1-10 կտ, միջին՝ 10-100 կտ, **խոշոր՝** 100-1000 կտ (1մգ/տ), **գերխոշոր** 1մգ/տ և ավելին (1): Ըստ կիրառման տիրույթի՝ միջուկային հարվածները լինում են **օդային, վերգետնյա, ստորգետնյա, վերջրյա և ստորջրյա (32):** Արտանետված էներգիան դրսևորվում է 4 խոցող գործոնների ձևով՝

- **հարվածային ալիք,**
- **լուսային ճառագայթում,**
- **ներթափանցող ռադիացիա**
- **էլեկտրամագնիսական իմպուլս (27):**

Հարկ է նշել նաև, որ բացի արտանետված էներգիայից,

միջուկային ռեակցիայի արդյունքում առաջանում են ռադիոակտիվ տարրեր, որոնք հանգեցնում են **տեղանքի ռադիոակտիվ վարակվածության (27):**

Հարվածային ալիք

Արտանետված էներգիայի մոտ 50 % -ը դրսևորվում է հարվածային ալիքի ձևով (28): Այն իրենից ներկայացնում է կտրուկ սեղմված օդի ամպ՝ ավելցուկային ճնշումով: Տարածվում է գնդաձև, գերձայնային արագությամբ, ազդեցության ժամանակահատվածը՝ 1-2 բուպե, չափման միավորը՝ կգ/սմ² կամ պասկալ (Պա): $1 \text{ Պա} = 1 \text{ ն/մ}^2$, $1 \text{ կգ/սմ}^2 = 100 \text{ ԿՊա}$: Մարդկանց մոտ բաց տարածքում 0.2-1 կգ/սմ² ազդեցության գոտիներում առաջացնում է ոսկրամկանային համակարգի վնասվածքներ, ցնցումներ: Լետալ՝ մահացու չափաբաժինը համարվում է 1 կգ/սմ² և ավելի քանակները: Շինությունները ամբողջությամբ ավերվում են պայթյունի էպիկենտրոնից մինչև 0.5 կգ/սմ² ազդեցության գոտիներում, իսկ 0.5-0.2 կգ/սմ² ազդեցության գոտիներում տեղաբաշխվածները ենթարկվում են ուժեղ, միջին և թույլ ավերումների (28): Ավերումների գոտու շառավիղը կախված է միջուկային զենքի հզորությունից: 1մգ/տ հզորության պայթյունի դեպքում ավերածությունների գոտին կազմում է 11 կմ:

Պաշտպանությունը՝

Եթե նախօրոք տեղեկացված ենք հարձակման մասին՝
- պատասպարում ՔՊ պաշտպանական կառույցներում,
- բնակչության տարիանում անվտանգ տարածքներ (32):
Հանկարծակի հարձակման դեպքում՝
- մակերևութապատկերի պաշտպանական
հնարավորությունների օգտագործում:

Լուսային ճառագայթում

Արտանետված էներգիայի մոտ 30 %-ը դրսևորվում է լուսային ճառագայթման ձևով (28): Իրենից ներկայացնում է լույսի ալիքներ, որի գերակշռող մասը ուլտրամանուշակագույն և ինֆրակարմիր կարճ ալիքներ են:

Տարածվում է գնդաձև, լույսի արագությամբ, ազդեցության ժամանակահատվածը՝ 8-15 վրկ (32): Էպիկենտրոնում ձևավորվում է հրեգունդ, որտեղ ջերմաստիճանը հասնում է միլիոնավոր աստիճանների: Լուսային ճառագայթի հզորությունը չափվում է լուսային իմպուլսով, որի չափման միավորը կալ/սմ² է: Անպաշտպան, բաց տարածքներում լուսային իմպուլսի 2-18 կալ/սմ² ազդեցության գոտիներում մարդկանց մոտ առաջանում են I-IV°-ի ջերմային այրվածքներ, կուրացումներ, շրջակա միջավայրում զանգվածային հրդեհներ (28):

Պաշտպանությունը

Եթե նախօրոք տեղեկացված ենք հարձակաման մասին՝

- պատասպարում ՔՊ պաշտպանական կառույցներում,
- բնակչության տարհանում անվտանգ տարածքներ,
- հակահրդեհային միջոցառումների իրականացում,
- ծխապատ գոտիների ստեղծում:

Հանկարծակի հարձակման դեպքում՝

- մակերևութապատկերի հնարավորությունների օգտագործում,
- կառույցների ստվերոտ մասերի օգտագործում:

Ներթափանցող ռադիացիա:

Արտանետված էներգիայի մոտ 18-20 %-ը դրսևորվում է ներթափանցող ռադիացիայի տեսքով (28): Իրենից ներկայացնում է ռադոակտիվ տարրի միջուկի ճեղքման ժամանակ առաջացած նեյտրոնների և գամմա ճառագայթների հոսք (30): Օժտված է մեծ թափանցելիությամբ և հզոր էներգիայով, տարածվում է 100-ավոր մետրերից մինչև մի քանի կիլոմետր լույսի արագությամբ մոտ արագությամբ, ազդեցության ժամանակահատվածը՝ 10-15 վրկ: Հանդիպելով կենդանի և անկենդան մարմինների՝ մխրճվում է նրանց մեջ: Ռադիացիայի մի մասը կլանվում է մարմինների կողմից, իսկ մյուս մասը շարունակում է իր ճանապարհը միջև նոր մարմինների կողմից կլանվելը: Որքան մեծ է մարմնի

տեսակարար կշիռը, այնքան բարձր է նրա ռադիացիայի կլանման գործակիցը: Ռադիացիայի կլանմանը նպաստում է նաև նյութի հաստությունը: Օրինակ ռադիացիան կիսով չափ թուլացնում է՝ կապարը-2 սմ, պողպատը-3 սմ, բետոնը-10 սմ, բնահողը-14 սմ, փայտը-25 սմ, ջուրը-30 սմ (1): Ռադիացիայի այն հատվածը, որը կլանվել է մարմնի կողմից, կոչվում է կլանված դոզա: Կլանված ռադիացիան իր էներգիան փոխանցելով կենդանի հյուսվածքների բջիջներին, առաջացնում է իոնիզացիա, արդյունքում՝ ֆունկցիոնալ խանգարումներ, ինչը և դրսևորվում է ճառագայթային հիվանդությունների ձևով: Անկենդան մարմիններում ազդում է մոլեկուլային կապի վրա՝ հանգեցնելով կառուցվածքային փոփոխությունների: Ռադիացիայի չափման միավորներից է ռենտգենը (2 միլիարդ գույգ լիցքավորված մասնիկների առկայությունը 1 սմ³-ում):

Պաշտպանությունը

Եթե նախօրոք տեղեկացված ենք հարձակման մասին՝

- պատսպարում ՔՊ պաշտպանական կառույցներում,
- բնակչության տարհանում անվտանգ տարածքներ,
- պատսպարում զրահատեխնիկայում (30):

Հանկարծակի հարձակման դեպքում՝

- մակերևութապատկերի հնարավորությունների

օգտագործում:

Էլեկտրամագնիսական իմպուլս

Արտանետված էներգիայի չնչին տոկոսն է դրսևորվում էլեկտրամագնիսական իմպուլսի տեսքով: Իրենից ներկայացնում է էլեկտրական և մագնիսական դաշտերի համակցություն: Ազդում է այն սարքավորումների վրա, որոնք իրենց աշխատանքային ռեժիմում ստեղծում են էլեկտրական և կամ մագնիսական դաշտ: Մարդկանց վրա վնասակար ազդեցություն գրեթե չի թողնում:

Տեղանքի ռադիոակտիվ վարակվածության պայմաններում բնակչության պաշտպանությունը արդյունավետ կազմակերպելու համար էական նշանակություն ունի

Ճառագայթային իրադրության օպերատիվ գնահատումը:

Պատմական տվյալներ

Առաջին միջուկային զենքը կիրառել է Ամերիկայի Միացիալ Նահանգները (ԱՄՆ): 1945թ. օգոստոսին 15 և 20 կտ հզորությամբ ատոմային զենքերով ռմբակոծվեցին Ճապոնական Նագասակի և Հերոսիմա քաղաքները: Մահացան ավելի քան 313 հազար և վնասվածքներ ստացան 238 հազար խաղաղ բնակիչներ (1): 1963 թ. օգոստոսի 5-ին ԱՄՆ-ի, ԽՍՀՄ-ի և Անգլիայի միջև կնքվեց պայմանագիր՝ միջուկային զենքի փորձարկումները սահմանափակելու մասին (2): 1967 թ. հունվարի 27-ին և 1968 թ հուլիսի 1-ին նույն երկրների միջև կնքվեց պայմանագիր՝ այլ երկրներին ատոմային ռազմական տեխնոլոգիաներ չտրամադրելու վերաբերյալ (2): Այսօր ատոմային տերություններ են հանդիսանում ԱՄՆ, Ռուսաստանի Դաշնությունը, Ուկրաինան, Անգլիան, Ֆրանսիան, Չինաստանը, Հնդկաստանը, Պակիստանը, Իսրայելը, Հարավաֆրիկյան Հանրապետությունը, Ղազախստանը, Բելառուսիան և այլն (2):

Ճառագայթային իրադրության գնահատման մեթոդներ

Ճառագայթային իրադրությունը գնահատվում է

հետախուզման և կանխատեսման մեթոդով:

Ճառագայթային իրադրության հետախուզման կազմակերպումը իրականացվում է հետախուզական հատուկ խմբերի միջոցով հետիոտն կամ ավտոմեքենայով: Խմբերը համալրված են լինում դոզաչափիչ սարքավորումներով, անհատական պաշտպանական և կապի միջոցներով: Պահպանվում է հակաճառագայթային ռեժիմը (31):

Նրանց խնդիրն է՝

- հայտնաբերել ռադիոակտիվ վարակման գոտիները, որոշել ռադիացիայի մակարդակը,
- հետևել ճառագայթային իրադրության փոփոխությանը,
- հսկողության տակ պահել բնակչության

- ճառագայթահարման չափաբաժինները,
- որոշել մարդկանց, կենդանիների, ջրի, տեղանքի
վարակվածության աստիճանը:
Ճառագայթային հետախուզման համար կիրառվում են
դոզաչափիչ սարքեր:

Դոզաչափիչ սարքեր

Նախատեսված են որոշելու՝ ռադիացիայի մակարդակը
տեղանքում, վարակվածության աստիճանը մարդու մարմնի,
հագուստի, սննդամթերքի, առարկաների վրա, ինչպես նաև
մարդկանց ճառագայթահարման բաժնեչափը (1):

Ըստ գործառնության բաժանվում են՝

- **ռենտգենոմետրեր**՝ տարածքի հետախուզման,

- **ռադիոմետրեր**՝ վարակվածության աստիճանի
վերահսկման,

- **դոզիմետրեր**՝ ճառագայթահարման վերահսկման (1):

Դոզաչափիչ սարքավորում ԺՊ - 5B

Նախատեսված է տարածքի հետախուզման համար,
չափում է γ ռադիացիայի մակարդակը n/θ -ով տարածքում,
ինչպես նաև սննդամթերքի, իրերի, ջրի վարակվածության
աստիճանը γ ճառագայթներից m/θ -ով: Սարքը կարող է
հայտնաբերել նաև β ճառագայթումը (1):

Անհատական դոզաչափական լրակազմ ԺՊ-22-B,

ԺՊ-24, ՊԺ-1

Նախատեսված է անձնակազմի ճառագայթահարման
անհատական կլանման բաժնեչափը որոշելու համար:
Չափում է 2-50 n դոզա միջակայքը, 0.5 n/θ -ից մինչև 200 n/θ
վարակվածության պայմաններում (1):

Կանխատեսման մեթոդ.

Այս մեթոդի էությունը կայանում է նրանում, որ
գիտենալով որոշակի տվյալներ, այդ թվում՝ միջուկային
զենքի հզորությունը, կիրառման կոորդինատները, այդ
կոորդինատում 3-ից 5կմ բարձրության վրա գործող քամիների
ուղղությունը և արագությունը, հասուն տեղեկագրերի և
սպայական քանոնների միջոցով քարտեզների վրա

էլիպսաձև գծապատկերվում է ռադիոակտիվ վարակված գոտիները՝ ըստ վարակվածության աստիճանի (31):

2.2.2. Քիմիական զենք

Քիմիական զենքն իրենից ներկայացնում է մարտական թունավոր նյութեր և դրանց կիրառման միջոցներ՝ ռումբեր, հրթիռներ, հրետանային արկերի աերոզոլային զենեքատորներ (30): Նախատեսված է հակառակորդի կենդանի ուժը ոչնչացնելու համար:

Մարտական թունավոր նյութերի առանձնահատկությունները՝

- ազդեցության կարճ ժամանակահատվածում մարդկանց մոտ առաջացնում են զանգվածային կորուստներ,
- թունավոր նյութերը հեշտությամբ կարող են թափանցել ոչ հերմետիկ շենքեր,
- արտաքին միջավայրում ազդեցությունը բավականին երկար է,
- դժվար են հայտնաբերվում:

Օրգանիզմ ներթափանցելու ուղիներն են՝

- շնչառական ուղիները և լորձաթաղանթը,
- մաշկային ծածկույթը,
- աղեստամոքսային տրակտը (2):

Մարտական թունավոր նյութերը կարող են օգտագործվել հեղուկ, գազային, գազակաթիլային և պինդ (փոշի) վիճակում: Թունավորման երևույթները կարող են հանդես գալ ազդեցությունից անմիջապես հետո կամ որոշ ժամանակ անց: Այդ ժամանակահատվածը կոչվում է **գաղտնի շրջան**, որը կարող է տևել մի քանի րոպեից մինչև մի քանի ժամ: Որքան երկար է գաղտնի շրջանը, այնքան թեթև է թունավորումը:

Քիմիական զենքի մարտական հատկանիշներն են՝

- ծավալային ազդեցությունը,
- հակառակորդի բանակում խուճապ առաջացնելը,
- պաշտպանվելու համար հատուկ միջոցների կիրառման

անհրաժեշտությունը,

- ազդեցությունը միայն կենդանական և բուսական աշխարհի վրա (1):

Մարտական թունավոր նյութերի դասակարգումը

Մարտական թունավոր նյութերը կարելի է դասակարգել ըստ՝ մարդու օրգանիզմի վրա ունեցած ազդեցության, քիմիական հատկանիշների, տակտիկական, ստրատեգիական նպատակաուղղվածության, տեղանքում թույների ունեցած կայունության և այլն:

Քիմիական զենքի դասակարգումն ըստ մարդու վրա ունեցած ազդեցության բաժանվում են յոթ հիմնական խմբի (30):

1. Նյարդակաթվածահարույց՝ զարին, գոման, տաբուն, V^x գազեր: Ախտահարում է կենտրոնական նյարդային համակարգը: Տարբերվում է ախտահարման երեք աստիճան: **Թեթև՝** բիբերի նեղացում, տեսողության կտրուկ վատացում, ցավ ճակատային մասում, ընդհանուր թուլություն, սրտխառնոց, լորձարտադրություն, թքարտադրություն: **Միջին՝** սուր հևոց, լորձաթաղանթների կապտություն, հավասարակշռվածության խանգարումներ, դող, փորլուծություն: **Ծանր՝** ջղաձգություն, փրփուրի արտահոսք բերանից գիտակցության կորուստ, մաշկի և լորձաթաղանթների խիստ կապտություն (1):

2. Մաշկաթարախահարույց՝ իպրիտ, լուիզիտ:

Ախտահարում է մաշկը, աչքերը, շնչուղիները, թոքերը: Լուիզիտի ներգործությունից 2-4 ժամ հետո աչքերում զգացվում են ծակծկոցներ, թեթև այրոցի զգացողություն: Լորձաթաղանթները կարմրում են, այտուցվում: Առաջանում է լուսավախություն, ընդհանուր թուլություն, սրտխառնոց: Հետագայում մաշկի վրա դրսևորվում են բշտեր, որոնք կարող են վերածվել խոցերի: Իպրիտի ներգործության ժամանակ դրսևորվում է ջերմաստիճանի բարձրացում, քնկոտություն, ճնշվածություն, գլխապտույտ, փսխում, սրտխառնոց:

3. Ընդհանուր ներգործության՝

կապտաթթու, քլորցիան: Ախտահարում է հիմնականում սիրտ անոթային, շնչառական համակարգերը: Կապտաթթվի ախտահարման դեպքում դրսևորվում է դառը մետաղական համ, կոկորդի գրգռում, համի զգացողության անկում: Առաջանում է սրտխառնոց, գլխապտույտ, թուլություն, մաշկի վրա վարդագույն երանգավորում: Բիբերը լայնանում են, շնչառությունը, սրտի աշխատանքը խաթարվում է:

4. Հեղձուցիչ ազդեցության՝ ֆոզգեն, դիֆոզգեն:

Ախտահարում է շնչառական համակարգը: Բերանի խոռոչում զգացվում է թթու համ, կոկորդը սեղմվում է: Դրսևորվում է գլխապտույտ, շնչառության դժվարացում, մաշկի կապտություն, թոքերի այտուց:

5. Արցունքաբեր ազդեցության՝ քլորոպիկրին, քլորացետաֆենոն:

Ախտահարում է աչքերը և շնչուղիները: Աչքերում զգացվում են ծակոցներ, արցունքահոսություն, դրսևորվում է լուսավախություն, կոկորդի և կրծքի այրոցներ, հազ, հարբուխ:

6. Գրգռող ազդեցության՝ ադամսիտ, սի-էս նյութեր,

դիֆենիլցիանաբսին: Ախտահարում է շնչառական օրգանները, գրգռում է շնչառական ուղիները, առաջացնում է փռշտոց, հազ, փսխում, թքարտադրություն: Կարող են տեղի ունենալ շնչառական և հոգեկան խանգարումներ:

7. Հոգեքիմիական ազդեցության՝ լիզերգինային թթուներ, BZ նյութեր, դի էթիլամիդ:

Ախտահարում է կենտրոնական նյարդային համակարգը՝ մարդկանց մոտ առաջացնելով տարածության և ժամանակի զգացողության կորուստ:

Քիմիական զենքի դասակարգումն ըստ տեղանքում ունեցած կայունության.

- 1. կայուն՝** Իպրիտ, Լուիզիտ, V^x գազեր, պահպանվում են մի քանի ժամից մի քանի օր, երբեմն՝ շաբաթ (ձմռանը) (2),
- 2. անկայուն՝** Ֆոզգեն, Քլորցիան, պահպանվում են մի քանի տասնյակ րոպեներ (2), հիմնականում գազեր են և արագ գոլորշիացող հեղուկներ,

3. **ծխաստեղծ՝** կիրառվում են աներոգոլի ձևով, դրանցից են՝ ադամսիտը (ոչ կայուն), քլորացետաֆենոնը (կայուն) (2),

4. **քիմարային՝** առանձին տարողություններով երկու տարբեր գազեր են (Ջի-բի և Վի-էք նյութեր): Պայթման ժամանակ խառնվելով՝ ստացվում է նյարդակաթվածահարույց թունավոր գազ (2):

Քիմիական զենքի կիրառման նշանները.

Հակառակորդի թռչող ինքնաթիռի հետևից մուգ, արագ նստող և ցրվող շերտի հայտնվելը, ավիացիոն ռումբի պայթյունի վայրում ճերմակ կամ թեթևակի գունավորված ամպի առաջացումը հիմք է տալիս ենթադրելու, որ թշնամին օգտագործել է քիմիական զենք: Բացի վերոհիշյալից, թունավոր նյութի կաթիլները, փոշենման և գազակաթիլային գոյացությունները ակնառու ձևով նկատելի են մակերևութապատկերի, շինությունների պատերի, բուսականության և այլ առարկաների վրա:

Միավոր ծավալում թունավոր նյութի քանակությունը կոչվում է **կոնցենտրացիա**, չափման միավորներն են՝ մգ/լ, մգ/մ³, գ/մ³ և այլն: Թունավոր կոնցենտրացիան իր հերթին լինում է՝ շարքից հանող, միջին մահացու, բացարձակ մահացու: Այս չափաբաժինները կոչվում են տոկսադոզաներ: Միավոր մակերեսում թունավոր նյութի քանակությունը կոչվում է **վարակման խտություն (2):**

Քիմիական իրադրության գնահատում

Իրականացվում է **ակնադիտական և հետախուզման մեթոդների** կիրառմամբ:

Ակնադիտական մեթոդի էությունը կայանում է նրանում, որ գիտենալով մարտական թունավոր նյութի ֆիզիկական հատկանիշները՝ գույնը, համը, հոտը, կիրառման վիճակը և շրջակա միջավայրի, մարդկանց վրա ունեցած ազդեցությունը, եզրահանգում են նյութի տեսակի և կոնցենտրացիայի մոտավոր քանակի մասին տեղեկության: **Հետախուզական մեթոդը** հիմնված է քիմիական հետախուզության սարքերի միջոցով նյութի տեսակը և

կոնցենտրացիան որոշելու վրա:

**Քիմիական հետախուզության գորային սարքավորում
(BIPXP).**

Նախատեսված է որոշելու մարտական թունավոր նյութերի (զարին, գոման, իպրիտ, կապտաթթու և այլն) առկայությունը և կոնցենտրացիան օդում, տեղանքում, տեխնիկայի վրա: Աշխատանքի սկզբունքը հիմնված է ինդիկատորային մեթոդի վրա (2):

Պաշտպանությունը քիմիական զենքից.

- ՔՊ անհատական պաշտպանական միջոցների օգտագործում, խիստ վարակված գոտիներում մեկուսիչ հակազագերի կիրառում,
- ապաստարաններում պատսպարում,
- անտիդոտների (հակաթոյների՝ աֆին, տարին, ատրոպին և այլն) օգտագործում,
- վարակված տարածքներում ապազագեցման միջոցառումներ,
- մասնակի և ամբողջական սանիտարական մշակումներ,
- տարհանման միջոցառումներ,
- նախընտրելի վարքագծի դրսևորում քիմիական վարակման գոտիներում,
- հատուկ միջոցների բացակայության դեպքում՝ մարմնի բաց մասերի մշակում քլորակրի (CaOCl_2) 0.5 %-անոց լուծույթով, կամ կերակրի սոդայի (NHCO_3) 2 %-անոց լուծույթով,
- աղեստամոքսային ուղիներով վարակի ներթափանցման դեպքերում կատարել ստամոքսի լվացում խմելու սոդայի 2 %-անոց լուծույթով, որից հետո տալ 10 գրամ ատսորբենտ (ակտիվացրած ածուխ) լուծված 1 բաժակ ջրում,
- շնչարգելության դեպքերում կատարել արհեստական շնչառություն, սրտի մերսում:

Պատմական տվյալներ.

Առաջին անգամ որպես քիմիական զենք, օգտագործվել է քլորը, 1915 թ. ապրիլի 22-ին գերմանացիների կողմից անգլոֆրանսիական զորքերի դեմ հինգ կիլոմետրանոց

ռազմաճակատային գծով: Թունավորվել է 15 հազար զինվոր, որոնցից 5 հազարը մահացել է, իսկ 10 հազարը ստացել են տարբեր աստիճանի խոցվածություններ: Նույն թվականի մայիսի 31-ին գերմանացիները օգտագործել են քլորը ռուսական զորքերի դեմ, թունավորվել է 9 հազար զինվոր, որից 40 %-ը մահացել է: Դեկտեմբերին գերմանացիները օգտագործել են ֆոզգեն, դիֆոզգեն, քլորոպիկրին և դրանց խառնուրդներ: 1916 թ-ին օգտագործվել է կապտաթթու, 1917-ին՝ իպրիտ: 1914-1918 թթ-ին քիմիական զենքի կիրառումից մահացել է 1 400 000 մարդ: 1961-1971 թթ-ի ընթացքում ԱՄՆ-ն Վիետնամում քիմիական զենքից թունավորել են 2 000 000 մարդ, որոնցից մահացել է 250 000-ը: Քիմիական զենքի կիրառումը արգելվել է Ժնևյան պայմանագրով 1925 թ-ին, որին անդամակցել է նաև նախկին ԽՍՀՄ-ը: Սակայն մեկ անգամ չէ, որ այն խախտվել է մի շարք երկրների կողմից: 1936 թ-ին Իտալիան Հաբեշստանի դեմ կիրառել է իպրիտ, 1937-1943 թթ-ին ճապոնացիները չինացիների դեմ, II համաշխարհային պատերազմի ժամանակ գերմանացիները՝ համակենտրոնացման ճամբարներում, ամերիկացիները՝ Վետնամում, Սադամ Հուսեյնը՝ քրդերի դեմ և այլն:

2.2.3. Կենսաբանական զենք

Կենսաբանական զենք օգտագործել են դեռևս հին ժամանակներում: Կենսաբանական զենքի ամենաառաջին օգտագործումը գրանցված է մ.թ.ա. 6-րդ դարում ասորիների կողմից: Այն օգտագործվել է նաև ժանտախտի տարածման ժամանակաշրջանում: Ըստ որոշ տեղեկությունների՝ Ալեքսանդր Մակեդոնացին մահացել է հենց կենսաբանական զենքի օգտագործման պատճառով: Պատմությանը հայտնի են դեպքեր, երբ այս կամ այն վարակիչ հիվանդությունների բռնկման հետևանքով արձանագրվել են մարդկանց զանգվածային կորուստներ: Այս հանգամանքը օգտագործելով՝ ռազմական ոլորտի մասնագետները հակառակորդի կենդանի ուժը ոչնչացնելու նպատակով

ստեղծել են ժամանակակից կենսաբանական զենք: Հետագայում կիրառման տիրույթը ընդարձակվել է: Մարտական առաջադրանքից կախված՝ խոցման թիրախ կարող է հանդիսանալ նաև հակառակորդի գյուղատնտեսական կուլտուրաները, անասնազվաքանակը:

Կենսաբանական զենքը մի շարք սուր վարակիչ հիվանդությունների մանրէների, նրանց կողմից արտադրվող թույների և նրանց կիրառման միջոցների օգտագործումն է մարդկանց, կենդանիներին, գյուղատնտեսական կուլտուրաներին զանգվածային ոչնչացման ենթարկելու նպատակով (24): Որպես կենսաբանական զենք՝ կարող են օգտագործվել **ժանտախտի, խոլերայի, սիբիրախտի, բժավոր տիֆի, բրուցելոզի, բնական ծաղկի, դիզենտերիայի, տուլարեմիայի, խլնախտի, բոտուլիզմի և մի շարք այլ սուր վարակիչ հիվանդությունների հարուցիչներ (32):**

Հարուցիչները կարող են լինել բակտերիաներ, վիրուսներ, սնկեր, ռիկետսիաներ: **Բակտերիաները** առաջացնում են ժանտախտ, խոլերա, բրուցելոզ և այլն: **Վիրուսները** մանրագույն միկրոօրգանիզմներ են: Ի տարբերություն բակտերիաների վիրուսները աճում և բազմանում են միայն կենդանի հյուսվածքներում: Առաջացնում են սև ծաղիկ, դեղին տենդ: **Ռիկետսիաները** ձևով և չափերով մոտ են բակտերիաներին, բազմանում են պարզ բաժանումով: Ապրում են միայն իրենց խոցած օրգանի հյուսվածքներում: Առաջացնում են բժավոր տիֆ, տենդ: **Սնկերը** միաբջջիչ և բազմաբջջիչ օրգանիզմներ են: Լավ են տանում չորությունը, արևի լույսի և վարակազերծող նյութերի ազդեցությունը: Առաջացնում են կարդիոզ: **Տոքսինները** (թույները) որոշ մանրէների կենսագործունեության արդյունք են: Չորացրած վիճակում իրենց թունավորման հատկությունը պահպանում են մինչև մի քանի ամիս: Առանձնապես թունավոր է բոտուլիզմի տոքսինը, որը մարդու օրգանիզմում առաջացնում է ծանր խանգարումներ: Գյուղատնտեսական կենդանիների ախտահարման նպատակով կարող են

օգտագործվել մի քանի հիվանդությունների այնպիսի հարուցիչներ, որոնք վտանգ են ներկայացնում մարդու համար (սիբիրյան խոց, սապ, միելոիդոզ), նաև այնպիսի հիվանդությունների հարուցիչներ, որոնք ախտահարում են միայն կենդանիներին (դաբադ, խոշոր եղջերավոր անասունների ժանտախտ և այլն): Գյուղատնտեսական բույսերի ախտահարման նպատակով օգտագործվում են ժանտախտի, կարտոֆիլային փտախտի, բրնձի սնկային հիվանդության հարուցիչներ, նաև հերբիցիտներ և դեֆոլիանտներ, գյուղատնտեսական բույսերի վնասատուները (կոլորադյան բզեզ, մորեխ, գենսենյան ճանձ, մեքսիկական բակլային բզեզներ):

Կենսաբանական զենքի կիրառման ձևերը և միջոցները տարաբնույթ են: Կարող է ախտահարվել մթնոլորտի վերգետնյա շերտերը հեղուկ, գազակաթիլային և պինդ մանրէաբանական պատրաստուկներով (24): Կարող են տարածվել միջատների, կրծողների, տզերի, թռուցիկների, սննդամթերքի, հագուստի և այլ միջոցներով: Զենքի կիրառման միջոց կարող են հանդիսանալ նաև մանրէաբանական արկերը, հրթիռները, ավիացիան, ինչպես նաև դիվերսիան: Կենսաբանական զենք օգտագործվող մանրէն պետք է ունենա որոշակի յուրահատկություններ:

Կիրառվող մանրէի յուրահատկությունները՝

- հիվանդության փոխանցվելը կենցաղային ճանապարհով,
- հիվանդության քայքայիչ ազդեցությունը, արագ դրսևորվելը,
- հիվանդության ընթացքի ծանր և երկարատև լինելը,
- վարակված բոլոր օբյեկտները վարակման օջախ հանդիսանալը,
- մանրէի կայունությունը արտաքին միջավայրի նկատմամբ,
- հարուցչի խեղաթյուրված կլինիկական պատկերի դրսևորումը (24):

Կենսաբանական զենքի մարտական հատկանիշներն են.

- զանգվածային և տևական ազդեցությունը,

- ներգործության տարածքների արագ աճը,
- վարակի տարածման աննկատելիությունը (ինկուբացիայի գաղտնի շրջան),
- հայտնաբերման դժվարությունը,
- պայքարի համար կիրառվող հատուկ միջոցառումների անհրաժեշտությունը:

Կիրառման նշաններն են.

- ռազմամթերքի կիրառման ժամանակ խուլ պայթյունի, ծխի թեթև ամպի գոյացումը,
- հողի, բուսածածկույթի, առարկաների վրա անձանոթ փոշենման նյութերի, հեղուկ կաթիլների առկայությունը,
- տեղանքում միջատների, կրծողների զանգվածային կուտակումները,
- մարդկանց, կենդանիների զանգվածային հիվանդությունների դրսևորումները (1):

Կենսաբանական զենքի արդյունավետությունը պայմանավորված է՝ հարուցչի քիչ բաժնեչափով, ցուցանշման դժվարությամբ, գործողության ընտրողականությամբ, ուժեղ հոգեբանական ներգործությամբ, գորքերի և բնակչության կենսաբանական պաշտպանության բարդությամբ, մեծ տարածքների վրա կիրառման ծածուկությամբ և կիրառման հետևանքների վերացման դժվարությամբ:

Կենսաբանական վարակման գոտին բնութագրվում է՝

- կենսաբանական վարակման միջոցների տեսակով,
- վտանգավորության աստիճանով,
- ախտահարված տարածքների չափերով,
- վարակված գոտում տնտեսական օբյեկտների առկայությամբ և բնակչության խտությամբ:

Վարակման գոտու չափերը կախված են ՝

- զինամթերքի տեսակից և հզորությունից
- կենսաբանական միջոցների օգտագործման եղանակից,
- օդերևութաբանական պայմաններից:

Կենսաբանական ախտահարման օջախի (ԿԱՕ) բնութագիրը

Այն տարածքը (քաղաք, բնակավայր, օբյեկտ. և այլն), որի սահմաններում կենսաբանական զենքի օգտագործման հետևանքով ծագել են մարդկանց, կենդանիների, բույսերի զանգվածային հիվանդություններ, կոչվում է **կենսաբանական ախտահարման օջախ** : Օջախի սահմաններն են այն քաղաքների, բնակավայրերի, տնտեսական օբյեկտների ադմինիստրատիվ սահմանները, ներգրավված այն բնակավայրերը, որոնք կապված են նրա հետ միևնույն տնտեսական և փոխադրամիջոցային կապերով:

Կենսաբանական ախտահարման օջախը բնութագրվում է օգտագործված կենսաբանական միջոցի տեսակով, ախտահարված մարդկանց, կենդանիների և բույսերի քանակով, հիվանդության հարուցիչների ախտահարող հատկությունների պահպանման երկարատևությամբ:

ԿԱՕ-ը ի տարբերություն բնական ճանապարհով առաջացած համաճարակային օջախների, ունի հետևյալ առաձևահատկությունները՝

- փոխանցման մեխանիզմների բազմատեսակ լինելը,
- համաճարակի բուռն սկիզբը,
- մարդկանց համար արտաքին միջավայրի գործոնների (ջուր, մթերք, շրջակա առարկաների և այլն) առավել վտանգավոր լինելը:

ԿԱՕ-ում սանիտարական կորուստների կառուցվածքը և բնութագիրը

Սանիտարական կորուստները ԿԱՕ-ում առաջանում են ինչպես մանրէային ռեցեպտուրաների օրգանիզմի վրա անմիջական ազդեցության, այնպես էլ վարակիչ հիվանդությունների համաճարակների հետագա տարածման հետևանքով: Կենսաբանական զենքի օգտագործման հետևանքով առաջանում են **առաջնային ախտահարման կորուստներ**՝ անմիջականորեն զենքի օգտագործման

տարածքում և երկրորդային ախտահարման կորուստներ՝ վարակի տարածման երկրորդային գոտում:

Առաջնային ախտահարման կորուստները՝ հիվանդ մարդկանց այն թիվն է, որոնք վարակվել են կենսաբանական միջոցներով ջրի, օդի, սննդամթերքի, արտաքին միջավայրում հակառակորդի կողմից օգտագործված հարուցիչների խայթման հետևանքով:

Երկրորդային սանիտարական կորուստները՝ այն մարդկանց թիվն է, որոնք վարակվել են հիվանդ մարդկանցից:

Առաջնային սանիտարական կորուստների տևողությունը 1-3 օր է, ծավալները և կառուցվածքը մեծ մասամբ կախված է հակառակորդի կողմից օգտագործված կենսաբանական միջոցների տեսակից, բնակչության ընկալունակության վիճակից, անհատական պաշտպանման միջոցներով ապահովվածությունից, անհետաձգելի կանխարգելման միջոցների ժամանակին կիրառումից:

Երկրորդային սանիտարական կորուստների մեծությունը որոշվում է առաջնային կորուստների քանակով, վարակի փոխանցման մեխանիզմով, նաև ռեժիմային, սանիտարահիգիենիկ, համաճարակային բուժկանխարգելիչ միջոցառումների ժամանակին կիրառմամբ ուղղված ԿԱՕ-ի մեկուսացմանը և վերացմանը: Սանիտարական կորուստները կարող են կազմել 25–50 %:

Պաշտպանությունը՝

- վարակման օջախի սահմանների որոշում և մեկուսացում,
- վարակված օբյեկտների հայտնաբերում և մեկուսացում,
- տարածքների, օբյեկտների ախտահանում, սանիտարական մշակումներ,
- անհատական պաշտպանական միջոցների օգտագործում,
- կանխարգելիչ պատվաստումների իրականացում,
- վարակագրերի նյութերի օգտագործում,
- պայքար վարակը տարածող կրծողների (դերատիզացիա), միջատների (դեզինսեկցիա) դեմ,

- կարանտինային այլ միջոցառումների իրականացում (ռեժիմային, վարչական, տնտեսական, սանիտարահիգիենիկ, բուժկանխարգելիչ հակահամաճարակային համալիր միջոցառումներ՝ ուղղված վարակման օջախի մեկուսացմանը, վերացմանը):

Կարանտին միջոցառումները նախատեսում են.

- վարակված գոտու շրջափակում զինված ջոկատների միջոցով,
- օջախից որևէ առարկայի, սննդամթեքի դուրսբերման արգելում, առանց նախնական վարակագրեծման և հատուկ թույլտվության,
- մարդկանց, կենդանիների ելքի, մուտքի արգելում,
- տրանսպորտային միջոցների ելքի, մուտքի վերահսկում,
- մեկուսարանների, դիտարանների ծավալում,
- վարակվածների հետ շփված անձանց ժամանակավոր մեկուսացում,
- բնակչության միմյանց հետ շփման սահմանափակում,
- հակահամաճարակային ռեժիմի սահմանում և այլն:

Վարքագծի կանոններ վարակման օջախում՝

- անձնական հիգիենայի խիստ պահպանում,
- սննդի պատրաստման և պահպանման սանիտարական և տեխնոլոգիական կանոնների պահպանում,
- սննդի և ջրի ջերմային մշակում,
- կենցաղային շփումների սահմանափակում,
- զանգվածային միջոցառումներին մասնակցության սահմանափակում,
- ռեժիմային միջոցառումներով պայմանավորված՝ հրահանգների ճշգրիտ կատարում:

Ըստ որոշ տվյալների՝ կենսաբանական զենք կարող են ունենալ 14 երկիր, այդ թվում՝ Ռուսաստան, Իրաք, ԱՄՆ, Մեծ Բրիտանիա, Չինաստան, Եգիպտոս, Իրան, Սիրիա, Իսրայել, Լիբիա, Կորեա, Ֆրանսիա, Կանադա և Թայվան: Դրանցից 5-ը՝ ԱՄՆ-ը, Ռուսաստանը, Ֆրանսիան, Մեծ Բրիտանիան ու Կանադան պաշտոնապես հայտարարել են,

որ ունեցել են կենսաբանական զենքի մշակման նախագծեր: Չնայած դրան՝ բազմաթիվ երկրներ ընդունել են կենսաբանական զենքի չօգտագործման կոնվենցիան: Այն ընդունվել է 1972 թ-ին, և սկսել է գործել 1975 թ-ից: 1975 թ-ին օրենքով հաստատվել է կենսաբանական և թունահարույց զենքերի մշակման, արտադրության և պաշարների կուտակման արգելման ու դրանց ոչնչացման մասին (1972թ.) կոնվենցիան: Հարկ է նշել, որ Հայաստանը միացել է ԱՄՆ-ի պաշտպանության դեպարտամենտի «Պաթոլոգիական նյութերի արտադրության տարածումը և կենսաբանական զենքի փորձարկումը կանխելու վերաբերյալ», համաձայնագրին: Հայաստանի հետ մեկտեղ՝ նմանատիպ համաձայնագրեր ԱՄՆ-ը ստորագրել է նաև Ռուսաստանի, Վրաստանի և Ուկրաինայի հետ:

2.2.3.1. Վարակիչ հիվանդությունների հակիրճ բնութագիրը Ժանտախտ

Ցուլիկաձև բակտերիաներ են, հայտնաբերվել է 1894 թ-ին: Պահպանվում է հողում՝ 2 ամիս, ջրում՝ 1 ամիս, կաթում՝ 3 ամիս, սննդամթերքում՝ մի քանի շաբաթ, իսկ դիակներում՝ մի քանի ամսից մինչև 1 տարի: Շատ զգայուն է չոր միջավայրի, բարձր ջերմաստիճանի, ախտահանիչ նյութերի (ոչնչացնում է սպիրտը 5 րոպեում, քլորակրի 10-20 %-անոց լուծույթը՝ 15 րոպեում և այլն) նկատմամբ: Ոչնչանում է 50°C ջերմաստիճանի տակ 1 ժամում, 100°C-ի դեպքում՝ անմիջապես: Ժանտախտով հիվանդանում են կրծողները, երբեմն՝ կատուները, ուղտերը, ավանակները և այլն: Վարակը փոխանցվում է հիվանդ կենդանիների հետ շփումից կամ դրանց վրա գտնվող լվերի կծելուց: Հիվանդ մարդու մոտ հարուցիչները արտանետվում են միջավայր խորխի, կղկղանքի, մեզի, թարախի հետ: Հիվանդության գաղտնի շրջանը տևում է 2-ից 10 օր: Տարբերակվում է ժանտախտի գեղձային, թոքային, մաշկային, աղիքային և սեպտիկ ձևեր: Գեղձայինի դեպքում վարակը փոխանցվում է

օրգանիզմ լորձաթաղանթի, մաշկի միջոցով և ավշային ուղիներով և զետեղվում մոտակա գեղձի մեջ: Ջերմությունը բարձրանում է 39-40C°, դրսևորվում է գլխացավ, թուլություն, գեղձերը ուռչում են, դառնում ցավոտ:

4-րդ, 5-րդ օրերին հիվանդի վիճակը կտրուկ վատանում է, նա սկսում է զառանցել, կորցնում է գիտակցությունը: Գեղձային ձևը կարող է առաջացնել թոքային ժանտախտ, որը առավել վտանգավոր է շրջապատի համար: Գեղձերի ուժեղ բորբոքման պարագայում նրանք կարող են պատռվել՝ առաջացնելով խոցեր: Մահացությունը կազմում է 60 % (24):

Սիբիրախտ

Ենթադրվում է, որ «սիբիրախտ» կամ «սիբիրյան խոց» անունը ստացել է 1864 -1886 թթ -ին Սիբիրում բռնկված համաճարակի ժամանակ: Հարուցիչը հայտնաբերվել է 1876 թ-ին Ռոբերտ Կոխի կողմից: Մանրէն արտաքին միջավայրում առաջացնում է կայուն ձևեր՝ սպորներ, որոնք կարող են պահպանվել ամիսներով ու տարիներով: Համեմատաբար կայուն է ախտահանիչների նկատմամբ: Սիբիրախտով հիվանդանում են խոշոր եղջերավոր անասունները, ոչխարները, ձիերը, շները, կատուները և այլն: Մանրէն տարածվում է հիմնականում կենդանիների արտաթորանքի միջոցով: Մարդկանց շրջանում ռիսկային են համարվում հովիվները, անասնապահները, կաշեգործները: Գաղտնի շրջանը տևում է մի քանի ժամից մինչև 7 օր: Կախված հարուցիչի օրգանիզմ մուտք գործման ուղուց՝ տարբերակվում է սիբիրախտի մաշկային, աղիքային, թոքային ձևեր: Առավել տարածված է մաշկային ձևը: Մանրէն մուտք է գործում մաշկի ամբողջականության խախտման դեպքում: Մանրէի ներթափանցման տեղում առաջանում է կարմիր բիծ, որը վերածվում է բշտիկի, ապա՝ գորշ պղնձագույն կեղևով խոցի: Հատուկ է անցավությունը և ուժեղ քորի զգացումը (24):

Խոլերա

Հարուցիչը հայտնաբերել է Ռոբերտ Կոխը 1888 թ-ին:

Արտաքին միջավայրում արագ ոչնչանում է չոր և բարձր ջերմաստիճանի պայմաններում, իսկ խոնավ և ցուրտ պայմանները նպաստում են մանրէի կայունության բարձրացմանը: Այն կարող է պահպանվել հիվանդի սպիտակեղենում 200 օր, կաթի, մսի մեջ՝ 1 ամիս, ջրում ամիսներով: Հիվանդության տարածմանը նպաստում են ճանճերը: Մարդկանց վարակման միակ օջախը խոլերայով վարակված մարդն է: Վարակը ներթափանցում է աղեստամոքսային ճանապարհով, գաղտնի շրջանը տևում է մի քանի ժամից մինչև 5 օր: Հիվանդությունը սկսվում է լուծով, որովայնի ցավերով, փսխումներով, որի հետևանքով օրգանիզմը ջրազրկվում է: Մարմնի ջերմաստիճանը իջնում է 34-35°C, ձայնը նվազում է, աչքերը փոս են ընկնում, մաշկը չոր է և կապտավուն: Հիվանդը սաստիկ նիհարում է, տառապում է ծարավից, ձեռքերի և ոտքերի ցավոտ ցնցումներից: Մահացության դեպքերը բավականին շատ են (24):

Բժավոր տիֆ

Վարակման հիմնական օջախը հիվանդ մարդն է: Մանրէն գտնվում է արյան մեջ, այն փոխանցվում է ոջիլների միջոցով: Գաղտնի շրջանը տևում է 12-ից 21 օր: Հիվանդի մոտ դրսևորվում է գլխացավ, թուլություն, անքնություն, ջերմաստիճանը հասնում է 39-40°C, մաշկի վրա, բացառությամբ դեմքի և դաստակների, առաջանում է կարմիր ցան (երբեմն ցանը կարող է բացակայել) (24):

Բրուցելյոզ

Հարուցիչը հայտնաբերվել է 1886 թ-ին՝ Դավիթ Բրյուսի կողմից Մալթա կղզում: Հիվանդանում են մարդիկ և կենդանիները: Արտաքին միջավայրում պահպանվում է երկար, կաթի մեջ՝ 60-70 օր, յուղի մեջ՝ 25 օր, պանրի մեջ՝ 20-60 օր, գոմաղբում՝ ամիսներով: Անկայուն է բարձր ջերմաստիճանի, ախտահանիչ նյութերի նկատմամբ: Մարդիկ վարակվում են հիվանդ կենդանու կաթնամթերքը, միսը օգտագործելուց կամ վնասված մաշկի, լորձաթաղանթի

միջոցով, հիվանդի հետ շփվելուց: Գաղտնի շրջանը տևում է 14–21 օր: Հիվանդության ժամանակ դրսևորվում են հետևյալ ախտանշանները՝ մարմնի թուլություն, առատ քրտնարտադրություն, ջերմաստիճանի բարձրացում, անքնություն, հոդերի, մկանների և գլխի ցավ, լյարդի, փայծաղի մեծացում և այլն (24):

Տուլարեմիա

Հարուցիչը հայտնաբերվել է 1911 թ-ին՝ Տուլյարե լճի ափին (Ամերիկա): Մանրէն կայուն է ցրտի, խոնավության նկատմամբ: Կաթի, մսի մեջ կենսունակ է 3 ամիս, հացահատիկներում՝ 130 օր: Անկայուն է արևի ճառագայթների, բարձր ջերմաստիճանի, ախտանիշների նկատմամբ: Հիվանդության հիմնական աղբյուրը հիվանդ կրծողներն են: Կարող են հիվանդանալ նաև կատուները, ոչխարները, խոզերը և այլն: Վարակը կարող է փոխանցվել վնասված մաշկի, լորձաթաղանթի, շնչուղիների, աղեստամոքսային տրակտի, արյուն ծծող միջատների կծելու միջոցով: Գաղտնի շրջանը տևում է սովորաբար 3-7 օր, երբեմն՝ 21 օր: Հիվանդությունը սկսվում է ուժեղ դողով, ոտքերի և մեջքի մկանների սուր ցավով, ջերմությամբ (38–39⁰ C): Առաջ է գալիս փսխումներ, ուժեղ քրտնարտադրություն, մարմնի ընդհանուր թուլություն, ցան: Մի քանի օր հետո դրսևորվում է հազ, մաշկի չորություն, աչքերի բորբոքում: Տարբերվում է հիվանդության գեղձային, թոքային, աղիքային ձևեր (24):

ԳԼՈՒԽ 3. ԱՀԱԲԵԿՉՈՒԹՅՈՒՆ

Մեկնաբանվող հարցեր՝

1. ահաբեկչությունը՝ որպես հասարակական անվտանգության դեմ ուղղված հանցագործություն և իրական սպառնալիք ազգային անվտանգությանը,
2. ահաբեկչության հակիրճ բնութագիրը, նպատակը, ծնող գործոնները, ահաբեկչական հանցավոր կազմավորումներ,

3. ՀՀ օրենքը և Միավորված ազգերի կազմակերպության կոչերը ահաբեկչության դեմ պայքարի մասին,
4. պայթուցիկ նյութերի առկայության նշանները,
վարվելակերպը պայթուցիկ նյութերի հայտնաբերման դեպքում, վարքագիծը պատանդի կարգավիճակում:

Ուսուցման նպատակը՝

1. ներկայացնել ահաբեկչությունը՝ որպես ազգային անվտանգությանը սպառնացող իրական գործոն,
2. ունկնդիրներին ներկայացնել պայթուցիկ նյութերի հայտնաբերման դեպքում և պատանդի կարգավիճակում նախընտրելի վարքագծի դրսևորման կարգը:

Ուսումնական արդյունք՝

1. ներկայացնել ահաբեկչությունը՝ որպես հասարակական անվտանգության դեմ ուղղված հանցագործություն:

Կատարման չափանիշներ՝

1. ճիշտ է ներկայացնում ահաբեկչության նպատակները, գործողությունների բնույթը, ծնող պատճառները,
2. տիրապետում է վաքագծի կանոններին պայթուցիկ նյութեր հայտնաբերելիս, ինչպես նաև պատանդի կարգավիճակում գտնվելիս:

Հանցավորության մեջ տեղի ունեցող որակական փոփոխություններն անհանգստացնում են աշխարհի բոլոր երկրներին: Այսօր ազգային անվտանգության իրական սպառնալիքներից ամենավտանգավորը, թերևս ահաբեկչությունն է, որը խալիլում է երկրի հասարակական անվտանգության և պետականության հիմքերը: Ահաբեկչությունն արդի քաղաքական կյանքում դառնում է երկարաժամկետ ազդեցության գործոն, այն ուղղված է հասարակական անվտանգության դեմ և իրական սպառնալիք է ազգային անվտանգությանը: Սովետական մեծ հանրագիտարանում տեռոր և ահաբեկչություն տերմինները բացատրվում են որպես հոմանիշներ: **Ահաբեկչությունը լատիներեն տեռոր (/Terror/՝ վախ, սարսափ) բառից է ծագել:**

Սակայն գոյություն ունեն նաև այլ մեկնաբանություններ: Ահաբեկչության պոետիկա գրքի հեղինակ Դ. Մ. Ֆելդմանը առաջարկում է հետևյալ կերպ առանձնացնել տեռոր և ահաբեկչություն տերմինները.

Տեռոր - հասարակությանը վախի միջոցով կառավարելու ձև, որտեղ պետք է հաշվի առնել այն հանգամանքը, որ հասարակությունը ընդունում է այս տիպի կառավարումը որպես օրինական (ստալինյան տեռորը ԽՍՀՄ-ում): Տեռորը սովորաբար իրականացվում է պետական իշխանության կողմից: Այն բռնություն է ուղղված ավելի թույլ քաղաքական ուժերի, ընդիմության, հասարակության դեմ դաժան ռեպրեսիաների միջոցով:

Ահաբեկչությունը - բռնություն ուղղված ընդիմության կողմից դեպի իշխանությունը. քաղաքական գործիչների, պաշտոնյաների, ժողովրդի սպանություն, առևանգումներ սկսած մարդկանցից միջև ինքնաթիռների, բանկերի թալանում և այլ բռնի գործողություններ: Այստեղ շեշտը դրվում է ոչ թե ռազմավարական հաղթանակի վրա այլ հոգեբանական ազդեցության վրա: Ահաբեկչական գործողության նպատակը հասարակության ապակայունացումն է, պետությանը վախի մեջ պահելը, վախի մթնոլորտի ստեղծումը և այլն: Ահաբեկիչների նպատակը կայանում է հետևյալում՝ ահաբեկչական գործողությունների միջոցով հասարակությանը հասցնել այն կետին, որպեսզի նրանք կառավարությունից պահանջեն ինչ որ կերպ իրենց պաշտպանել կամ իշխանությունը հանձնել այլ ուժի:

3.1. Ահաբեկչության պատմությունը

Ահաբեկչության ակունքները գնում են դեռևս հին դարեր: Քաղաքակրթության գոյության անբողջ ընթացքում ահաբեկչական պայքարի միջոցները օգտագործվել են առանձին անձանց, քաղաքական և կրոնական խմբավորումների, հանցավոր խմբավորումների և պետությունների կողմից: Պետական ահաբեկչության

օրինակ կարող է ծառայել Հին Հռոմի կայսր **Սուլլաի** գործողությունները ուղղված իր քաղաքական հակառակորդների դեմ:

Պատմության մեջ առաջին ահաբեկչական խմբավորումներից է եղել **սիքյարին**, որ ստեղծվել է Պաղեստինում 66-73 թթ-ին. մ.թ.ա.: Այն հրեական քաղաքական խմբավորում էր, նրանց գլխավոր նպատակը Հռոմից ազատություն ձեռք բերելն էր: Հաջորդ հայտնի ահաբեկչական խմբավորումը Մուսուլմանական **Շիա իսլամիստական խմբավորումն** էր: Ավելի հայտնի **Ասասինների** աղանդ (Ասասի - վրիժառու): Այն գործել է 11-13 դարերում: Նրանց գաղափարախոսության հիմքում ընկած էր հետևյալ միտքը՝ մեռնել հանուն գաղափարի, տանջվել հանուն մնացած ճիշտ հավատ ունեցողների համար: Նրանց հիմնական զենքը դաշույնն էր: Սպանությունը նրանց համար կրոնական մեծ ծեսի էր նման: Իրականացնում էին քաղաքական սպանություններ: Աղանդը ոչնչացվեց 1256թ-ին Մոնղոլների կողմից, սակայն հիմա շատ ահաբեկիչներ օգտագործում են նրանց գաղափարները: Պետական մակարդակի վրա դրված ահաբեկչության օրինակ կարող է հանդիսանալ միջնադարյան **ինկվիզիցյաները**: Ֆրանսիական հեղափոխության ժամանակ **Յակոբյանների բռնատիրությունը**: Զանգվածային բնույթ կրող արյունալի ահաբեկչության միջոցով Յակոբյանների իշխանության գալը ցույց տվեց հասարակությանը վախի միջոցով ղեկավարելու մոդելը: Իսկ Մարատի սպանությունը պատասխանն էր պետական ահաբեկչության: Այսպիսով ձևավորվեց ահաբեկչության տակտիկան:

19-րդ դարում ահաբեկչությունը կարևոր գործոն էր դարձել երկրների քաղաքական կյանքում: Այն ուներ երեք տարբեր ուղղություններ:

1. Ազգային ազատագրական պայքարը տարբեր

երկրներում - ծայրահեղ ազգայնամոլական խմբավորումները (հայեր, մակեդոնացիներ, իտալացիներ),

որոնց նպատակը պայքարն էր ազգային ինքնավարության և երկրի անկախության համար:

2. Անարխո-ահաբեկչություն - ուղղված հոգևորականների, քաղաքական լիդերների, նախագահների և ղեկավարների դեմ:

3. Հեղափախական ահաբեկչություն Ռուսաստանում (պայքարը բռնապետության դեմ):

3.2. Ահաբեկչության աճի պատճառները, 20-21 դդ. ահաբեկչության առանձնահատկությունները

21-րդ դարում ահաբեկչությունը իր մեջ սկսել է ներառել նոր առանձնահատկություններ, ստացել է ավելի բարդ ձևեր: Ժամանակակից ահաբեկչությունը ունի հետևյալ առանձնահատկությունները:

1. Եթե նախկինում ահաբեկչությունը կրում էր վառ գաղափարախոսական ուղղություն, ապա այժմ առանձնանում է իր ամորֆությամբ: Այն է արտահայտվում է հակաարևմտյան, հակաամերիկյան և այլ մոտիվներով: Աշխարհում ձևավորվել են ձախ խմբավորումներ, ազգայնամոլական, կրոնաէքստրիմիստական նեոֆաշիստական, կառույցներ: Ձախ էքստրիմիստների համար նպատակ է համարվում պայքարը ընդեմ համաշխարհային իմպերիալիզմի դեմ, իսլամիստական ահաբեկչության դեմ, սատանիստական չարիքի վերացման և այդ պայքարը ուղղված է դեպի արևմտյան հասարակությունը և ԱՄՆ:

2. Ահաբեկչությունը հիմա դարձել է ավելի դաժան: Եթե նախկինում ահաբեկչության օբյեկտ էին հանդիսանում կառավարության անդամները, զինվորականները, հասարակական գործիչները, ապա Նացիստների իշխանության, ստալինիզմի բռնապետության ժամանակ Ռուսաստանում, Հերոսիմա և Նագասակի քաղաքների ռմբակոծությունից հետո, վերաբերմունքը դեպ մարդու կյանքը ամբողջովին փոխվեց: Ահաբեկչության գոհ էին

դառնում անմեղ մարդի, երեխաները, ովքեր ոչ մի էական կապ չունենին երկրում տեղի ունեցող գործընթացներից:

3. Ահաբեկչության աճը կազմակերպված հանցագործության հետ: Պետական մարմինների պայքարը թմրաբիզնեսի, զենքի ոչ լեգալ առք ու վաճառքի դեմ հանգեցրեց նրան, որ այդ գործով զբաղվող կազմակերպությունները ավելի էին ձգտում իշխանության մեջ իրենց մարդը ունենալ իսկ մյուս կողմից նրանք սկսեցին ավելի օգտագործել ահաբեկչական մեթոդները իրենց խնդիրները լուծելու համար:

4. Գիտա-տեխնիկական առաջընթացը, հանգեցրեց նրան, որ ահաբեկիչները սկսեցին ավելի ինտենսիվ օգտագործել նոր զինատեսակներ:

5. Տեղի է ունենում ահաբեկչության տրանսֆորմացիայի անցումը տակտիկական ձևերից դեպի ստրատեգիականի: Մեծ ահաբեկչական խմբավորումները վերափոխվում են բազմաֆունկցիոնալ ոչ օրինական զինված խմբավորումների: Օրինակ կարելի է բերել Բասսանի խմբի տեղափոխումը Արցախյան պատերազմի դաշտ, և այսպես կոչված Իսլամական հանրապետության մեջ ընդգրկված խմբավորումները: Այդ հզոր ահաբեկչական խմբավորումները ունեն իրենց կազմակերպությունները տարբեր երկրներում:

6. Առաջ են եկել ահաբեկչության նոր մեթոդներ և միջոցներ: Էլեկտրոնային և համակարգչային ահաբեկչությունն անվանումով:

Ահաբեկչություններն իրականացվում են հասարակական անվտանգության խախտման, ազգաբնակչության ահաբեկման, կամ իշխանությունների կողմից ընդունած որոշումների վրա ներագդելու, կամ ահաբեկիչների շահերի բավարարման, կամ պետական, քաղաքական, հասարակական գործչի կյանքի նկատմամբ ոտնձգություն կատարելու նպատակով: Նշենք նաև, որ ահաբեկչության սահմանման առումով միջազգային պրակտիկայում գոյություն ունեն որոշակի տարաձայնություններ:

Տարբերվում են ահաբեկչության հետևյալ ձևերը.

1. անհատական,
2. խմբային կամ պետական մակարդակով,
3. միջազգային:

Ահաբեկչության գործողությունները հիմնականում զուգորդվում են ռազմամթերքի կիրառմամբ կամ կիրառման սպառնալիքով: Այդ գործողությունները կարող են լինել պայթյուններ, հրկիզումներ, առևանգումներ կամ դրանց իրականացման սպառնալիքներ (1): **Ահաբեկչություն է դիտվում նաև նշված գործողությունների կատարման սպառնալիքը՝ գրավոր, բանավոր, անանուն կամ այլ ձևերով արտահայտված:** **Ահաբեկչություն ծնող պատճառները կարող են լինել քաղաքական, կրոնական, ազգային, տնտեսական և այլ բնույթի:** Այն հիմնականում կիրառվում է իբրև քաղաքական պայքարի միջոց՝ քաղաքական բռնության հատուկ ձև, բնութագրվում է դաժանությամբ և հստակ նպատակաուղղվածությամբ, ինչպես նաև թվացյալ արդյունավետությամբ (1):

Ահաբեկչության գործողությունները ներառում են՝

- զինված խմբավորումների, հանցավոր կազմակերպությունների ձևավորում.
- ահաբեկիչների հավաքագրում, զինում և օգտագործում.
- ֆինանսական և այլ աջակցությունների իրականացում.
- գործողությունների պլանավորում, նախապատրաստում, կազմակերպում և իրականացում:

Այսօր ահաբեկչությունը ընդգրկում է ոչ միայն միայնակ գործող դիվերսանտներ, կամիկադե մարդասպաններ, մարդկանց առևանգողներ, այլ ունակ է մղելու դիվերսիոն ահաբեկչական պատերազմ (1): Առանձնապես տագնապ է հարուցում միջազգային ահաբեկչության ակտիվացումը՝ կապված **թմրաբիզնեսի, փողերի լվացման, թրաֆիքինգի ընդլայնման հետ, որոնք և հանդիսանում են ահաբեկչությունը ֆինանսավորող հիմնական աղբյուրները:** Անհանգստացնող է նաև ահաբեկչական

կազմակերպությունների կողմից զանգվածային ոչնչացման գեների հավանական ձեռքբերումը (1): Ահաբեկչության դեմ պայքարը դարձել է մարդկության անվտանգության ապահովման գերագույն խնդիրներից մեկը: ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեան բազմիցս (1987 թ. դեկտեմբերի 7, 1989 թ. դեկտեմբերի 4, 1991 թ. դեկտեմբերի 9) անդրադառնալով հիմնախնդրին, առաջնահերթ է համարել ահաբեկչության կանխարգելումը և ուղերձ է հղել աշխարհի պետություններին, ՄԱԿ-ի մարմիններին՝ **օժանդակելու միջազգային ահաբեկչության դեմ պայքարին**: Ընդունվել է «Ահաբեկչության արգելման մասին» Եվրոպական կոնվենցիան, որը ՀՀ-ի համար ուժի մեջ է մտել 2004 թ-ի հունիսի 24-ից: Հաշվի առնելով ահաբեկչության վտանգավորությունը և մի երկրից այլ երկրի տարածք դուրս գալու հավանականությունը՝ **2005 թ-ի մարտի 22-ին ՀՀ-ը ընդունել է օրենք «Ահաբեկչության դեմ պայքարի մասին»**: ՀՀ Քրեական օրենսգրքում ահաբեկչությունը որպես հանցագործություն, ընդգրկված է «Հասարակական անվտանգության դեմ ուղղված հանցագործությունների» զլխում: Ահաբեկչական գործողությունը սահմանում է **ՀՀ քրեական օրենսգրքի 217 հոդվածը (12)**, համաձայն որի.

Ահաբեկչությունը

1. Ահաբեկչությունը՝ այնպիսի գործողությունը, որն ուղղված է քաղաքացիական անձի կամ զինված ընդհարման ժամանակ ռազմական գործողություններին ակտիվորեն չմասնակցող անձի մահվանը կամ ծանր մարմնական վնասվածք պատճառելուն կամ դրանց սպառնալիքին այն դեպքում, երբ այդպիսի գործողության նպատակն իր բնույթով կամ էությամբ բնակչությանն ահաբեկելը կամ պետական մարմնի կամ միջազգային կազմակերպության կամ պաշտոնատար անձի որոշման ընդունման կամ գործողության կատարման կամ դրանցից ձեռնպահ մնալու վրա ներգործելն է, ինչպես նաև ՀՀ միջազգային պայմանագրերով նախատեսված ահաբեկչություն

համարվող ցանկացած այլ գործողությունը, բացառությամբ ՀՀ քրեական օրենսգրքի 218-րդ հոդվածով նախատեսված արարքների՝ պատժվում է ազատազրկմամբ՝ հինգից տասը տարի ժամկետով՝ գույքի բռնագրավմամբ կամ առանց դրա:

2. Նույն արարքը, որը կատարվել է՝

1) մի խումբ անձանց կողմից նախնական

համաձայնությամբ, պատժվում է ազատազրկմամբ՝ ութից տասներկու տարի ժամկետով՝ գույքի բռնագրավմամբ կամ առանց դրա:

2) (կետն ուժը կորցրել է 21. 06. 14 ՀՕ-114-Ն)

3. Սույն հոդվածի առաջին կամ երկրորդ մասով նախատեսված արարքները, որոնք

1) կատարվել են կազմակերպված խմբի կողմից,

2) (կետն ուժը կորցրել է 21. 06. 14 ՀՕ-114-Ն)

3) անզգուշությամբ առաջացրել են մարդու մահ կամ այլ ծանր հետևանքներ՝ պատժվում է ազատազրկմամբ՝ տասից տասնհինգ տարի ժամկետով՝ գույքի բռնագրավմամբ կամ առանց դրա:

4. Ահաբեկչության նախապատրաստությանը մասնակցած անձն ազատվում է քրեական պատասխանատվությունից, եթե նա, իշխանության մարմիններին ժամանակին հայտնելով կամ այլ միջոցներով, նպաստել է ահաբեկչության խափանմանը, և եթե նրա գործողությունները այլ հանցակազմ չեն պարունակում:

Ահաբեկչությունը որպես հանցագործության տեսակ ունի իրեն առանձնահատուկ արտահայտման ձևերը: Նշենք դրանցից մի քանիսը՝

1. բռնություն և դաժանություն:

Ահաբեկչություն իրականացնելու ընթացքում այն կարող է արտահայտվել տարբեր կերպ: Բռնությունը իրականացվում է ոչ միայն ֆիզիկական այլև հոգեբանական բնույթի,

2. ահաբեկչության ակտի նպատակը ոչ միայն բուն գործողության իրականացումն է (սպանություն, պայթյուն) այլ նաև վախի մթնոլորտի ստեղծումը, սարսափի

տարածումը հասարակության մեջ,

3. հրապարակայնություն, հանցագործության

պրոպագանդա: Եթե սովորական հանցագործները գործողություն իրականացնելու ժամանակ աշխատում են մնալ անճանաչելի, ապա ահաբեկիչները ճիշտ հակառակը օգտագործում են բոլոր հնարավոր միջոցները իրենց մասին հայտնելու (օրինակ՝ բրիտանացի լիազորողների գլխատման ցուցադրումը Youtube - վիդեոպորտալի միջոցով),

4. ահաբեկչության բնորոշ գծերից է այն, որ ակտը

իրականացվում է մարդկանց դեմ սակայն դրա նպատակը մեկ այլ մարդկանց ստիպելն է **գնալ զինամեքի:** Ահաբեկչության ժամանակ զոհվում են անմեղ մարդի որոնք կապ չունեն ոչ քաղաքական իշխանության, ոչ կրոնական ոչ էլ այլ կազմակերպությունների հետ:

Ահաբեկչությունը ունի իր ուրույն նպատակները և իր առջև դրված կոնկրետ խնդիրները: Ահաբեկիչների նպատակները մեծ հաշվով կարելի է առանձնացնել հետևյալ տեսակների **քաղաքական և տնտեսական:**

1. Տնտեսական ահաբեկչություն:

Բիզնեսում մրցակիցների դուրս մղումը որոշակի տարածքից որոշակի միջոցառումներ իրականացնելու շնորհիվ (պայթյուններ, շենքերի այրումներ, մրցակիցների ծեծ և այլն):

2. Քաղաքական ահաբեկչության:

Նպատակները բաժանվում են երկու մասի՝ **ներքաղաքական և արտաքին քաղաքականության** տեսքով: **Արտաքինի քաղաքականության** նպատակը կայանում է հետևյալում՝

1. պետությունների միջև հարաբերությունների

փոփոխությունը,

2. պայքարը ամերիկյան գալթոդականության դեմ և այլն:

Ներքաղական ահաբեկչության հիմնական նպատակը կայանում է իշխանության գավթումը: Պայքար է գնում ատելի ազգերի և ազգային փոքրամասնությունների դեմ և այլն: Մեր օրերում ահաբեկչությունը վերածվել է համաշխարհային աղետի: 2011 թ-ի սեպտեմբերի 11-ին

ահաբեկիչների հափշտակած քաղաքացիական 4 ինքնաթիռներից 2-ը մխրճվեցին Նյու Յորքի միջազգային օդանավակայանի կենտրոնի երկնաքերերի մեջ և հիմնովին ավերեցին, մի քանի ժամում զոհվեցին ավելի քան 3 հազար խաղաղ քաղաքացիներ: Ահաբեկչության պատասխանատու, **«Ալ Բաիդա»** կազմակերպության ղեկավար **Ուսամա բեն Լադենը** հայտարարվեց աշխարհի համար մեկ ահաբեկիչը: 2005թ-ի սեպտեմբերի 1-ին ահաբեկիչները գրավեցին ՌԴ Հյուսիսային Օսիայի **Բեսլան** քաղաքի դպրոցներից մեկը և պատանդ վերցրին 1128 երեխաների ու մեծահասակների: Սեպտեմբերի 3-ին սկսված փոխհրաձգության և դրան հաջորդած գրոհի ժամանակ զոհվեց 329 մարդ, այդ թվում 159 երեխա: Ահաբեկիչների գրոհը ղեկավարող **Շամիլ Բասաևը** հետագայում համախոհների հետ ոչնչացվեց: Ահաբեկչության յուրահատուկ տեսակ էր 1999 թ-ի հոկտեմբերի 27-ի ՀՀ ԱԺ վրա կատարված հարձակումը, որի հետևանքով զոհվեցին ՀՀ ԱԺ նախագահ **Կարեն Դեմիրճյանը**, վարչապետ **Վազգեն Սարգսյանը** և թվով 6 այլ պետական գործիչներ:

Ոչ միայն ահաբեկչական կազմավորումները, այլ նաև անհատ ահաբեկիչները կարող են իրենց ուրույն դերը խաղալ երկրների միջև հարաբերություններում, ինչպես օրինակ՝ երբ 2008 թ. հոկտեմբերի վերջին գերմանական հետախուզությունը տագնապ հայտարարեց **Էրիկ Բրայնինգերի** հայրենիք հնարավոր վերադարձի կապակցությամբ: Գերմանիայում ծնված 21-ամյա Բրայնինգերը, որն իսլամ էր ընդունել և մարզումներ անցել Պակիստանում և Աֆղանստանում, հայտարարել էր, որ պատրաստվում է ինքնասպան-ահաբեկիչ դառնալ: Իսլամական ջիհադի միության կայքում նա հանդես էր եկել Գերմանիայում սպասվող ահաբեկչական գործողությունների նախազգուշացումով, քանի դեռ Բեռլինը դուրս չի բերել զորքերը Իրաքից և Աֆղանստանից: **Մեծ տարածում ունեն հատկապես այն հանցավոր**

կազմավորումները, որոնք ձևավորվել են ըստ էթնիկական կամ կրոնական պատկանելության և իրականացնում են հանցավոր կայուն գործունեություն:

Ներկայացնենք դրանցից առավել խոշորները:

«Ալ-Քաիդա»

Կազմակերպվել է 1988 թ-ին Աֆղանստանում: Այն իրենից ներկայացնում է արմատական համազգային ահաբեկչական իսլամիստական խմբավորում: Նրա սկզբնական նպատակը ԽՍՀՄ-ի կողմից Աֆղանստանում սանձազերծած ագրեսիաի դեմ պայքարն էր: Կազմակերպության մեջ նախկինում միավորված էին այդ պայքարի համար Աֆղանստանում հավաքագրված կամավորներ: Հետագայում այն տարածվեց ողջ իսլամական աշխարհում և ապակենտրոն ենթակառույցներ ստեղծվեց ողջ երկրագնդում, որոնցից էին, մասնավորապես, Խատաբի, Շամիլ Բասաևի չեչնական խմբավորումները, ծայրահեղական այլ խմբավորումներ: Առաջին մեծամասշտաբ գործողությունն իրականացվել է 1998 թ-ին Աֆրիկայում (Քենիա, Տանզանիա), երբ պայթեցվեցին ամերիկյան դեսպանատները, և հարյուրավոր զոհեր եղան: Ալ-Քաիդան ձգտում է փուլ առ փուլ հասնել համաշխարհային իշխանության (1): Այն ունի մասնաճյուղեր աշխարհի 35 երկրներում, այդ թվում ԱՄՆ-ում և Կանադայում: Ակտիվ մասնակիցների թիվը կազմում է 3-5 հազար մարդ (1): Ալ-Քաիդան ստանում է աջակցություն հակաամերիկյան և հակաիսրայելական քաղաքականություն վարող իսլամական պետությունների կառավարությունների կողմից:

«Թալիբանին»

Թալիբան արաբերեն թալիբ՝ ուսանող, պահանջատեր, բռնի արմատից է ձևավորվել: Թալիբները գործում են Աֆղանստանում, իրենցից ներկայացնում են կուսակցություն, ունեն կոնկրետ նպատակներ և մշակված քաղաքականություն:

«Մուջահեդին է հալկ»

Հայտնի է նաև Իրանի դիմադրության ազգային խորհուրդ անվամբ: Ստեղծվել է 1964թ-ին, գաղափարական հիմքում մարքսիզմն է՝ «համեմված» իսլամով: Ունի հազարավոր համակիրներ Իրանում և ամբողջ աշխարհում: Խմբավորման մեծ կենտրոններից է Իրաքի հյուսիսում գտնվող Աշրաֆ քաղաքը, որտեղ կենտրոնացված են մի քանի հազար զինյալներ:

«Իռլանդական հանրապետական բանակ (IRA)»:

Ձևավորվել է 1913 թ-ին իռլանդացի կամավորների նախաձեռնությամբ: Կաթոլիկ ռազմականացված խմբավորում է (1): Պայքարի նպատակը Հյուսիսային Իռլանդիան Բրիտանիայի տիրապետությունից ազատագրելն է: Պայքարի հիմնական թիրախը բրիտանական զինվորականությունն է: 1984թ-ի նմահավորված կատարեցին Մեծ Բրիտանիայի վարչապետ Մարգրետ Թետչերի դեմ, որը սակայն, ձախաղվեց: 2005 թ-ի հուլիսին Իռլանդիայի հանրապետական բանակը հայտարարեց զենքը վայր դնելու, Անգլիայի դեմ պատերազմը դադարեցնելու մասին:

«Օլսթերի ազատագրման մարտիկներ» (UFF)

Ամենախոշոր բողոքական խմբավորումն է, որ հանդես է գալիս Հյուսիսային Իռլանդիան Մեծ Բրիտանիայի կազմում պահպանելու օգտին: Օլսթերում ավելի քան 25-ամյա պատերազմի ընթացքում ռազմականացված խմբավորումների մարտիկների զոհ է դարձել 3 հազարից ավելի մարդ (1):

«Բասկերի ահաբեկչական կազմակերպություն» (ETA)

Կազմավորումն իրեն ներկայացնում է, որպես ազգի ազատագրողներ (1): Լրիվ անվանումը «Բասկերի երկրի ազատության մարտիկների ասոցացիա»: Բսպանիայում պայքարում է բասկերի ինքնորոշման համար: Հիմնվել է 1959 թ-ին, գործում է Բսպանիայում և Ֆրանսիայում, բայց հիմնական թիրախը Բսպանիան է: ETA-ն իր հաշվին ունի

800-ից ավելի գոհ (1):

2010 թ-ի սեպտեմբերին կազմակերպությունը հայտարարել է հրադադարի և զինված պայքարը դադարացնելու մասին: Հայտարարության մեջ ասված էր, որ այսուհետ նպատակներին հասնելու համար պիտի գործածվեն խաղաղ միջոցներ: Սակայն վերջին տասնամյակում ETA-ն երեք անգամ այդպիսի հրադադար է հայտարարել և բոլոր դեպքերում խախտել այն:

«Քրդական աշխատավորական կուսակցություն»

Ստեղծվել է 1974 թ-ին Աբդուլա Օջալանի կողմից: Բավական արդյունավետ պայքար է մղում թուրքական պետության դեմ: Կուսակցության նպատակն է թուրքիայում քրդական պետության ստեղծումն է: Գաղափարական հիմքում մարքսիզմն է: Ունի տասնյակ հազարավոր անդամներ: Նյութական ու տեխնիկական աջակցություն է ստանում Իրանից:

«Ուղղակի գործողություն» (AD):

Ֆրանսիական «Ուղղակի գործողություն» ահաբեկչական կազմակերպությունը, փաստորեն իրենից ներկայացնում է «Կորսիկայի ազգային ազատագրության ճակատը»: Խմբավորումը հանդես է գալիս հակաիմպերիալիստական դիրքերից (1): Գաղափարական հիմքում մարքսիզմն է:

Ռուսաստան

Չեչենների ռազմականացված խմբավորումներ:

Չեչենիան ներկայացնող «Գեներալ Դուդանի բանակը» քիչ բանով է տարբերվում իսկական, լավ վարժված բանակից: Կազմվել է 1991 թ-ին, խորհրդային գեներալ Ջոհար Դուդանի կողմից: Նպատակը Ռուսաստանից անկախ Իչկերիայի Հանրապետության ստեղծումն է: Ֆինանսական մեծ աջակցություն է ստանում Աֆղանստանից, արաբական արևելքից, իսլամական ծայրահեղական այլ խմբավորումներից:

Մերձավոր Արևելք

«Դիմադրության իսլամական շարժում» (ՀԱՄԱՄ):

Ծայրահեղական կազմակերպություն է, գործում է Գազայի սեկտորում (1): Ունի ռազմական թև: Համաս շարժման նպատակն է ազատագրել Պաղեստինը ծովից մինչև Հորդանան: Իսրայելական գերիշխանությունից ազատագրված Պաղեստինը դարձնել արաբական և մուսուլմանական աշխարհի կենտրոն: Համասը կոչ է անում ֆիզիկապես ոչնչացնել հրեաներին և հետապնդել քրիստոնյաներին: Շարժման մասնաճյուղերը բացված են ԱՄՆ-ում, Եվրոպայում, Սաուդյան Արաբիայում, Հորդանանում, Սիրիայում, Լիբանանում և Իրանում: Ֆինանսավորումը ստացվում է Իրանի, Հորդանանի, Սուդանի և Պարսից ծոցի երկրների կողմից: Վերջին տարիների ամենաադմկոտ ահաբեկություններն են՝ Երուսաղեմում, Աշկերոնում, Թել Ավիվում պայթյունները:

«Հեզբոլլահ»:

Իսլամական շիաների արմատական շարժում է Լիբանանում (1): Արաբերենից թարգմանած նշանակում է «Ալլահի կուսակցություն», ստեղծվել է 1982 թ-ին, երբ Իսրայելը ներխուժեց Լիբանան: Այն իրենից ներկայացնում է արմատական համախոհ շիաների խմբակցություն, որը կիսում է իրանական հեղափոխության առաջնորդ Այաթոլլա Հոմեյնի միտքը, առաջին հերթին անհանդուրժողականությունը «Սիոնիզմի» (Իսրայելի) նկատմամբ և զինված հակամարտություն վերջինիս դեմ մինչև «Պաղեստինի լիարժեք ազատումը»:

Եգիպտոս

«Մուսուլման-եղբայրներ»

Հասարակական իսլամական կազմակերպություն, հիմնվել է 1928 թ-ին (1):

Թուրքիա

«Գորշ գայլեր»

Աջ հոսանքի կազմակերպություն, որը «փառաբանվել» է 1974-1980 թթ-ին կոմունիստամետ և արհմիութենական գործիչների, գիտնականների ու լրագրողների դեմ ծավալած

ահաբեկությամբ: Այդ ժամանակամիջոցում «Գորշ գայլերը» ոչնչացրել են գրեթե 700 քաղաքական հակառակորդներ: Կազմակերպությունն ունի մոտ 30 հազար անդամ և 80 մասնաճյուղ (1):

3.3. Վարքագծի կանոնները պատանդի կարգավիճակում

Անձին պատանդ վերցնելը կամ պատանդ պահելը, որը կատարվել է պատանին ազատելու պայմանով պետությանը, կազմակերպությանը, քաղաքացուն որևէ գործողություն կատարելուն կամ որևէ գործողություն կատարելուց ձեռնպահ մնալու հարկադրելուն (12):

1. Խուճապի չմատնվել, բանակցությունները վարել հանգիստ, հանդարտ ձայնով:

1. Չցուցաբերել ակնհայտ արհամարհանք և ատելություն առևանգողների նկատմամբ, կատարել նրանց բոլոր պահանջները, չցուցաբերել ակտիվ դիմադրություն:

2. Վարքագծով ուշադրություն չգրավել:

3. Պատրաստ լինել հոգեբանական և ֆիզիկական դժվարություններին, հայտարարել ձեր վատառողջ վիճակի մասին:

4. Պահպանել ֆիզիկական և մտավոր ակտիվություն, չհրաժարվել սննդից:

5. Չդիմել փախուստի, եթե վստահ չեք, որ փորձը կհաջողվի:

6. Փորձել ճշտել ձեր գտնվելու վայրը:

7. Ուշադրություն դարձնել ահաբեկիչների քանակին, զինվածությանը, արտաքին տեսքին, բարբառին, խոսակցության թեմային:

8. Աշխատել հեռու գտնվել ահաբեկիչներից, դռներից և պատուհաններից հատկապես, երբ անվտանգության ուժերը գրոհում են: Պառկել հատակին ձեռքերը ծալած ծոծրակին,

9. Ազատվելուց հետո չշտապել հայտարարություններ կատարել (1):

Պայթուցիկ նյութերի առկայության նշաններ՝

- առարկայի անսովոր դիրքը.

- առարկայից ձայն գալը.
- առարկայի վրա հաղորդալարի, ալեհավաքի, հոսանքի աղբյուրի առկայությունը.
- առանց հսկողության թողնված առարկան.
- յուրահատուկ հոտի առկայությունը (1):

Ի՞նչ անել պայթուցիկ սարքի հայտնաբերման դեպքում.

- անմիջապես ահազանգել 911 ծառայություն,
- չմոտենալ և թույլ չտալ մոտենալու ուրիշներին հայտնաբերած առարկային,
- չօգտվել հեռախոսից, ռադիոկապից, տեղաշարժվել անվտանգ տարածք,
- սպասել հատուկ ծառայություններին և ցույց տալ առարկայի տեղը (1);

ԳԼՈՒԽ 4. ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ

ԿԱԶՄՍԱԿԵՐՊՈՒՄԸ ԱՐՏԱԿԱՐԳ

ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐՈՒՄ ԵՎ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԺԱՄԱՆԱԿ

Մեկնաբանվող հարցեր՝

1. բնակչության պատասպարում ՔՊ պաշտպանական կառույցներում,
2. բնակչության պաշտպանություն ՔՊ անհատական պաշտպանական միջոցներով,
3. բնակչության տարհանում վտանգավոր տարածքներից,
3. բնակչության պաշտպանության այլ գործառնություններ:

Ուսուցման նպատակը՝

1. ուսանողներին հակիրճ իրազեկել՝ ԱԻ-ում և պատերազմի ժամանակ պետության կողմից իրականացվող պաշտպանական միջոցառումներին,
2. ունկնդիրների մոտ ձևավորել՝
 - ՔՊ անհատական պաշտպանական միջոցներից օգտվելու հմտություններ,
 - ՔՊ միջոցառումների ժամանակ նախընտրելի վարքագծի դրսևորման կարողություններ,

- տարհանվողի և պատսպարվողի պարտականությունների վերաբերյալ իմացություններ:

Ուսումնական արդյունք

1. բներկայացնել ԱԻ-ի և պատերազմի ժամանակ բնակչության պաշտպանության հիմնական ձևերը և սկզբունքները,
2. ներկայացնել բնակչության պաշտպանությանը ուղղված միջոցառումների ժամանակ՝
 - քաղաքացիների պարտականությունները,
 - նախընտրելի վարքագծի դրսևորման ձևերը:

Կատարման չափանիշներ

1. կարողանում է ներկայացնել բնակչության պաշտպանության հիմնական ձևերը,
2. կարողանում է հակիրճ բնութագրել ՔՊ պաշտպանական կառույցները, նրանց պաշտպանական հատկանիշները,
3. տիրապետում է պատսպարվողի պարտականություններին, պատսպարվելուց անմիջապես առաջ և վարքագծի կանոններին պատսպարման ժամանակ,
4. կարողանում է ներկայացնել ՔՊ անհատական պաշտպանական միջոցների տեսակները, պաշտպանական հատկանիշները, տիրապետում է նրանց կիրառման հմտություններին,
5. կարողանում է հակիրճ ներկայացնել տարհանման սկզբունքները, իրականացման ձևերը և ժամկետները, տիրապետում է տարհանվողի պարտականություններին:

Բնակչության պաշտպանության հիմնական ձևերը և սկզբունքները

Բնակչության	պաշտպանության	ձևերն	են՝
տարահանումը,	պատսպարումը	և	անհատական պաշտպանությունը: (5):

Բնակչության պաշտպանության սկզբունքներն են՝

ա) մարդկանց կյանքի և առողջության ապահովման գերակայությունը.

բ) ԱԻ-ում բնակչության պաշտպանության հարցերի հրապարակայնությունը.

գ) ԱԻ-ի հետևանքների նվազեցմանը, ինչպես նաև այդ հետևանքներից բնակչության պաշտպանության համակարգի բոլոր մակարդակների բնականոն գործունեության ապահովման միջոցառումների կազմակերպմանը համալիր մոտեցում ցուցաբերելը.

դ) տեխնածին վթարների, աղետների առաջացումը բացառելու նպատակով միայն ստուգված և տեխնիկական անվտանգությունն ապահովող, փորձարկված միջոցառումների իրականացումը (5):

Բնակչության տարհանումը, պատսպարումը և անհատական պաշտպանությունը կազմակերպում ու իրականացնում են պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինները, ձեռնարկությունները, հիմնարկները, կազմակերպությունները՝ ՀՀ կառավարության սահմանած կարգով :

4.1. Բնակչության պատսպարում ՔՊ պաշտպանական կառույցներում

Բնակչության պատսպարումն իրականացվում է վերգետնյա, ստորգետնյա հատուկ շինություններում (ապաստարաններ, հակաճառագայթային թաքստոցներ, ապաստարանաճեղքեր) և բնակելի ֆոնդի տարածքներում (5): Բնակչության պատսպարումն իրականացվում է բնակչությանը պաշտպանության մասին տեղեկացման համապատասխան ազդանշաններով: Պատսպարման ժամանակամիջոցը որոշում է ՀՀ կառավարության լիազորած մարմինը:

ՔՊ պաշտպանական կառույցները ինժեներատեխնիկական բարդ կառույցներ են, որոնք նախատեսված են պաշտպանելու բնակչությանը զանգվածային ոչնչացման զենքերից, ինչպես նաև բնաջնջման սովորական միջոցների կիրառման կամ

տեխնածին հնարավոր վթարների հետևանքով առաջացած խոցող գործոններից:

Ըստ պաշտպանական հատկանիշների՝ ՔՊ պաշտպանական կառույցները բաժանվում են երեք հիմնական խմբերի՝

- ապաստարաններ.
- հակաճառագայթային թաքստոցներ.
- ապաստարանաճեղքեր (խրամատներ) (1):

Ապաստարաններ

Ապաստարանները կառուցվում են որպես առանձին շինություն կամ շենքերի նկուղային հարկերում: Բաղկացած են հիմնական և օժանդակ կառույցներից (1): Հիմնական կառույցները նախատեսված են մարդկանց անմիջական պատսպարման, իսկ օժանդակ կառույցները՝ կենսական պայմանները ապահովելու համար: Օժանդակ կառույցների բաղկացուցիչ մասերից են նախամուտքերը, վթարային ելքերը, սննդամթերքի պահեստանոցը, ֆիլտրաօդափոխիչ համակարգի խցիկը, ջեռուցման և սանիտարական հանգույցները, դիզելային մարտկոցների և արտեզյան հորանցքի համար նախատեսված շինությունները, կառավարման կետը և այլն: Ապաստարաններում տեղակայված են նաև պաշտպանական անհատական, հետախուզական, հրդեհաշիջման, վթարավերականգնողական, լուսավորման միջոցներ, վառելիքաէներգետիկ պաշարներ և այլն: Ապաստարանի օդամատակարարումը կատարվում է մաքուր օդափոխանակության (դրսի օդը գտիչի միջոցով գտվում է ռադիոակտիվ փոշուց, թունավոր նյութերից և բակտերիալ միջոցներից) կամ լրիվ մեկուսացման ռեժիմով (ներսի օդը վերականգնվում է ապաստարանում առկա թթվածնի պաշարների հաշվին): Լրիվ մեկուսացման ռեժիմը կիրառվում է, երբ հնարավոր չէ օգտագործել դրսի խիստ աղտոտված օդը, որի մեջ զանգվածային հրդեհների հետևանքով նվազում է թթվածնի պարունակությունը և

կտրուկ ավելանում ածխաթթու գազի քանակությունը: Հնարավոր միջուկային պայթյունի դեպքում, որպես կանոն, ֆիլտրաօդափոխանակությունը անջատվում է 30 – 40 րոպե (լիակատար մեկուսացման ռեժիմ): Ապաստարանները ապահովում են լիարժեք մեկուսացումը արտաքին աշխարհից և ամենահուսալիին են պաշտպանում մարդկանց զանգվածային ոչնչացման զենքի խոցող բոլոր գործոններից (32): Ըստ տարողության լինում են փոքր՝ 200-ից 500, միջին՝ 500-ից 2000, և խոշոր՝ 2000 և ավելի մարդկանց համար նախատեսված: Ապաստարանի զետեղարանի բարձրությունը պետք է լինի առնվազն 2.2 մ (2): Մեկ մարդու համար նախատեսվում է 0.5 մ² տարածություն և 1.5 մ³ ծավալ, թեթև լվացվելու և խմելու համար 3.5-4 լ ջուր, 12-16 լ տեխնիկական ջուր: Ապաստարանի գործընթացները կանոնակարգում է պարետը՝ յոթ անձից բաղկացած օղակով:

Հակաճառագայթային թաքստոցներ

Որպես այդպիսին կարող են ծառայել մետրոպոլիտենի կայարանները, խորացված շինությունները, բանջարանոցի պահեստները, ստորգետնյա անցումները, ինչպես նաև քարաշեն տների առաջին հարկերը: Նրանք կարող են պաշտպանել մարդկանց լուսային և ռադիոակտիվ ճառագայթներից, ներթափանցող ռադիացիայից, մասամբ բակտերիալ մանրէների և թունավոր նյութերի անմիջական ազդեցությունից, իսկ հատուկ կառուցվածքները նաև հարվածային ալիքից: Հակաճառագայթային թաքստոցի պաշտպանական հատկությունները որոշվում են ռադիացիայի չափաբաժինների թուլացման գործակիցով (2): Ռադիացիայի թուլացման գործակիցը կախված է շինության հիմքի և պատերի հաստությունից և խտությունից: Հայտնի է, որ 1մ բնահողի շերտը 200 անգամ նվազեցնում է ռադիացիայի մակարդակը: Մասնակի վերակառուցման միջոցով հնարավոր է զգալի բարձրացնել թաքստոցի պաշտպանական հատկանիշները. վերգետնյա հատվածները ծածկել բնահողով, ավազապարկերով, մեծացնել

մեկուսացումը, տեղակայել ֆիլտրաօդափոխիչ համակարգ և այլն: Օրինակ՝ քարաշեն մեկ հարկանի տան ներքնահարկի ռադիացիայի թուլացման գործակիցը հասնում է 20–30-ի, իսկ եթե հատակի վրա փովի բնահող, լուսամուտները ծածկվեն, հող կիտվի վերգետնյա պատերի, լուսամուտների վրա, ապա թուլացման գործակիցը կձգտի միջև 300-ի:

Ապաստարանաճեղքեր

Ապաստարանաճեղքերը կամ խրամատները լինում են բաց՝ առանց տանիքի, և փակ՝ տանիքով: Պաշտպանության պահիվ միջոցներ են, կիրառելի են թույլ ազդեցության գոտիներում և այն դեպքերում, երբ ապաստարանները և հակաճառագայթային թաքստոցները չեն բավարարում բնակչության պատսպարման համար:

Բաց ապաստարանաճեղքը 10 անգամ թուլացնում է ներթափանցող ռադիացիան, իսկ հարվածային ալիքից, լուսային ճառագայթից ազդեցությունը նվազեցնում են 1.5-2 անգամ: **Փակ ապաստարանաճեղքը** լուսային ճառագայթումից կապաշտպանի լիովին, իսկ ներթափանցող ռադիացիայի ազդեցության չափաբաժինը կնվազի մոտ 40 անգամ: Բացի վերոգրյալից՝ փակ ապաստարանաճեղքերը կապաշտպանեն մարդկանց մաշկը, հագուստը ախտածին նյութերի անմիջական ազդեցությունից, ինչպես նաև փլուզվող շինությունների բեկորներից:

Բնակչության գործողությունները և վարքի կանոնները ՔՊ

պաշտպանական կառույցներում պատսպարվելիս

ՔՊ պաշտպանական կառույցներում պատսպարվողները **պարտավոր են՝**

- իրենց հետ ունենալ պոլիէթիլենային պարկի մեջ փաթեթավորված երեք օրվա սննդամթերք (ցանկալի է պահածոյացված) և խմելու ջուր, առաջին անհրաժեշտության իրեր, անձը հաստատող փաստաթղթեր, անհատական պաշտպանական միջոցներ (27),
- պատրաստ լինել կրելու պաշտպանական կառույցում գտնվելու դժվարությունները,

- անհատական պաշտպանական միջոցները պահել պատրաստի վիճակում՝ անհապաղ օգտագործման համար,
- հսկողության տակ վերցնել երեխաների կողմից ՔՊ անհատական պաշտպանական միջոցների օգտագործումը,
- ակտիվորեն մասնակցել ՔՊ կառույցի հնարավոր վնասվածքների վերացման աշխատանքներին,
- ցուցաբերել առաջին օգնություն հնարավոր տուժածներին,
- պաշտպանական կառույցից դուրս գալ միայն դեկավարի ցուցումով:

Արգելվում է՝

- պաշտպանական կառույց բերել դյուրավառ և սուր հոտ արձակող նյութեր, խոշոր իրեր, տնային կենդանիներ,
- կատարել գործողություն, որը կարող է խուճապ առաջացնել,
- աղմկել, ծխել, վառել նավթե լամպ կամ մոմ, ինքնաշեն կանթեղ,
- չքայլել տարածքում առանց խիստ անհրաժեշտության,
- սննդի մնացորդները նետել չնախատեսված վայրում և այլն

(23):

Բնակչության պատասպարման կարգը

Բնակչության պատասպարումը իրականացվում է «Բնակչության պատասպարման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման համաձայն (28 սեպտեմբերի 2000 թվականի N 592): Ըստ այդ որոշման՝ պաշտպանական կառույցների համակարգը, որն ապաստարանների և թաքստոցների ամբողջություն է, կախված պաշտպանական կառույցների տեղակայման վայրից և նշանակությունից, ապահովում է բնակչության պատասպարումը՝

ա) ապաստարաններում՝

Երևան, Գյումրի, Վանաձոր, Հրազդան, Կապան քաղաքների կենսագործունեությունն ապահովող և պատերազմի ժամանակ իրենց գործունեությունը շարունակող կազմակերպություններում աշխատողներին և

ծառայողներին:

ՀՀ կառավարության կողմից սահմանված հատուկ կարևորության և քիմիական վտանգավոր օբյեկտների աշխատողներին ու ծառայողներին՝ անկախ նրանց տեղակայման վայրից,

բ) հակաճառագայթային թաքստոցներում՝ հայկական ատոմային էլեկտրակայանի (ՀԱԷԿ) 30 կիլոմետրանոց գոտում բնակվող բնակչությանը,

գ) նկուղային և այլ խորացված տարածքներում, մետրոպոլիտենում, հանքախորշերում, պատսպարման նպատակով նախատեսված շենքերի և շինությունների առաջին հարկերում, պարզագույն թաքստոցներում մնացած բնակչությանը: Խաղաղ ժամանակ պաշտպանական կառույցները, համաձայն քաղաքացիական պաշտպանության ինժեներատեխնիկական միջոցառումների նորմերի պահանջների, կարող են օգտագործվել տնտեսական նպատակներով, որի ժամանակ պետք է ապահովվի շինությունների և կառուցվածքների պահպանությունն ավերածությունից ու խոնավությունից, և պաշտպանական կառույցները պատսպարվողների ընդունման համար ժամանակին պատրաստ վիճակի բերել:

Պաշտպանական կառույցների օգտագործումը տնտեսական նպատակով (բացառությամբ մետրոպոլիտենի) թույլատրելի է պաշտպանական կառույցների ծավալի 40 %-ի չափով, և ազատման ժամանակը պետք է լինի ոչ ավել, քան 6 ժամ:

Պարզագույն թաքստոցները կառուցվում են ԱԻ-ում ու պատերազմի սպառնալիքի ժամանակահատվածում բնակչության այն մասի համար, որն ապահովված չէ պաշտպանական կառույցներով, որոնց շինարարության պլաններն ու ժամանակացույցերը վաղօրոք մշակվում են ԱԻ և ՔՊ մարմինների կողմից: Պարզագույն թաքստոցների կառուցման բոլոր աշխատանքները համապատասխանեցվում են արագ կառուցվող

շինությունների շինարարության, ինչպես նաև բնակչության տարհանման պլաններին:

Բնակչության կազմակերպված և ժամանակին պատասպարման համար պետական կառավարման տարածքային, տեղական ինքնակառավարման մարմինները, կազմակերպությունների ղեկավարներն ԱԻ և ՔՊ մարմինների հետ համատեղ անցկացնում են բնակչության, աշխատողների և ծառայողների պաշտպանական կառույցներին ամրագրման միջոցառումներ: Պաշտպանական կառույցների մուտքի վրա փակցնում են ցուցատախտակներ, իսկ դեպի պաշտպանական կառույցներ տանող շարժական երթուղիների վրա՝ ցուցանշաններ: **Պաշտպանական կառույցներում բնակչության պատասպարումը տեղի է ունենում քաղաքացիական պաշտպանության ազդանշաններով:**

Շշակի ընդհատվող հնչեցման դեպքում (**«Օդային տագնապ» ազդանշան**) բնակչությունն անմիջապես պատասպարվում է պաշտպանական կառույցներում:

Պետական կառավարման տարածքային, տեղական ինքնակառավարման մարմիններն ԱԻ և ՔՊ մարմինների հետ համատեղ կազմակերպում են բնակչության պատասպարման համալիր միջոցառումներ: **Պաշտպանական կառույցներում բնակչության պատասպարումն իրականացվում է նախապես մշակված և հաստատված ամրագրման պլանների համաձայն:** Աշխատանքային հերթափոխի աշխատողներն ու ծառայողներն օբյեկտների համապատասխան պաշտոնատար անձանց ղեկավարությամբ զբաղեցնում են պաշտպանական կառույցները՝ համաձայն օբյեկտի ՔՊ պետի կողմից նախապես մշակված պլանների: Հասարակական վայրերում գտնվող բնակչությունը պատասպարվում է ըստ գտնվելու վայրի՝ պաշտպանական կառույցներ օգտագործելով մետրոպոլիտենը, ստորգետնյա անցումները, շենքերի և այլ կառույցների առաջին հարկերը: Պաշտպանական

կառույցներով չապահովված բնակչությունը՝ մասնակցում է պարզագույն թաքստոցների կառուցմանը՝ հետագայում դրանցում պատասպարվելու նպատակով՝ համաձայն պետական կառավարման տարածքային և տեղական ինքնակառավարման մարմինների ղեկավարների կողմից հաստատված պլանի:

Պաշտպանական կառույցները բերվում են պատրաստականության՝ պատասպարվողների ընդունման համար ազդանշան տալու պահից սկսած 12 ժամվա ընթացքում, իսկ ՀԱԷԿ-ում և քիմիական վտանգավոր օբյեկտներում, որոնք գտնվում են մշտական պատրաստականության վիճակում՝ անմիջապես:

Պաշտպանական կառույցներում տեղավորվում են կառույցի պարետի (ավագի) ցուցումով՝ կազմակերպված և արագ: ՔՊ ազդանշանից հետո համապատասխան մարմինների կողմից նախօրոք նշված ժամանակն սպառվելուն պես պաշտպանական կառույցներում մարդկանց տեղավորումը դադարեցվում է, դռները փակվում են:

Տեղանքի պաշտպանական հատկանիշներ

Տեղանքի պաշտպանական հատկանիշները առավել արդյունավետ են դրսևորվում միջուկային զենքի խոցող գործոններից՝ հարվածային ալիքից, լուսային ճառագայթումից և ներթափանցող ռադիացիայից պաշտպանվելու համար: Այդ նպատակով անհրաժեշտ է գիտենալ տեղանքի պաշտպանական հատկությունները և հմտորեն օգտագործել դրանք: Պաշտպանության ամենաբարձր աստիճանը, այդ թվում նեյտրոնային զենքից, ապահովում են նեղ, խոր ձորերը, և նամանավանդ ընդհատակյա հանքափոր աշխատանքները: Սակայն և զառիթափ պատումները (ցանկացած բարձրության), թմբերը, ցածր աղյուսե ցանկապատերը զգալիորեն թուլացնում են միջուկային պայթյունի խոցող ազդեցությունը: Եթե տեղանքի ռելիեֆը ունի թույլ հատվող բնույթ, ապա կարելի է պաշտպանության համար օգտագործել նաև ոչ խորը փոսերը: Անտառային զանգվածները նույնպես թուլացնում

են միջուկային պայթյունի բոլոր խոցող ազդեցությունները: Նրանք իջեցնում են հարվածող ալիքի ազդեցությունը, նվազեցնում են ռադիոակտիվ վարակը, զգալիորեն թուլացնում լուսային ճառագայթումը: Սակայն պետք է հիշել, որ լուսային ճառագայթումը անտառում առաջացնում է հրդեհ: Այդ պատճառով պաշտպանության համար պետք է օգտագործել երիտասարդ անտառը, որն ամենաքիչն է ենթարկվում հրդեհի: Անտառում ապահով է պատսպարվել բացատներում և հատված մասերում, թփուտներում, իսկ եթե չկան այդպիսիները, պատսպարվել անտառի խորքում (32):

Միջուկային զենքից պաշտպանվելու ձևերը բաց տարածքում գտնվելիս

Բռնկման պահին անհրաժեշտ է փակել աչքերը, որպեսզի պաշտպանել այն լուսային ճառագայթահարումից, պառկել դեմքով ներքև՝ հարմարվելով տեղանքի ռելիեֆին՝ օգտագործելով ցածր աղյուսե կամ քարե ցանկապատերը, ջրատարերը, կոճղերը, թմբերը և այլն: Անհրաժեշտ է հիշել, որ շենքերի, շինությունների պատերի տակ պատսպարվել չի կարելի. նրանք կարող են փլվել: Այրվածքներից խուսափելու համար մարմնի բաց մասերը անհրաժեշտ է ծածկել որևէ գործվածքով, իսկ ձեռքերը թաքցնել մարմնի տակ:

Հարվածային ալիքը անցնելուն պես անհրաժեշտ է անմիջապես հագնել ՔՊ անհատական պաշտպանական միջոցներ: Եթե նրանք չեն լինի, հարկավոր է փակել բերանը և քիթը թաշկինակով կամ որևէ գործվածքով, թափ տալ հագուստը և կոշիկները նրանց վրա նստած փոշուց և արագ դուրս գալ անվտանգ տարածք (32):

4.2. Բնակչության պաշտպանություն ՔՊ անհատական պաշտպանական միջոցներով

Բնակչության անհատական պաշտպանությունը մարդկանց շնչառական օրգանները և մաշկը պաշտպանում է թունավոր գոլորշիների կաթիլներից, աերոզոլների ներգործությունից, ճառագայթային փոշիներից, ախտահարույց մանրէներից և

թունավոր նյութերի ազդեցությունից, ինչպես նաև ռադիոակտիվ ալֆա (α) ճառագայթների արտաքին ճառագայթահարումից: Անհատական պաշտպանության միջոցներով ապահովումն իրականացնում են պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինները, ձեռնարկությունները, հիմնարկները, կազմակերպությունները:

ՔՊ անհատական պաշտպանական միջոցներ

Ըստ օրգան համակարգերի պաշտպանական հատկանիշների՝ ՔՊ անհատական պաշտպանական միջոցները բաժանվում են 3 հիմնական խմբերի՝

- շնչառական օրգանների անհատական պաշտպանական միջոցներ,
- մաշկային ծածկույթի անհատական պաշտպանական միջոցներ,
- անհատական պաշտպանության բժշկական միջոցներ (32):

Շնչառական օրգանների անհատական պաշտպանական միջոցներ

Շնչառական օրգանների պաշտպանական միջոցներից են՝

- հակագազերը,
- շնչադիմակը (ռեսպերատոր),
- պարզագույն միջոցները՝ բամբակաթանգիվային

պարզագույն դիմակապը, փոշեզտիչ գործվածքային դիմակ և այլն:

Հակագազը նախատեսված է պաշտպանելու շնչառական օրգանները, դեմքը, աչքերը թունավոր նյութերից, ախտածին մանրէներից, ռադիոակտիվ տարրերի ներթափանցումից, ռադիոակտիվ ալֆա ճառագայթների արտաքին ճառագայթահարումից: Ըստ պաշտպանական գործառնության սկզբունքի՝ հակագազերը ստորաբաժանվում են զտող և մեկուսացնող տեսակների (25):

Մեկուսիչ հակագազ

Մեկուսիչ հակագազերից են թթվածնային մեկուսիչ հակագազը (ԹՄՀ, КИП) ԹՄՀ-8-ը, ԹՄՀ-5-ը, ԹՄՀ-7-ը,

մեկուսիչ հակազագ (ՄՀ, ИП), ՄՀ-4-ը, ՄՀ-5-ը, ՄՀ-45-ը, ՄՀ-46-ը, ՄՀ-6Մ-ը և այլն: Մեկուսիչ հակազագերում շնչառության համար անհրաժեշտ օդը գտնվում է սարքավորման մեջ թթվածնի ձևով (ԹՄՀ-ում) կամ թթվածին արտադրող նյութերի տեսքով (ՄՀ-ում): Վերջինը աշխատանքային վիճակի բերելուց հետո արտադրում է թթվածին: Մեկուսիչ հակազագը ապահովում է լիարժեք մեկուսացումը արտաքին միջավայրից (1): Համեմատաբար խիստ վարակված գոտիներում անհրաժեշտ է օգտագործել միայն մեկուսիչ հակազագեր: ՄՀ-5-ը հանդիսանում է վթարափրկարարական անհատական միջոց: Նախատեսված է նաև միջև յոթ մետր խորությամբ ջրում սուզված վիճակում փոքր ծավալի աշխատանքներ կատարելու համար: Հակազագով աշխատանքի ժամանակահատվածը մեծապես պայմանավորված է անձի ֆիզիկական ծանրաբեռնվածությունից: Մեկ լիցքավորման դեպքում շահագործման տևողությունը կազմում է՝

- ցամաքում միջին ծանրաբեռնվածության դեպքում՝ 75 րոպե,
- թեթև ծանրաբեռնվածության դեպքում՝ 200 րոպե,
- ջրում միջև 7 մ խորության պայմաններում թեթև ծանրաբեռնվածության դեպքում՝ 90 րոպե, հարաբերական հանգստի դեպքում՝ 120 րոպե (30):

Զտիչ հակազագ

Զտիչ հակազագը մարդու շնչառությունն ապահովում է ի հաշիվ արտաքին միջավայրի օդի, որը հակազագի գտիչի միջոցով մաքրվում է վնասակար խառնուրդների մեծ մասից: Անհրաժեշտ է գիտենալ, որ գտիչ հակազագերը չեն պաշտպանում ածխածնի օքսիդից: Ուստի ածխածնի օքսիդով վարակված մթնոլորտում գտնվելիս անհրաժեշտ է հակազագին միացնել հոպկալիտային փամփուշտ, որի պաշտպանիչ գործողությունը տևում է մոտավորապես երկու ժամ (25): Զտիչ հակազագը կազմված է գտիչից (հատուկ կլանիչներ, հակաձխային գտիչ), որը տեղակայված է մետաղյա թիթեղից պատրաստված տուփի մեջ, և ակնոցով

ռեզիներ դիմակից՝ ներշնչման և արտաշնչման կափույրներով: Դիմակը և գոտիքը իրար են միացված անմիջապես, կամ ծալքավոր խողովակի միջոցով: Հակազագր պահելու համար նախատեսված է պայուսակ: Զտիչ հակազագերից են քաղաքացիական, արդյունաբերական, ռազմական, մանկական հակազագերը: Քաղաքացիական հակազագերից (Ք Հ, ԴՊ) են՝ ՔՀ-5, ՔՀ-7, ՔՀ-4ու և այլն: Մանկական հակազագերից (ՄՀ, ԴՊ) են՝ ՄՀ-6 (բարձր տարիքի երեխաների համար), ՄՀ-6մ (1.5 տարեկան և բարձր տարիքի երեխաների համար), ՄՁՀ-7 (1.5-ից մինչև 14 տարեկանների համար) և այլն: Կախված օդի վարակվածության աստիճանից և անձի ֆիզիկական ծանրաբեռնվածությունից կարող է աշխատել մինչև 4-5 ժամ: Հակազագր հուսալիորեն պաշտպանում է լույս այն դեպքում, երբ ճիշտ է կատարված դիմակի ընտրությունը (25): Բնակչության շրջանում լայն կիրառում գտած ՔՀ-4ու հակազագրի դիմակները պատրաստվում են երեք չափսի, իսկ ՔՀ-5 հակազագ սաղավարտ - դիմակները՝ հինգ չափսի: Չափսերը նշված են դիմակի կզակային մասի վրա: Չափահաս մարդու դիմակի չափսը որոշելու համար անհրաժեշտ է չափել դեմքի բարձրությունը (տարածությունը քթարմատի առավել խորացման կետի և կզակի ամենաստորին կետի միջև) և աղյուսակ 1-ի օգնությամբ որոշել դիմակի չափսը:

ՔՀ-4ու հակազագրի չափսերը ըստ դեմքի բարձրության (1)

Աղյուսակ-1

Դիմակի չափսը	Դեմքի բարձրությունը մմ-ով
1	99-ից մինչև 109
2	109.5-ից մինչև 119
3	119.5-ից և ավելի բարձր

Սաղավարտ-դիմակի ընտրությունը կատարում են ըստ գլխի չափսերի, որոնք որոշվում են երկու չափումների

միջոցով. առաջին՝ ըստ գլխի գագաթի, կզակի և այտերի վրայով անցնող փակ գծի, երկրորդ՝ ըստ ականջանցքերը միացնող և վերհոնքային աղեղի վրայով անցնող գծի: Երկու չափումների արդյունքները գումարում են, և ըստ նրանց գումարի աղյուսակ 2-ի օգնությամբ որոշում դիմային մասի չափսը: Ճիշտ ընտրված հակազագի դիմակը պետք է ամուր հպվի դեմքին և բացառի արտաքին օդի ներթափանցումը շնչառական օրգաններ: Նոր հակազագը հագնելուց առաջ անհրաժեշտ է դիմակի ներսի և դրսի մասը մաքրել խոնավ շորով կամ բամբակով, իսկ օգտագործումից հետո ախտահանել որևէ ախտահանիչով (օդի, մեթիլ կամ էթիլ սպիրտ, ֆորմալինի 2 %-ոց լուծույթ, օդեկալոն և այլն): Ակնոցի ապակիները չքրտնելու համար օգտագործվում է չքրտնող թաղանթներ կամ հատուկ մատիտ:

ՔՀ-5 հակազագի չափսերը՝ ըստ գլխի երկու չափումների գումարի (1)

Աղյուսակ-2

Սաղավարտ դիմակի չափսը	Գլխի չափումների գումարը սմ -ով
0	մինչև 92
1	92-ից մինչև 95
2	95-ից մինչև 99
3	99-ից մինչև 102.2
4	102.2-ից և ավելի

Հակազագի սարքի նությունը որոշելու համար այն հանում ենք պայուսակից, հագնում դիմային մասը, ապա պայուսակից հանում գտիչի տուփը, փակում նրա օդի ներթափանցման անցքը և կատարում խորը ներշնչում: Եթե հերմետիկությունը ապահովված է, եզրակացնում ենք, որ հակազագը գտնվում է սարքին վիճակում: Եթե օդ է անցնում, ապա արտաքին զննությամբ անհրաժեշտ է գտնել, անսարքությունը վերացնել, հակառակ դեպքում հարկ է

փոխել հակագազը (25):

Զտիչ հակագազը աշխատանքային վիճակի բերելը.

- հանել դիմակը,
- երկու ձեռքով բռնել դիմակի ներքևի մասի հաստ եզրերից այնպես, որ բութ մատները գտնվեն դրսի կողմում,
- պահել շնչառությունը, փակել աչքերը, այն դնել կզակի տակ և ձեռքերի կտրուկ շարժումով դեպի վեր և ետ հագնել սաղավարտ-դիմակը:

Ծայրահեղ իրավիճակում, եթե դիմակը չի ապահովում հերմետիկությունը, անհրաժեշտ է շնչառությունը պահելով արագ պտուտակելով հանել գտիչը և շնչել նրա բերանամասով՝ փակելով քիթ (2):

Զտիչ հակագազը հանելը.

- ձախ ձեռքով բռնել կափույրի տուփը և դիմակի դեմքի մասը թեթևակի ձգել ներքև՝ դեպի առաջ, ու կտրուկ շարժումով հանել այն,
- խնամքով մաքրել սաղավարտ-դիմակը և տեղավորել պայուսակի մեջ՝ պահելով այն չոր, մաքուր տեղում,
- ցանկալի է սենյակային ջերմաստիճանում:

Այս տիպի հակագազերը հանդիսանում են շնչառական օրգանների պաշտպանության հիմնական միջոց, սակայն խիստ վարակված գոտիներում նրանց արդյունավետությունը կտրուկ նվազում է (2):

Մանկական պաշտպանական խցիկ

Նորածին և մինչև 1.5 տարեկան երեխաների անհատական պաշտպանության համար նախատեսված է մանկական պաշտպանական խցիկը (ՄՊԽ-4, K3Д-4): Խցիկը ունի պատուհան՝ երեխայի վարքին հետևելու համար: Մանկական պաշտպանական խցիկը կարելի է տեղափոխել ձեռքով բռնած կամ հարմարեցնել մեջքին, ինչպես նաև տեղակայել մանկասայլակի հենքի կամ սահնակի վրա (1):

Շնչադիմակ

Շնչադիմակը (Շ-2, Р-2) նախատեսված է շնչառական օրգանները ռադիոակտիվ փոշուց, ինչպես նաև օդի մեջ

մշուշի (գազակաթիլային) ձևով առկա մանրէներից և տոքսիններից պաշտպանելու համար (25): Շնչադիմակները թունավոր նյութերից չեն պաշտպանում: Շնչադիմակի պաշտպանական հատկությունները հիմնված են ներշնչվող օդի գտման սկզբունքի վրա: Առավել տարածում ունի Շ-2 շնչադիմակը: Այն արտադրվում է երեք չափի: Այդ չափերը համապատասխանում են ՔՀ-4 ու հակագազի դիմակի չափերին: Ուստի ընտրությունը նույն չափումներով կատարվում է այնպես, ինչպես ՔՀ-4 ու հակագազի դեպքում: Յոթ տարեկան և բարձր տարիքի երեխաների համար նախատեսված է մանկական շնչադիմակ (Շ-2Մ-ը, P-2Ճ), որը Շ-2-ից տարբերվում է չափսերով: Շ-2Մ-ը արտադրվում է չորս չափսի: Շ-2Մ-ի չափսը որոշվում է երեխայի դեմքի բարձրությանը համապատասխան:

Շ-2Մ շնչադիմակի չափսերը՝ ըստ երեխայի դեմքի բարձրության

Աղյուսակ-3

Երեխայի դեմքի բարձրությունը մմ	80-100	100-115	115-125	125 և ավելի
Շ-2Մ շնչադիմակի չափսը	0	1	2	3

Շնչադիմակը աշխատանքի վիճակի բերելը՝

- շնչադիմակը հանել փաթեթից, կիսադիմակը հագցնել դեմքին այնպես, որպեսզի կզակն ու քիթը տեղավորվեն կիսադիմակի ներսում,
- հագնել գլխանոցը, որպեսզի ոչ առաձգական երիզակներից մեկն ընկնի գլխի գագաթային, իսկ մյուսը ծոծրակային մասի վրա: Անհրաժեշտության դեպքում ճարմանդների օգնությամբ կարգավորել առաձգական երիզակների երկարությունը,
- կիսադիմակի և դեմքի հպման սերտությունն ստուգելու համար ձեռքի ավուվ ծածկել արտաշնչման համար

նախատեսված կափույրի ապահովիչի էկրանը և թեթև արտաշնչել (եթե դիմակը փոքր ինչ փքվում է, նշանակում է շնչադիմակը հերմետիկ է, եթե օդ է անցնում քթաթևերի շրջան, ապա պետք է քթի սեղմակի ծայրերն ավելի ամուր սեղմել քթին):

Ռադիոակտիվ վարակման պայմաններում շնչադիմակը օգտագործելուց հետո անհրաժեշտ է այն ապակափուլացնել (դրսի մասերից հեռացնել ռադիոակտիվ փոշին, իսկ ներսի մակերեսը մաքրել խոնավ խծուծով) (32):

Շնչառական օրգանների պաշտպանության պարզագույն միջոցներ

Պարզագույն միջոցներից են՝ փոշեզտիչ գործվածքային դիմակը կամ հակափոշային գործվածքային դիմակը (ՀԳԴ-1, ITM-1) և բամբակաթանգիվային դիմակապը (ԲԹԴ, БМП): Դրանք կարելի է օգտագործել ռադիոակտիվ տարրերով վարակված տարածքներում, օդի զտման միջոցներով չապահովված թաքստոցներում և վարակված շրջանից դուրս գալիս (25): Պաշտպանում են շնչառական օրգանները ռադիոակտիվ փոշուց և բակտերիալ մանրէներից: Շնչառական օրգանների և աչքերի ավելի հուսալի պաշտպանությունն ապահովում է հակափոշային գործվածքային դիմակը:

Փոշեզտիչ գործվածքային դիմակ

Փոշեզտիչ գործվածքային դիմակը պատրաստվում է յոթ չափսի՝ ըստ դեմքի բարձրության: Հակափոշային գործվածքային դիմակը բաղկացած է հենքից և կապիչներից: Հենքը պատրաստվում է 4-5 շերտ խիտ գործվածքից, 2-3 ներքին շերտը՝ կիպ, իսկ 2 արտաքին շերտը՝ նոսր խտությամբ գործվածքից: Ամրակները պատրաստվում են ցանկացած գործվածքից մեկ շերտով: Դիմակի պատրաստման համար գոյություն ունի համապատասխան հրահանգ: Դիմակը հագնելու համար անհրաժեշտ է՝
- երկու ձեռքով վերցնել դիմակի ներքևի մասը և այն կիպ առնել կզակին,

- դիմակի ամրակապերը տանել գլխի հետևը և դիմակը ձեռքերով ամուր սեղմել դեմքին,
- դիմակը հարթելով գլխի վրա՝ ձգել ամրակապերը, կապել ծոծրակային ամրակապերի ծայրերը,
- ձգել լայնակի ռետինե քուղը:

Աղյուսակ-4

Դեմքի մմ	Բարձրությունը	Դիմակի չափսը
Միջև	80	1
81	- 90	2
91	- 100	3
101	- 110	4
111	- 120	5
121	- 130	6
131 և ավելի		7

Դիմակը հանելուց հետո պետք է այն հակառակ երեսով շրջել և փաթաթել որևէ կտորի, հաստ թղթի կամ ծրարի մեջ (32):

Բամբակաթանգիվային պարզագույն դիմակապ պատրասելու համար անհրաժեշտ է վերցնել 100×50 սմ չափի թանգիվ, մեջտեղում տեղակայել 30×20 սմ չափով բամբակ (1-2 սմ հաստությամբ) և լայնությամբ ծալել, ապա կարել: Եզրերին ամրացնել ժապավեն՝ կապելու համար: Դիմակապի ժապավեններով հանգույց են անում, վերնինները՝ ծոծրակի, իսկ ներքինները՝ գանգի գագաթի վրա: Դիմակը հագնելուց հետո այն պետք է ընդգրկի կզակը և ծածկի բերանն ու քիթը մինչև աչքերի խոռոչները: Աչքերը անհրաժեշտ է պաշտպանել փոշու համար անթափանց ակնոցներով: Դիմակապի, քթի և այտերի արանքներում առաջացող անկիպությունների տեղում պետք է խցկել բամբակ: Դիմակի և դիմակապի բացակայության դեպում կարելի է օգտագործել մի քանի տակ ծալած սրբիչ, թաշկինակ և այլ հարմար գործվածք (32):

Մաշկային ծածկույթի պաշտպանության միջոցներ

Նախատեսված է պաշտպանելու մարդկանց մարմինը կաթիլահեղուկային թունավոր նյութերի, ռադիոակտիվ փոշու և մանրէաբանական միջոցների վարակումից, ինչպես նաև ռադիոակտիվ արտաքին α ճառագայթահարումից (32):

Մաշկային ծածկույթի պաշտպանական հատուկ միջոցներ

Մաշկային ծածկույթի պաշտպանության հատուկ միջոցներից են.

- համագորային պաշտպանիչ լրակազմը (ՀՊԼ, ՕՅԿ),
- համագորային համալրված պաշտպանիչ լրակազմը (ՀՀՊԼ, ՕԿՅԿ),
- թեթև կոստյումը (Թ-1, Մ-1),
- հակաքիմիական պաշտպանական գուլպաներ, ձեռնոցներ, գոգնոցներ (1):

ՀՊԼ-ի կազմում ընդգրկված են՝

- պաշտպանիչ թիկնոց,
- նասկիներ և ձեռնոց:

Համալիրը կարող է օգտագործվել նաև լուսային իմպուլսի ճառագայթահարումից և հրավառվող միջոցներից պաշտպանվելու համար: Արտադրվում է հինգ չափսի, գարնանային և ձմեռային տիպերի, քաշը 1.6 կգ է (30):

ՀՀՊԼ-ի կազմում ընդգրկված են.

- բաճկոն և շալվար, որոնք տոգորված են հրակայուն նյութով,
- թրծված բամբակաթղթային գործվածքից պատրաստված պաշտպանիչ սպիտակեղեն,
- ամառային և ձմեռային գլխարկ՝ մշակված հրակայուն նյութով (30):

ՀՀՊԼ-ը ունի ատոմային զենքի լուսային ճառագայթահարումից պաշտպանելու հատկություն: Պաշտպանական հատկանիշները մեծացնելու նպատակով կարելի է ՀՀՊԼ-ը օգտագործել ՀՊԼ-ի հետ միասին:

Լ-1-ը պատրաստվում է ռեզինանման կտորից, որի կազմում առկա է.

- շալվար՝ համակցված նասկիներով,
- գլխանոցով (капюшон) վերնաշապիկ,
- ձեռնոցներ:

Պաշտպանական հատուկ միջոցները անհրաժեշտ է պահպանել 12-16°C ջերմաստիճանի և 65-70 % հարաբերական խոնավության պայմաններում, արևի ճառագայթներից հեռու (30):

Մաշկային ծածկույթի պաշտպանության պարզագույն միջոցներ

Հատուկ միջոցների բացակայության դեպքում ռադիոակտիվ փոշուց և մանրէաբանական միջոցներից հաջողությամբ կարելի է պաշտպանվել **կենցաղում օգտագործվող** անջրանցիկ թիկնոցով, սպորտային համազգեստով, ծածկոցով, սաղավարտով, խիտ գործվածքից վերարկուով և այլն: Ձեռքերը կարելի է պաշտպանել կաշվե կամ ռեզինե ձեռնոցներով, իսկ ոտքերը՝ երկարաճիտ կաշվե կամ ռեզինե կոշիկներով: Հագուստը, ներծծելով որոշակի լուծույթներով կամ օձառայուղային էմուլսիաներով, կարելի է բարձրացնել նրանց պաշտպանական հատկանիշները: Տնային պայմաններում հագուստի տոգորման հարմար միջոց է օձառայուղային էմուլսիան: Մեկ համալիրի համար անհրաժեշտ է 2.5 լ լուծույթ, որի պատրաստման համար վերցնում են 250-300 գ մանրացված լվացքի օձառ և լուծում 2լ տաք ջրի մեջ, երբ օձառը ամբողջությամբ լուծվում է, տաք լուծույթի վրա լցնում են 0.5 լ հանքային (կարտերային, տրանսֆորմատորային, մեքենայի) կամ բուսական (արևածաղկի, բամբակի) յուղ, խառնում են 5-7 րոպեի ընթացքում և նորից խառնելով տաքացնում մինչև 60-70°C, քանի դեռ չի ստացվել համասեռ էմուլսիա (25): Սկզբում տոգորում են բաճկոնը, հետո համալիրի մնացած մասերը: Տոգորված հագուստը քամում են և չորացնում բաց տարածքում: Պաշտպանական համալիրը հագնում են ներքին սպիտակեղենի կամ ամառային հագուստի վրա:

Բժշկական պաշտպանական միջոցներ

Նախատեսված են անձնակազմի առաջին օգնություն ցուցաբերելու, ինչպես նաև մասնակի սանիտարական մշակման (մաշկային ծածկույթը, համազգեստը, զենք-զինամթերքը վարակազերծելու, ապասկտիվացնելու, ապագազեցնելու) համար: Այդ միջոցներից են՝ անհատական հակաքիմիական փաթեթը (ԱՀՓ, ИПП-8) լուծույթի տեսքով, անհատական վիրակապական բժշկական փաթեթը (ՎԲՓ, ППМ), անհատական դեղատուփը (ԱԴ-2, АИ-2), զինվորական դեղատուփը (ԶԴ, АВ), ինչպես նաև տարաբնույթ կլանիչներ, անտիդոտներ և այլ պատրաստուկներ:

Անհատական դեղատուփը (ԱԴ-2) պարունակում է բժշկական միջոցներ: Նախատեսված է թունավոր նյութերով, ռադիոակտիվ տարրերով և բակտերիալ մանրէներով աղտոտված տարածքներում հայտնված տուժածներին առաջին օգնություն ցուցաբերելու համար: Դեղահաբերը զետեղված են պլաստմասե փոքր սրվակներում և տեղակայված են տուփի բնիկներում, առկա է նաև մեկանգամյա օգտագործման ենթակա ներարկիչ՝ լցված ցավազրկողով:

ԱԴ-2 պարունակում է՝

- թունավոր նյութերի հակազդման միջոց (կարմիր գլխիկով սրվակ),
- հակաբակտերիալ միջոց (անգույն երկու սրվակ),
- կանխարգելիչ միջոց (երկնագույն սրվակ),
- ռադիացիայից պաշտպանիչ միջոց (վարդագույն խոշոր սրվակ),
- հակափսխուկային միջոց (կապույտ, փոքր սրվակ) (30):

Նյարդակաթվածահարույց թունավոր նյութերի կիրառման դեպքում առաջարկվող միջոցը օգնում է օրգանիզմին դիմակայել թունավորմանը: Անհրաժեշտ է անտիդոտը (հակաթույնը) օգտագործել թունավորման առաջին նշանների տեսողության վատացման, շնչառության

դժվարացման դրսևորման դեպքերում: Ռադիացիայից պաշտպանիչ միջոցը օգտագործվում է ճառագայթահարման վտանգի դեպքում: Անհրաժեշտ է ընդունել վեց հաբ, ապա 4-5 ժամ հետո ևս վեց հաբ: Հակափսիսուկային միջոցը օգտագործվում է մեկ հաբով ռադիոակտիվ ճառագայթման վտանգի և անմիջապես վտանգից հետո: Ցավազրկող լուծույթով մեկանգամյա օգտագործման համար նախատեսված ներարկիչը կիրառվում է ծանր վնասվածքներ ու այրվածքներ ունեցող տուժածներին ցավազրկելու և շոկը կանխելու նպատակով: **Ղեղատուփում առկա միջոցների կիրառման վերաբերյալ տեղեկատվությունը հստակ ներկայացված է կափարիչի ներսի հատվածում՝ զծապատկերի տեսքով:**

Անհատական հակաքիմիական փաթեթը (ԱՀՓ) նախատեսված է մասնակի սանիտարական մշակման (մաշկի, հագուստի, զենք- զինամթերքի վրա ընկած թունավոր նյութերը չեզոքացնելու) համար, իրենից ներկայացնում է 22ի մեջ լցված ապագազեցնող հեղուկ և թվով 4 խճուճ (1): Կիրառվում է ախտահարվելուց հետո: Ապագազեցնող լուծույթը նախատեսված է երկու անգամ մշակման համար (30): Անհրաժեշտ է խճուճը ամբողջությամբ ներծծել լուծույթով և մաքրել վարակված մասերը, այդ թվում օձիքը ամբողջ մակերեսով և վերնազգեստի թևոցները, ինչպես նաև դիմային ամբողջ հատվածը: Անհրաժեշտ է գիտենալ, որ լուծույթը վտանգավոր է աչքերի համար:

Անհատական վիրակապական փաթեթը (ԱՎՓ) նախատեսված է վերքերը, այրվածքները վիրակապելու համար: Բաղկացած է վիրակապից և թվով 2 բամբակաթանգիվային խճուճից, որոնք տեղակայված են հերմետիկ փաթեթի մեջ: Փաթեթի վրա նշված է օգտվելու կարգը (2):

Զինվորական ղեղատուփը (ԶՂ) նախատեսված է զրահամեքենայի, հրասայլի անձնակազմի համար: Պարունակում է 5 % յոդի լուծույթ և 10 % ամոնիակի լուծույթ՝

սրվակներով, ախտահարված փաթույթային վիրակապ, լարան, բժշկական գլխաշոր՝ վիրակապի համար (2):

Բնակչության ապահովումը ՔՊ անհատական պաշտպանական միջոցներով

Բնակչության ապահովումը ՔՊ անհատական պաշտպանական միջոցներով իրականացվում է ՀՀ կառավարության որոշումով հաստատված՝ «Բնակչությանն անհատական պաշտպանության միջոցներով ապահովելու կարգի» համաձայն (25 հոկտեմբերի 2000 թվականի N 679):

Համաձայն այդ որոշման՝ անհատական պաշտպանության միջոցներով ապահովվում են՝

ա) փրկարար ուժերի անձնակազմը՝ գտող հակազագերով, շնչադիմակներով, մաշկի պաշտպանության միջոցներով, իսկ քիմիական վտանգավոր օբյեկտներում վթարի վերացման աշխատանքներին մասնակցող փրկարար ուժերի անձնակազմը՝ նաև լրացուցիչ մեկուսացնող և արդյունաբերական հակազագերով,

բ) սահմանամերձ (մինչև 10 կմ շառավղով) գոտու բնակավայրերի բնակչությունը՝ գտող հակազագերով և համագորային պաշտպանական լրակազմներով,

գ) կազմակերպությունների աշխատողները, Հայկական ԱԷԿ-ի շուրջ 10 կմ շառավղով գոտու բնակավայրերի բնակչությունը՝ գտող հակազագերով և շնչադիմակներով,

դ) քիմիական վտանգավոր օբյեկտների անձնակազմը՝ մեկուսացնող և արդյունաբերական հակազագերով,

ե) Երևան, Գյումրի, Վանաձոր, Կապան ու Հրազդան քաղաքների բնակչությունը և այդ քաղաքների կազմակերպությունների աշխատողները՝ գտող հակազագերով,

զ) մնացած բնակավայրերի բնակչությունը՝ գտող հակազագերով:

Բնակչությունն անհատական պաշտպանության միջոցներով ապահովվում է հետևյալ հերթականությամբ՝

ա) առաջին հերթին՝ սահմանամերձ (մինչև 10 կմ շառավղով)

գոտու բնակավայրերի բնակչությունը, փրկարար ուժերի անձնակազմը, Հայկական ԱԷԿ-ի շուրջ 10 կմ շառավղով գոտու բնակավայրերի բնակչությունը և կազմակերպությունների աշխատողները, քիմիական վտանգավոր օբյեկտների անձնակազմը,

բ) երկրորդ հերթին՝ Երևան, Գյումրի, Վանաձոր, Կապան և Հրազդան քաղաքների կազմակերպությունների աշխատողները: Երևան, Գյումրի, Վանաձոր, Կապան և Հրազդան քաղաքների բնակչությունը,

գ) երրորդ հերթին՝ մնացած բնակավայրերի բնակչությունը:

Անհատական պաշտպանության միջոցների բացակայության դեպքում, որպես մաշկի պաշտպանության հասարակ միջոցներ կարող են հարմարեցվել սովորական հագուստը, մարզահագուստները (սպորտային կոստյումները) և կոշիկները, որոնք ենթարկվում են հերմետիկացման:

Ցանկացած մարզահագուստ, ռետինե կոշիկներ և ձեռնոցներ կարող են դառնալ պաշտպանական գտող լրակազմ, եթե դրանք նախօրոք հագեցվեն հատուկ բաղադրությամբ: Այդ նպատակով կիրառվում են զանազան լվացող միջոցների լուծույթներ և օձառայուղային էմուլսիաներ: Մաշկի պաշտպանության հասարակ միջոցներն օգտագործվում են հակազգեցիկ հետ զուգորդված՝ ճառագայթային փոշիներից և մանրէաբանական միջոցներից, իսկ քիմիական լուծույթներով հագեցնելուց հետո՝ նաև մարտական թունավոր նյութերից պաշտպանվելու համար:

ՀՀ Արտակարգ իրավիճակների նախարարությունը բնակչությանը ուսուցանում է սեփական ուժերով շնչառական օրգանների պաշտպանության հասարակ միջոցների պատրաստման ու մաշկի պաշտպանության համար հագուստի հարմարեցման և դրանցից օգտվելու հնարքները:

Զորահավաքային պահուստից անհատական պաշտպանության միջոցները բնակչությանը բաշխվում են ՀՀ

կառավարության որոշմամբ, իսկ կազմակերպություններում՝ տվյալ կազմակերպության ղեկավարի որոշմամբ: Զորահավաքային պահուստի և կազմակերպությունների անհատական պաշտպանության միջոցների տեղաբաշխումն ու պահպանումն իրականացվում է հաշվի առնելով կարճ ժամանակահատվածում դրանց բաշխման անհրաժեշտությունը: Վտանգի առկայության դեպքում կազմակերպությունների փրկարար ուժերի անձնակազմերին, հայկական ԱԷԿ-ի և քիմիական վտանգավոր օբյեկտների աշխատողներին, ինչպես նաև այն քաղաքների բնակչությանը, որտեղ տեղակայված են այդ օբյեկտները և հայկական ԱԷԿ-ի շուրջ 10 կմ շառավղով գոտու բնակավայրերի բնակչությանն անհատական պաշտպանության միջոցները բաշխվում են նախօրոք:

Պատերազմի ժամանակ և ԱԲ-ում անհատական պաշտպանության միջոցների բաշխման կարգը սահմանվում է պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների և կազմակերպությունների ՔՊ պլաններով:

Նշված պլաններով որոշվում են անհատական պաշտպանության միջոցների բաշխման կետերը, ժամանակը, քանակը և հերթականությունն ըստ համայնքների ու կազմակերպությունների: Այդ պլաններում նշվում են նաև պահեստներից անհատական պաշտպանության միջոցների ստացման, բաշխման կետեր հասցնելու, դրանց ստուգման և հարմարեցման, բեռնման-բեռնաթափման խմբերը, ինչպես նաև տրանսպորտային միջոցներ հատկացնող կազմակերպությունները և պատասխանատու անձինք:

4.3. Բնակչության տարահանում

Տարահանումը բնակչության պաշտպանության հիմնական ձևերից մեկն է: Այն իրականացվում է վտանգավոր տարածքներից անվտանգ տարածքներ մարդկանց,

նյութական և մշակութային արժեքների ժամանակավոր տեղափոխման և տեղաբաշխման միջոցով:

Տարակենտրոնացումը պատերազմական ժամանակահատվածում իրենց աշխատանքները չդադարեցրած հիմնարկ-ձեռնարկությունների ծառայողների կազմակերպված դուրս բերումն է վտանգավոր գոտիներից և տեղաբաշխումն է մերձքաղաքային անվտանգ գոտիներում (27): Վտանգավոր տարածքից բնակչության տարահանումը կատարվում է ՀՀ կառավարություն 2011 թվականի օգոստոսի 18-ի N 1180-Ն որոշումով հաստատված «Վտանգավոր տարածքներից բնակչության տարահանման կարգի» համաձայն: Տարահանումն իրականացվում է ՀՀ-ի վրա զինված հարձակման, դրա անմիջական վտանգի առկայության կամ ՀՀ Ազգային ժողովի կողմից պատերազմ հայտարարվելու, ինչպես նաև այնպիսի ԱԻ-ի առաջացման կամ անմիջական սպառնալիքի դեպքում, որի հետևանքով որոշակի տարածքներում կարող են առաջանալ մարդկանց կյանքի և կենսագործունեության բնականոն պայմանների վրա բացասաբար ազդող էական գործոններ: Տարահանումը կարող է իրականացվել 2 փուլով: Առաջին փուլում բնակչության տարահանում ԱԻ-ի գոտիներից անվտանգ տարածքներ՝ ժամանակավոր տեղակայման կետեր (ԺՏԿ): ԺՏԿ-ների համար կարող են օգտագործվել կինոթատրոնները, ակումբները, ուսումնական հաստատությունները, հյուրանոցները, հանրակացարանները, վրանային ավանները և այլն: Երկրորդ փուլում տևական բնության ԱԻ-ի կամ մշտական բնակության վայր վերադառնալու անհնարինության դեպքում իրականացվում է բնակչության տեղափոխում ԺՏԿ-ից երկարատև բնակության կետեր (ԵԲԿ), որտեղ հնարավոր է բնակության երկարատև և համակոդմանի կենսագործունեության ապահովումը: ԵԲԿ-ի համար կարող են օգտագործվել առողջարանները, նախաբուժարանները, հանգստյան տները, պանսիոնատները, տուրիստական

բազաները, հյուրանոցները և այլ շինություններ (անկախ սեփականության ձևից), որոնք համապատասխանում են երկարատև բնակության պայմաններին: ԺՏԿ-ները և ԵԲԿ-ները ընտրվում են նախօրոք՝ ելնելով ԱԻ-ի ժամանակ առաջացող հնարավոր իրավիճակներից:

Բնակչության տարհանում նախատեսվում է՝

- 1) ջրամբարների պատվարների փլուզման կամ գետերի ջրերի հորդացման հետևանքով ջրածածկման ենթակա տարածքներից.
- 2) սողանքների և ձնահյուսերի հետևանքով առաջացած վտանգավոր տարածքներից.
- 3) երկրաշարժի հետևանքով ավերված և բնակվելու համար վտանգավոր բնակավայրերից.
- 4) ատոմային էլեկտրակայանի ընդհանուր վթարի կամ դրա անմիջական սպառնալիքի դեպքում տարհանման սահմանված միջամտման չափաքանակների գերազանցմամբ ճառագայթային ազդեցության և կամ ճառագայթային աղտոտման ենթակա տարածքներից.
- 5) վտանգավոր թունավոր նյութերի կամ արտադրական պրոցեսում դրանք օգտագործող արդյունաբերական օբյեկտներին հարակից վարակավտանգ գոտուց.
- 6) ռադիոակտիվ կամ թունավոր նյութերի տրանսպորտային փոխադրումների ժամանակ տեղի ունեցած վթարի հետևանքով առաջացած վտանգավոր տարածքից.
- 7) սահմանամերձ բնակավայրերից և տարածքներից մասնակի տարհանում կարող է կատարվել ռազմական դրության ժամանակ հակառակորդի հանկարծակի հարձակման, հակառակորդի հարձակման սպառնալիքի, ինչպես նաև մարտական գործողությունների վարման և զենքի տեսակների անմիջական կիրառման կամ դրա սպառնալիքի դեպքերում:

Բնակչության տարհանման ձևերը ու միջոցները

Բնակչությունը կարող է տարհանվել հետիոտն շարասյուներով կամ տրանսպորտային միջոցներով՝

ավտոշարասյուններով, երկաթուղային շարժակազմերով և ջրային տրանսպորտով, արտադրական կամ և արտադրատարածքային սկզբունքով, մասնակի կամ **ընդհանուր**: Առանձին դեպքերում տարհանման համար ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կարող են տրամադրվել նաև օդային տրանսպորտի միջոցներ: Տարհանման համար տրամադրվող տրանսպորտային միջոցների հատկացումն ու վառելիքաքսուկային նյութերով ապահովումն իրականացվում է ՀՀ օրենքով սահմանված կարգով: **Ընդհանուր տարհանումը** տվյալ տարածքի (բնակավայրի) ամբողջ բնակչության տարհանումն է: **Մասնակի տարհանումը** մինչև 16 տարեկան երեխաների, հղի և մինչև 8 տարեկան երեխա ունեցող կանանց, 8-16 տարեկան երեխա ունեցող այն կանանց, որոնց ընտանիքների կազմում չկան տարհանման ենթակա անաշխատունակ անդամներ, հաշմանդամների և կենսաթոշակառուների տարհանումն է կամ տվյալ տարածքի բնակչության մի մասի տարհանումը: **Տարհանումը** իրականացվում է ամենակարճ ժամկետներում. այն պետք է սկսվի ահազանգը ստանալուց ոչ ուշ, քան 4 ժամ հետո, և ավարտվի մինչև 500 հազ. բնակչություն ունեցող քաղաքներից 12 ժամում, մինչև 1 միլիոն բնակչությամբ քաղաքներից՝ 20 ժամում:

Տարհանման մասին որոշում ընդունող մարմինները

1. Տարերային, տեխնածին կամ էկոլոգիական աղետների և այլ բնույթի վթարների դեպքում ընդհանուր կամ մասնակի տարհանման մասին որոշում ընդունում են հանրապետական գործադիր մարմինների ղեկավարները իրենց համակարգի աշխատողների համար, ՀՀ մարզպետները՝ մարզի բնակչության համար, տեղական ինքնակառավարման մարմինների ղեկավարները՝ համայնքի բնակչության համար, կազմակերպությունների ղեկավարները՝ իրենց աշխատողների համար: Նրանց բացակայության դեպքում՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված

կարգով նրանց փոխարինող անձինք:

2. Տարհանման մասին որոշում ընդունող պաշտոնատար անձը պարտավոր է ընդունված որոշման մասին տեղեկացնել լիազորված մարմին՝ ՀՀ Արտակարգ իրավիճակների նախարարություն (ճգնաժամային կառավարման կենտրոնին):

3. ԱԻ-ի կանխման, դրանց հնարավոր հետևանքների վերացման աշխատանքների ղեկավարն իրավունք ունի ինքնուրույն որոշում ընդունելու վտանգավոր տարածքից բնակչությանն անվտանգ վայր տեղափոխելու վերաբերյալ:

4. ԱԷԿ-ի ընդհանուր վթարի կամ դրա անմիջական սպառնալիքի դեպքում ԱԷԿ-ին հարակից 5 կմ շառավղով նախահարձակ պաշտպանական գործողությունների իրականացման գոտու բնակավայրերի բնակչության տարահանումը կազմակերպվում է ԱԷԿ-ից ստացած ահազանգի հիման վրա՝ համապատասխան համայնքի ղեկավարի կողմից, իսկ 5 կմ շառավղով գոտուց դուրս՝ 1-ին կետով սահմանված կարգով:

5. Պատերազմական գործողությունների ժամանակ օգտագործվող զենքի տեսակների կիրառման կամ դրա սպառնալիքի դեպքում տարհանման մասին որոշում ընդունում է ՀՀ կառավարությունը, իսկ հակառակորդի հանկարծակի հարձակման դեպքում՝ պետական կառավարման տարածքային, տեղական ինքնակառավարման մարմինները և տվյալ տարածքի կայագործի պետը իր իրավասության սահմաններում:

Բնակչության տարհանման կազմակերպումը ու իրականացումը

1. Բնակչության տարհանման պլանավորումը և կազմակերպումը, տարհանված բնակչության տեղաբաշխումը ու բազմակողմանի կենսաապահովումը և ԱԻ-ի վերացումից հետո նրա վերադարձը մշտական բնակչության վայրերն իրականացնում են պետական կառավարման տարածքային և տեղական

ինքնակառավարման մարմինները՝ տարհանման հանձնաժողովների միջոցով:

2. Տարհանման հանձնաժողովները նախապես որոշում և տարհանման միջոցառումներին մասնակցող կազմակերպություններին տեղեկացնում են տարհանումն իրականացնող մարմինների, տարհանման և ընդունման հավաքակայանների, կարճաժամկետ տեղակայման կետերի, երկարատև բնակության կետերի գտնվելու վայրի մասին:

3. Տարհանման միջոցառումները կանոնակարգվում են նախապես մշակված տարհանման պլաններով, որոնք ներառում են՝

1) բնակչության տարհանման անցկացման կարգն ու ժամկետները, տարհանման համար տրամադրվող ուժերն ու միջոցները, տարհանման երթուղին.

2) տարհանման և ընդունման հավաքակայաններում աշխատանքների կազմակերպումը.

3) տարհանման հաշվարկը՝ ըստ տրանսպորտային տեսակների ու տարհանման երթուղիների.

4) ընդունող բնակավայրերում տարհանվողների տեղաբաշխման կազմակերպման և սնունդով ապահովման կանոնակարգը.

5) նյութական և մշակութային արժեքների դուրսբերման կարգը:

4. Բնակչության տարհանման պլանները մշակում են տարհանման համապատասխան հանձնաժողովները՝ ՀՀ ԱԻ նախարարության հետ համատեղ:

5. Տարհանման հանձնաժողովները ստեղծվում են՝

1) հանրապետական տարհանման հանձնաժողովը՝ ՀՀ վարչապետի որոշմամբ.

2) հանրապետական գործադիր մարմնի հանձնաժողովը՝ ՀՀ գործադիր մարմնի ղեկավարի հրամանով.

3) մարզային տարհանման հանձնաժողովները՝ ՀՀ մարզպետի որոշմամբ.

4) համայնքային տարհանման հանձնաժողովը՝ համայնքի

դեկավարի որոշմամբ.

5) կազմակերպության տարհանման հանձնաժողովը՝
կազմակերպության ղեկավարի հրամանով:

6. Տարհանման հանձնաժողովի նախագահ է նշանակվում
հանձնաժողովն ստեղծող մարմնի ղեկավարի տեղակալը
(այդպիսին չլինելու դեպքում՝ տվյալ ղեկավարի կողմից
նշանակված անձը):

7. Տարհանման հանձնաժողովները գործում են իրենց
կանոնադրությունների համաձայն, որոնք հաստատվում են
հանձնաժողովներն ստեղծող մարմինների ղեկավարների
կողմից: Կանոնադրությունների օրինակելի ձևերը մշակում է
ՀՀ ԱԻ նախարարությունը:

8. ՀՀ ԱԻ նախարարությունը սահմանում է տարհանման
պլանների կառուցվածքն ու համապատասխան
փաստաթղթերի ձևերը:

9. Բնակավայրերում կարող է ստեղծվել մեկ կամ ավելի
տարհանման հավաքակայան, մեկ հավաքակայանում 10000
տարհանվողից ոչ ավել՝ սպասարկման սկզբունքներով:

10. Տարհանման հավաքակայաններն ստեղծվում են
հանրակրթական և հասարակական
կազմակերպությունների տարածքներում, ապահովվում
կապի միջոցներով, բուժսպասարկման կետով, մոր ու
մանկան, հանգստի սենյակներով: Տարհանման
երթուղիները ճշգրտվում են տարհանման
հավաքակայաններում:

11. Բնակչության տարհանումն իրականացվում է
տարհանման հավաքակայաններից, որտեղ տարհանման
ազդանշան (հրահանգ) ստանալու դեպքում ժամանում են
տարհանվողները:

12. Յուրաքանչյուր տարհանվողի առաջարկվում է՝

1) ունենալ անձը հաստատող փաստաթուղթ, երեք օրվա
սննդամթերք և այլ անհրաժեշտ պարագաներ.

2) հոսանքազրկել բնակարանը և անվտանգ տեղեր
տեղափոխել հրդեհավտանգ ու պայթյունավտանգ նյութերն

ու առարկաները.

3) տարհանման և ընդունման հավաքակայաններում ու երթի ընթացքում կատարել հավաքակայանների ու շարասյան պետերի հրահանգներն ու հանձնարարականները:

Տարհանման միջոցառումների ապահովումը

1. ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանության ուժերն իրականացնում են տարհանման երթուղիների անցողունակության և տարհանված բնակավայրերում (տարածքներում) ու օբյեկտներում մնացած գույքի պահպանության միջոցառումները:

2. Տարհանման միջոցառումների ապահովումն իրականացվում է հանրապետական գործադիր մարմինների, տարածքային կառավարման մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների և կազմակերպությունների քաղաքացիական պաշտպանության ծառայությունների միջոցով՝ համաձայն իրենց կանոնադրությունների:

3. Տարհանված բնակչության կենսաապահովումը տեղաբաշխման տեղամասերում իրականացվում է ՀՀ կառավարության սահմանած կարգով:

4. ՀՀ զինված ուժերին ամրագրված տրանսպորտային միջոցները չեն օգտագործվում բնակչությանը տարհանելու համար, եթե հայտարարված է զորահավաք:

5. Տարհանման և բնակչության ընդունման հավաքակայաններում, ժամանակավոր կացարաններում, տարհանման երթուղիներում տարհանվողների բուժօգնությունն իրականացվում է բժշկական հաստատությունների կողմից՝ անկախ սեփականության ձևից, սեփական միջոցների հաշվին ՀՀ պետական բյուջեից հետագա համարժեք փոխհատուցմամբ՝ ՀՀ օրենքով սահմանված կարգով: Տարհանված բժշկական հիմնարկները տեղաբաշխվում են համապատասխան պլանների համաձայն:

Հետիոտն տարհանում

Հետիոտն տարհանման դեպքում կազմվում են 500-1000

մարդուց բաղկացած շարասյուներ: Շարասյան ղեկավար է նշանակվում փորձառու, բանիմաց, կազմակերպչական հատկանիշներով օժտված, հարգանք վայելող անձնավարություն: Հետիոտն շարասյան ղեկավարին տրվում է երթի գծապատկերը, որը հանդիսանում է երթի հիմնական փաստաթուղթը: Երթը արդյունավետ կազմակերպելու համար շարասյունը բաժանվում է 50-ից 100 մարդուց բաղկացած խմբերի, և նշանակվում խմբերի ավագներ: Երթի շարժման արագությունը չպետք է գերազանցի 3-4 կմ/ժ-ը: Շարասյուների միջև հեռավորությունը պետք է կազմի մոտ 500 մ: Յուրաքանչյուր 1.5-2 ժամ քայլելուց հետո նախատեսվում է 15 րոպե, իսկ մեկ օրվա ընթացքում նախատեսված ճանապարհի կեսը անցնելուց հետո՝ 1-2 ժամ հանգիստ: Պատերազմական իրավիճակում ինչպես շարասյան երթը, այնպես էլ հանգիստը կազմակերպվում է հնարավորինս քողարկված ձևով: Երթի ընթացքում չի կարելի օգտվել գյուղատնտեսական նշանակության այգիներից և ցանքատարածություններից: Օրվա երթը ավարտվում է տարհանման միջանկյալ կետ հասնելով, որը պետք է գտնվի հնարավոր ավերումների և այլ վտանգներ պարունակող գոտուց դուրս: Միջանկյալ տարհանման վայրի տարածքային, տեղական ինքնակառավարման մարմինները կազմակերպում են տարհանվողների հաշվառում և նրանց ժամանակավոր տեղաբաշխում բնակելի տարածքներում կամ վրաններում, ապահովվում են սննդով և ջրով, ինչպես նաև հնարավոր «օդային տագնապ» ազդանշանի դեպքում՝ ՔՊ պաշտպանական կառույցներով (27):

**4.4. Փրկարարական և անհետաձգելի
վթարավերականգնողական աշխատանքների
կազմակերպումը ԱԻ-ի և պատերազմի ժամանակ**

Մեկնաբանվող հարցեր՝

1. ԱԻ-ում փրկարարական և անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքների նպատակը և իրականացվող միջոցառումները:

Ուսուցման նպատակը՝

1. ունկնդիրների մոտ ձևավորել պատկերացումներ ԱԻ-ում իրականացվող փրկարարական և անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքների վերաբերյալ,
2. ունկնդիրներին ծանոթացնել ԱԻ-ի և պատերազմի ժամանակ փրկարարական և անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքների իրականացման միջոցառումներին:

Ուսումնական արդյունք՝

1. ներկայացնել ԱԻ-ում փրկարարական և անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքների նպատակը և իրականացվող միջոցառումները:

Կատարման չափանիշներ՝

1. Ճիշտ է մեկնաբանում փրկարարական և անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքների նպատակը,
2. կարողանում է ներկայացնել փրկարարական և անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքների իրականացման միջոցառումներ:

**Փրկարարական և անհետաձգելի
վթարավերականգնողական աշխատանքները ԱԻ-ի
հետևանքների վերացման միջոցառումների համալիր է, որը
իրականացվում է սեղմ ժամկետներում աղետի գոտում և
ուղղված է տուժած բնակչությանը օգնություն
ցուցաբերելուն, վտանգավորօջախները վնասազերծելուն,**

մարդկանց կենսունակության բնականոն պայմանները վերականգնելուն (1):

Փրկարարական աշխատանքները միջոցառումների համալիր է ուղղված մարդկանց, ինչպես նաև նյութական և մշակութային արժեքները փրկելուն (5):

Անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքները առաջնահերթ աշխատանքների համալիր է ուղղված մարդկանց կյանքին և առողջությանն սպառնացող այնպիսի գործոնների ազդեցության վտանգի վերացմանը, որոնք խոչընդոտում են մարդկանց որոնելուն և փրկելուն, ինչպես նաև շենքերի, շինությունների ամրացմանը կամ փլմանը, հեղուկ վառելիքի, գազի, էլեկտրաէներգիայի և ջրի աղբյուրների վթարային անջատմանը, փրկարարների կենսաապահովման առաջնահերթ օբյեկտները ժամանակավոր սխեմաներով վերականգնմանը, և տարածքի սանիտարական մաքրմանը (6):

Փրկարարական աշխատանքներից են՝

- խոցված օջախ տանող երթուղիների և աշխատավայրերի հետախուզում,
- տուժած բնակչության որոնում, փրկում, առաջին օգնության ցուցաբերում. կարիքավորներին բժշկական հիմնարկներ տեղափոխում,
- վտանգավոր տարածքներից մարդկանց, կենդանիների, նյութական և մշակութային արժեքների ժամանակավոր տեղափոխում անվտանգ տարածքներ,
- պարետային ծառայության կազմակերպում, դիակապտության դեպքերի կանխում,
- նյութական արժեքների պահպանության կազմակերպում,
- մահացածների հայտնաբերում, ճանաչում, հուղարկավորում,
- փաստաթղթերը կորցրած քաղաքացիների հաշվառում,
- հրդեհների մեկուսացում և հրդեհաշիջում,
- սանիտարահիգիենիկ մշակումների իրականացում և այլն:

Անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքներից են՝

- փլուզված պաշտպանական կառույցների բացում,
- անհապաղ բացման անհնարինության դեպքում առաջնահերթ օդի մատակարարում (փլատակներում երթանցքների բացում),
- զագի, ջրի տեխնոլոգիական ցանցերում վթարների մեկուսացում,
- ավտոճանապարհների, կամուրջների, երկաթուղու ժամանակավոր վերականգնում,
- վտանգավոր օջախների տեղայնացում կամ վերացում,
- վնասված կոմունալ էներգետիկ ցանցերի, կապի համակարգերի ժամանակավոր վերականգնում,
- վթարված շինությունների ամրացում կամ փլուզում և այլն

4.4.1. ՔՊ ուժերը և մասնակցությունը փրկարարական և անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքներին

ԱԻ-ում փրկարարական աշխատանքների իրականացման և առօրյա պայմաններում բնակչությանը մասնագիտացված օգնություն ցույց տալու նպատակով ստեղծվում են **փրկարար ուժեր, ՔՊ ստորաբաժանումներ, ծառայություններ և կազմավորումներ:** ՔՊ միջոցառումներում ներգրավվում են նաև **հասարակական փրկարար միավորումները:**

ՔՊ ստորաբաժանումները ընդգրկվում են ՀՀ պաշտպանության բնագավառում լիազորված մարմնի կազմում, համարվում են մշտական պատրաստության զինվորական ստորաբաժանումներ և նախատեսված են քաղաքացիական պաշտպանության միջոցառումների իրականացման համար (6):

ՔՊ ծառայությունները՝ պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններում, կազմակերպություններում իրենց իրավասության

սահմաններում քաղաքացիական պաշտպանության միջոցառումների իրականացումն ապահովելու համար ստեղծված ծառայություններ են (6):

ՔՊ կազմավորումները՝ համայնքներում, կազմակերպություններում ստեղծվող կազմավորումներ են, որոնք հանդերձավորված են փրկարարական և անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքների համար նախատեսված տեխնիկայով, հանդերձանքով, գույքով ու նախատեսված են իրականացնելու քաղաքացիական պաշտպանության միջոցառումներ և չեն մտնում ՀՀ զինված ուժերի և այլ զորքերի կազմի մեջ (6): Կազմակերպությունների կազմավորումներն ստեղծվում են կազմակերպություններում (անկախ կազմակերպաիրավական ձևից): Համայնքի ՔՊ պետի որոշմամբ կազմակերպությունների կազմավորումները, բացի հատուկ, կարևորագույն նշանակության օբյեկտներից, կարող են միավորվել համայնքային կազմավորումներում: Մարզի (Երևան քաղաքի) ՔՊ պետի որոշմամբ ՔՊ համայնքային կազմավորումները կարող են միավորվել մարզային կազմավորումներում: ՔՊ ծառայությունների կազմավորումները նախատեսված են հանրապետական, մարզային, համայնքային և կազմակերպության մակարդակներում ՔՊ միջոցառումներն ապահովելու նպատակով:

Փրկարար ուժերը ստեղծվում են ԱԻ-ում փրկարարական աշխատանքների իրականացման և առօրյա պայմաններում բնակչությանը մասնագիտացված օգնություն ցույց տալու նպատակով պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների ու կազմակերպությունների կազմում, որոնք գտնվում են մշտական պատրաստության վիճակում և գործում են կենտրոնացված կառավարման սկզբունքով (5): ԱԻ-ում փրկարարական և անհետաձգելի վերականգնողական աշխատանքներ կատարելիս փրկարարները կարող են՝

ա) անարգել մուտք գործել ձեռնարկությունների, հիմնարկների, կազմակերպությունների տարածքները, իսկ բացառիկ դեպքերում՝ քաղաքացիների բնակարանները, բ) բացել փակ դռները, պատուհանները, քանդել ցանկապատերը, շինությունները, եթե դրանց առկայությունը խոչընդոտում է փրկարարական աշխատանքների կատարմանը կամ կարող է առաջացնել ծանր հետևանքներ (5):

ՀՀ տարածքից դուրս առաջացած ԱԻ-ի հետևանքների վերացման աշխատանքներում փրկարար ուժերն ընդգրկվում են ՀՀ կառավարության որոշմամբ:

Փրկարարական աշխատանքների հետևանքով պատճառված վնասների փոխհատուցման կարգը սահմանում է ՀՀ կառավարությունը: Փրկարարների կատարած ապօրինի գործողությունների, ինչպես նաև պետական և ծառայողական կամ առևտրային գաղտնիքի հրապարակման համար նրանց պատասխանատվությունը սահմանվում է ՀՀ օրենսդրությամբ (5):

4.4.2. Փրկարարական և անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքների իրականացման փուլերը

Փրկարարական և անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքների կազմակերպման համար ՀՀ կառավարությանը, պետական կառավարման տարածքային և տեղական կառավարման մարմիններին կից ստեղծվում են՝ **ԱԻ - հանձնաժողովներ**, որին կից կազմավորում են մշտական գործող **աշխատանքային մարմին (5)**: Աշխատանքային մարմնի կազմում որպես կանոն ընդգրկվում են ՔՊ համապատասխան ծառայությունների ղեկավար ծառայողներ և մասնագետներ:

Համաձայն վիճակագրական տվյալների՝ ԱԻ առաջացումից հետո առաջին մեկ ժամում օգնության

բացակայության պարագայում մահանում են ծանր վիրավորների մոտ 40 %-ը, երեք ժամ անց՝ 60 %-ը, իսկ 6 ժամ անց՝ 95 %-ը (3): Հայտնի է նաև, որ մարդը առանց ջրի կարող է դիմանալ միջև 7 օր, իսկ առանց սննդի՝ միջև 30 օր:

Փրկարարական և անհետաձգելի

վթարավերականգնողական աշխատանքներ կատարվում են հնարավոր սեղմ ժամկետներում և փուլերով (1):

Առաջին փուլում իրականացվում են խիստ առաջնային փրկարարական և անհետաձգելի

վթարավերականգնողական աշխատանքներ, որոնք կապված են բնակչության առաջնահերթ պաշտպանության հետ, այդ թվում՝ **խոցող գործոնների վերացում և փրկարարական աշխատանքների նախապատրաստում (1):** Իրականացվում են հետևյալ միջոցառումները.

1. բնակչության ազդարարում,
2. խոցված օջախի հետախուզում,
3. իրադրության գնահատում,
4. բնակչության տարահանում, պատսպարում ՔՊ կառույցներում,
5. ՔՊ անհատական պաշտպանական միջոցների կիրառում,
6. առաջին օգնության կազմակերպում,
7. խոցված օջախի տեղայնացում,
8. հակահրդեհային համալիր միջոցառումներ,
9. վտանգավոր օբյեկտների տեխնոլոգիական գործընթացի փոփոխում կամ դադարեցում,
10. հասարակական կարգի պահպանում և այլն:

Երկրորդ փուլում շարունակվում են առաջին փուլի միջոցառումները, որոնք համալրվում են նոր գործառնություններով, ուղղված ԱԻ-ի հետևանքների վերացմանը (1), այդ թվում՝

1. հրդեհի օջախներին, փլուզված պաշտպանական կառույցներին, այլ վթարավերականգնողական աշխատանքների աշխատատեղերին հնարավորինս մոտենալու նպատակով ճանապարհների բացում,

2. ջրի, կոյուղու, գազի, էլեկտրաէներգետիկ տեխնոլոգիական ցանցերում վթարների մեկուսացում,
3. վարակազերծում (վնասազերծում), սանիտարական մշակումներ,
4. տուժած բնակչության որոնում, փրկում, առաջին օգնության ցուցաբերում և այլն:

4.4.3. Վարակազերծում և սանիտարական մշակում (վնասազերծում)

Վարակազերծումը տարածքի, շինությունների, տեխնիկայի, ջրային ռեսուրսի, պարենային հումքի, սննդամթերքի և անասնակերի ռադիոակտիվ, վտանգավոր քիմիական նյութերով աղտոտման, վարակիչ հիվանդությունների հարուցիչներով ախտահարման նվազեցումն է մինչև սահմանային թույլատրելի նորմերը՝ ապակտիվացման, գազազերծման, ախտահանման և թունազերծման եղանակներով (18):

Սանիտարական մշակումը (վնասազերծում) ռադիոակտիվ, վտանգավոր քիմիական նյութերով աղտոտված, վարակիչ հիվանդությունների հարուցիչներով վարակված մարդկանց մաշկային ծածկույթի և լորձաթաղանթների մեխանիկական մաքրումն ու լվացումն է, ինչպես նաև արտակարգ իրավիճակների գոտուց դուրս գալուց առաջ հագուստի և կոշիկների վարակազերծումը (մասնակի սանիտարական մշակում):

Գազազերծումը (դեգազացիա) թունավոր նյութերի վնասազերծումն է դրանց քայքայման, չեզոքացման, հեռացման միջոցով՝ կիրառելով քիմիական, ֆիզիկաքիմիական և կամ մեխանիկական մեթոդներ:

Ապակտիվացումը (դեգակտիվացիա) որևէ մակերեսից կամ միջավայրից ֆիզիկաքիմիական կամ մեխանիկական եղանակով ռադիոակտիվ տարրերի լրիվ կամ մասնակի հեռացումն է:

Ախտահանումը (դեզինֆեկցիա) ախտածին

միկրոօրգանիզմների և դրանց արտադրած տոքսինների ոչնչացումն է քիմիական, ֆիզիկական, մեխանիկական եղանակներով:

4.4.3.1. Վարակազերծման ու վնասազերծման

գործընթացում ներգրավված մամիներ և գործառույթներ

Ճառագայթային, քիմիական և մանրէաբանական միջոցների վնասազերծումն ու վարակազերծումն իրականացվում է ՀՀ կառավարության 17 հոկտեմբերի 2012 թվականի N 1297-Ն որոշումով սահմանված «Ք Պ վտանգավոր տարածքների բացահայտման, ճառագայթային, քիմիական և մանրէաբանական միջոցներից վնասազերծման ու վարակազերծման կարգի» համաձայն:

ՔՊ-ի վտանգավոր տարածքների ճառագայթային, քիմիական և վարակիչ հիվանդությունների հարուցիչներից վարակազերծման ու վնասազերծման գործընթացում ներգրավվում են հետևյալ մամիները՝

- ՀՀ ԱԻ նախարարություն,
- ՀՀ պաշտպանության նախարարություն,
- ՀՀ առողջապահության նախարարություն,
- ՀՀ գյուղատնտեսության նախարարություն:

Վարակազերծման ու վնասազերծման գործընթացը ներառում է հետևյալ գործառույթները՝

1) վարակազերծման ուղղությամբ՝

ա. վարակազերծման անցկացման վայրերի ու աշխատանքի ծավալների որոշման աշխատանքների իրականացում,
բ. գազազերծում (դեգազացիա),
գ. ապաակտիվացում (դեզակտիվացիա),
դ. ախտահանում (դեզինֆեկցիա),
ե. սպառազինության և տեխնիկայի մասնակի ու լիակատար հատուկ մշակում՝ համապատասխան տեխնիկական միջոցների և նյութերի կիրառմամբ,
զ. ճառագայթային, քիմիական ու մանրէաբանական միջոցներից շրջակա միջավայրի օբյեկտների(մթնոլորտ,

ջրեր, հողեր, ընդերք, կենդանական և բուսական աշխարհ), պարենային հումքի, սննդամթերքի, անասնակերի վարակազերծում համապատասխան տեխնիկական միջոցների և նյութերի կիրառմամբ,

է. ճառագայթային, քիմիական ու մանրէաբանական միջոցներից վարակազերծման աշխատանքների ընթացքում անձնակազմի անհատական պաշտպանության ապահովման միջոցառումների իրականացում:

2) Վնասազերծման ուղղությամբ՝

ա. վնասազերծման անցկացման վայրերի ու աշխատանքի ծավալների որոշման աշխատանքների իրականացում,

բ. բնակչության, ինչպես նաև փրկարարական և այլ անհետաձգելի աշխատանքներում ներգրավված ուժերի մասնակի սանիտարական մշակում հատուկ նյութերի կիրառմամբ,

գ. բնակչության, փրկարարական և այլ անհետաձգելի աշխատանքներում ներգրավված անձնակազմի ռադիոակտիվ, վտանգավոր քիմիական նյութերով աղտոտված, ախտածին միկրոօրգանիզմներով վարակված մաշկաձածկույթի և լորձաթաղանթների մեխանիկական մաքրում ու լվացում, լիակատար սանիտարական մշակում ցնցուղարաններում, բաղնիքներում, հատուկ կահավորված հարթակներում,

դ. արտակարգ իրավիճակի գոտուց դուրս գալուց առաջ հագուստի և կոշիկների հատուկ մշակում,

ե. վնասազերծման աշխատանքներում ներգրավված անձնակազմի անհատական և բժշկական պաշտպանության ապահովման միջոցառումների իրականացում,

զ. վնասազերծման անցկացման վայրերում գտնվող բնակչության անհատական պաշտպանության և բժշկական օգնության ապահովման միջոցառումների իրականացում:

4.5. Արտակարգ իրավիճակների և պատերազմի ժամանակ բնակչության ազդարարման կարգը

Մեկնաբանվող հարցեր՝

1. ԱԻ-ում և ռազմական դրության ժամանակ կիրառվող ազդարարման ազդանշաններ,
2. ԱԻ-ում և ռազմական դրության ժամանակ ազդարարման ազդանշանների հաղորդման կարգը,
3. բնակչության գործողությունները «Օդային տազնապ» և «Օդային տազնապի ավարտ», ազդանշանների ազդարարման դեպքում:

Ուսուցման նպատակը՝

1. ունկնդիրներին իրազեկել ԱԻ-ում և ռազմական դրության ժամանակ ազդարարման ազդանշաններին և նրանց հաղորդման կարգին:

Ուսումնական արդյունք՝

1. ներկայացնել ազդարարման ազդանշանները և նրանց հաղորդման կարգը,
2. մեկնաբանել «Օդային տազնապ» ազդանշանի դեպքում բնակչության գործողությունները:

Կատարման չափանիշներ՝

1. ճիշտ է ներկայացնում ԱԻ-ում և պատերազմի ժամանակ կիրառվող ազդարարման ազդանշանները և նրանց հաղորդման կարգը,
2. կարողանում է հակիրճ ներկայացնել բնակչության գործողությունները «Օդային տազնապ» և «Օդային տազնապի ավարտ» ազդանշանների ազդարարման դեպքում:

ՀՀ տարածքում ԱԻ-ի ու ռազմական դրության պայմաններում և հակառակորդի հանկարծակի հարձակման դեպքում բնակչությանն ազդարարելու գործընթաց իրականացվում է «ՀՀ տարածքում ԱԻ առաջացման մասին բնակչության ազդարարման» կարգի համաձայն՝

հաստատված ՀՀ Կառավարության 3 նոյեմբերի 2005 թվականի N 1925-Ն որոշումով: Ըստ այդ որոշման՝ ռազմական դրության և հակառակորդի հանկարծակի հարձակման պայմաններում կիրառվում են «Օդային տազնապ», «Օդային տազնապի ավարտ», «Ճառագայթային վտանգ» և «Քիմիական տազնապ», իսկ ԱԻ-ի առաջացման սպառնալիքի կամ ծագման դեպքում՝ «Ճառագայթային վտանգ», «Քիմիական տազնապ» և «Աղետալի ջրածածկման վտանգ» ազդանշանները: ՀՀ-ի դեմ ռազմական գործողությունների սկսման կամ զենքի կիրառման ակնհայտ սպառնալիքի դեպքում տրվում է «Հակառակորդի հարձակման սպառնալիք» ազդանշանը:

Ազդարարման ազդանշանները տրվում են ազդարարման համակարգով, որը հրահանգ է կառավարման մարմիններին, ՔՊ շտաբներին, ծառայություններին, ուժերին և բնակչությանը՝ համապատասխան միջոցառումներ իրականացնելու համար: Ազդանշանները տրվում են կապի և ազդարարման բոլոր միջոցներով, այդ թվում շարժական բարձրախոսային սարքերի օգնությամբ, միացվում են էլեկտրաշահկները և տրվում է անընդհատ («Օդային տազնապ» ազդանշանի դեպքում՝ տատանվող), երկարատև (3 բուպե տևողությամբ) ձայնային ազդանշան (14): Միաժամանակ կապի միջոցներով՝ 2-3 բուպե տևողությամբ տրվում են հետևյալ բովանդակությամբ համապատասխան տեքստային հաղորդագրություն. «Ուշադրություն, ուշադրություն և տվյալ ազդանշանը...»: Անհրաժեշտության դեպքում հաղորդագրությունը լրացվում է «Վտանգ է սպառնում հետևյալ բնակավայրերին...» բառերով: Շչակի անընդհատ հնչեցման (ձայնային ազդանշան) դեպքում՝ «Ուշադրություն բոլորին», բնակչությունը պարտավոր է միացնել հեռուստացույցները և ռադիոընդունիչները, որոնցով ԱԻ և ՔՊ մարմինների կողմից տրվում են հաղորդագրություններ տվյալ տարածքում սպառնալիքի կամ դրա առաջացման և բնակչության գործողությունների

մասին և գործեն համաձայն այդ հաղորդագրությունների:

4.5.1. Բնակչության գործողությունը «Օդային տազնապ» և «Օդային տազնապի ավարտ» ազդանշանների ազդարարման դեպքում

Լսելով ազդանշանը անմիջական սպառնալիքի վերաբերյալ՝ անհրաժեշտ է գործել արագ և գործնական, առանց խուճապի: Հարկավոր է նախօրոք գիտենալ բնակավայրի, աշխատավայրի հարևանությամբ տեղաբախշված պաշտպանական կառույցները, ինչպես նաև տիրապետել վարքագծի կանոններին նմանատիպ իրավիճակներում:

«Օդային տազնապ» ազդանշանի դեպքում բնակչությունը պարտավոր է՝

ա) աշխատավայրում գտնվելու դեպքում.

1. գործել տվյալ ձեռնարկության ՔՊ պլանով նախատեսված հրահանգի պահանջներին համապատասխան,
2. անջատել ներքին և արտաքին լուսավորությունը (գիշերային ժամերին)՝ բացառությամբ քողարկված լուսավորության լուսարձակների,
3. ՔՊ անհատական պաշտպանական միջոցները բերել պատրաստի վիճակի,
4. հնարավորինս արագ տեղափոխվել պաշտպանական կառույց,
5. տրանսպորտային միջոցների վարորդները պարտավոր են անմիջապես կայանել, բացել դռները, հանգցնել շարժիչը, անջատել էլեկտրականությունը և ուղևորների հետ պատասպարվել մոտակա պաշտպանական կառույցում (մետրոպոլիտենի կայարան, գետնանցում), հարմարվել տեղանքի ռելիեֆին, օգտագործել ցածր աղյուսե կամ քարե ցանկապատերը, ջրատարերը, կոճղերը, թմբերը և այլն: Անհրաժեշտ է հիշել, որ շենքերի, շինությունների պատերի տակ պատասպարվել չի կարելի. նրանք կարող են փլվել (32):

բ) Հասարակական վայրում գտնվելիս՝

1. ուշադրությամբ լսել կառավարիչի հաղորդումը մոտակա պաշտպանական կառույցի տեղաբաշխման վայրի մասին և կազմակերպված տեղափոխվել այնտեղ,
2. ձեռքի տակ եղած անհատական պաշտպանական միջոցները բերել պատրաստի վիճակի,
3. հրահանգի բացակայության դեպքում օգտվել մակերևութապատկերի հնարավորությունից, բնական և արհեստական թաքստոցներից (32):

գ) Բնակարանում գտնվելու դեպքում՝

1. անջատել գազամատակարարման, էլեկտրամատակարարման, ջրամատակարարման համակարգերը,
2. վերցնել ՔՊ անհատական պաշտպանական միջոցներ, աղետի ճամպրուկ (3 օրվա սնունդ, ջրի պաշար, առաջին անհրաժեշտության իրեր, հիգիենայի պարագաներ, դեղամիջոցներ, անձը հաստատող փաստաթուղթ),
3. զգուշացնել հարևաններին ազդարարման մասին,
4. հնարավորինս արագ տեղափոխվել մոտակա պաշտպանական կառույց (32):

«Օդային տագնապի ավարտ» ազդարարման ազդանշանը տրվում է բնակչությանը իրազեկելու թշնամու կողմից օդային հարձակման վտանգի վերացման մասին: Այս ազդանշանի ազդարարումից հետո բնակչությունը գործում է ըստ ստեղծված իրավիճակի.

1. ծառայողները, ուսանողները, բանվորները վերադառնում են աշխատավայրեր կամ ընդգրկվում են վթարավերականգնողական աշխատանքների կատարմանը,
2. չաշխատող բնակչությունը վերադառնում է իրենց բնակարաններ և հետևում ըստ իրավիճակի տրվող հրահանգներին, այդ թվում՝ հնարավոր ռեժիմային միջոցառումներից բխող հրահանգներին,
3. բնակչությունը պետք է գտնվի զգոն վիճակում՝ թշնամու հնարավոր նոր հարձակմանը դիմակայելու համար (32):

Բնակչությանն ազդարարելու մասին որոշումներն ընդունում են՝

ա) հատուկ, կարևորագույն նշանակության օբյեկտներում արտակարգ իրավիճակի առաջացման սպառնալիքի և ծագման դեպքում տվյալ կազմակերպության ղեկավարը:

ՀԱԷԿ-ից ԱԻ-ի առաջացման սպառնալիքի և ծագման դեպքում: **ՀԱԷԿ-ին հարակից մինչև 5 կիլոմետրանոց գոտում** (նախահարձակ պաշտպանական միջոցառումների գոտի) նախնական ազդարարման մասին որոշումն ընդունում է **ՀԱԷԿ-ի հերթափոխի պետը, ՀԱԷԿ-ին հարակից 5-10 կիլոմետրանոց գոտում** (շտապ պաշտպանական միջոցառումների պլանավորման գոտի) գտնվող բնակչությանն ազդարարելու մասին որոշումը՝ **ՀՀ վարչապետը (14):**

Ջրամբարի պատվարի փլուզման դեպքում ազդարարման մասին որոշումն ընդունվում է **ԱԻ և ՔՊ ոլորտի օպերատիվ ծառայության կողմից,**

բ) համայնքային նշանակության ԱԻ-ի առաջացման սպառնալիքի և ծագման դեպքում՝ տվյալ **համայնքի ղեկավարը,**

գ) մարզային նշանակության ԱԻ-ի առաջացման սպառնալիքի և ծագման դեպքում՝ տվյալ **մարզպետը** (Երևանում՝ Երևանի քաղաքապետը),

դ) հանրապետական նշանակության ԱԻ-ի առաջացման սպառնալիքի և ծագման դեպքում՝ **ՀՀ վարչապետը,**

ե) ռազմական դրության ժամանակ հակառակորդի հանկարծակի հարձակման, հակառակորդի հարձակման սպառնալիքի դեպքում՝ լիազոր մարմնի օպերատիվ ծառայությունը ՀՀ պաշտպանության նախարարության հակաօդային պաշտպանության և ավիացիայի միացյալ հրամանատարական կետից ստացված տեղեկատվության հիման վրա (14):

Բնակչության ազդարարումն իրականացնում են՝

ա) հատուկ և կարևորագույն նշանակության օբյեկտներում

ԱԻ-ի առաջացման սպառնալիքի և ծագման դեպքում՝ տվյալ կազմակերպության ղեկավարը **լիազոր մարմնի օպերատիվ ծառայության միջոցով** (14):

ՀԱԷԿ-ում ԱԻ-ի առաջացման սպառնալիքի և ծագման դեպքում **նախահարձակ** պաշտպանական միջոցառումների **գոտում** գտնվող բնակչության նախնական ազդարարումն իրականացնում է **ՀԱԷԿ-ի հերթապահ ծառայությունը**, իսկ **շտապ պաշտպանական միջոցառումների** պլանավորման **գոտում** բնակչության ազդարարումը՝ **լիազոր մարմնի օպերատիվ ծառայությունը**:

բ) համայնքային նշանակության ԱԻ-ի առաջացման սպառնալիքի և ծագման դեպքում՝ տվյալ **համայնքի ղեկավարը**:

գ) մարզային նշանակության ԱԻ-ի առաջացման սպառնալիքի և ծագման դեպքում՝ **լիազոր մարմնի օպերատիվ ծառայությունը**:

դ) հանրապետական նշանակության ԱԻ-ի առաջացման սպառնալիքի և ծագման դեպքում՝ **լիազոր մարմնի օպերատիվ ծառայությունը**:

ե) ռազմական դրության ժամանակ հակառակորդի հանկարծակի հարձակման, հակառակորդի հարձակման սպառնալիքի դեպքում՝ **լիազոր մարմնի օպերատիվ ծառայությունը** (14):

4.6. Արտակարգ իրավիճակներում բնակչության բարոյահոգեբանական պատրաստվածություն

Մեկնաբանվող հարցեր՝

1. ԱԻ-ում բնակչության բարոյահոգեբանական վիճակի վրա ազդող գործոններ,
2. ԱԻ-ում բնակչության բարոյահոգեբանական խանգարումների դրսևորումները,
3. բարոյահոգեբանական պատրաստվածության հիմնական ուղղությունները,

4. **խուճապի դրսևորման ձևերը և դիմակայումը:**

Ուսուցման նպատակը՝

1. ունկնդիրներին իրազեկել ԱԻ-ում հոգեխանգարիչ գործոնների ազդեցության արդյունքում հնարավոր դրսևորվող բարոյահոգեբանական խանգարումներին և նրանց հաղթահարման հնարքներին:

Ուսումնական արդյունք՝

1. ներկայացնել ԱԻ-ում բնակչության բարոյահոգեբանական հնարավոր խանգարումները, խուճապի դրսևորման և հաղթահարման ձևերը, հնարքները:

Կատարման չափանիշներ

1. Ճիշտ է ներկայացնում ԱԻ-ում մարդկանց բարոյահոգեբանական վիճակի վրա ազդող գործոնները և հոգեբանական խանգարումների դրսևորումները ըստ ժամանակահատվածի,
2. կարողանում է հակիրճ ներկայացնել բնակչության բարոյահոգեբանական պատրաստվածության հիմնական ուղղությունները,
3. Ճիշտ է ներկայացնում ԱԻ-ում հնարավոր խուճապի դրսևորման ձևերը և դիմակայման հնարքները:

ԱԻ-ում բնակչության բազմաքանակ խմբեր ենթարկվում են տարաբնույթ բացասական գործոնների ազդեցության, որոնց հետևանքով մարդկանց մոտ կարող են առաջանալ հոգեբանական լարվածություն և հուժկու էմոցիոնալ պոռթկումներ: Որպես կանոն, դա ուղեկցվում է կամ՝ ներքին կենսական ռեսուրսների մոբիլիզացիայով, կա՛մ առողջության վատթարացմամբ, կա՛մ ֆիզիոլոգիական և հոգեբանական սթրեսներով: Արդյունքում մարդկանց մոտ կարող են դրսևորվել բարոյական վարքագծի և հոգեկան ոլորտի որոշակի շեղումներ: Ինչպես նմանատիպ դեպքերում, այնպես էլ ցանկացած ծայրահեղ իրավիճակում որոշիչ դեր է կատարում անհատի հոգեբանական կայունությունը, որը ցույց է տալիս կրիտիկական

իրավիճակներում անձի պատրաստվածության աստիճանը: Աղետներին դիմակայելու համակարգում կարևորագույն գործոններից մեկը անվիճելիորեն հանդիսանում է բնակչության բարոյահոգեբանական պատրաստվածությունը:

4.6.1. ԱԻ-ում բնակչության բարոյահոգեբանական վիճակի վրա ազդող գործոններ

ԱԻ-ում բնակչության բարոյահոգեբանական վիճակի վրա ազդող **հոգեխանգարիչ գործոնները**, ըստ առաջացրած հետևանքների, կարելի է պայմանականորեն բաժանել երեք խմբի: **Առաջին** խմբում ընդգրկվում են գործոններ, որոնք մարդկանց մոտ առաջացնում են **ֆիզիոլոգիական խանգարումների** հետ կապված բարոյահոգեբանական վիճակի խաթարումներ: Այդպիսի գործոնների թվին են պատկանում **պայթյունը, հրդեհները, շինությունների փլուզումները, ռադիոակտիվ ճառագայթները, ուժեղ ներգործող թունավոր նյութերը, ախտածին բակտերիաները** և այլն: **Երկրորդ** խմբում ընդգրկվում են գործոններ, որոնք կապված են **ունեցվածքի և հարազատների կորստի, իր և իր բարեկամների, մտերիմների ճակատագրի նկատմամբ անհանգստության, զգացմունքների** հետ: **Երրորդ** խմբի **հոգեխանգարիչ գործոնները** պայմանավորված են **անկարողության, անորոշության զգացման** հետ, որոնք առաջանում են հիմնականում տեղեկատվության պակասի, բացասական, իսկ երբեմն ստահող տեղեկատվության, փրկարարական և անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքների անարդյունավետ կազմակերպման արդյունքում:

4.6.2. ԱԻ-ում բնակչության բարոյահոգեբանական խանգավորումների դրսևորումները ըստ ժամանակահատվածի

ԱԻ-ի առաջացման պահից սկսած, ըստ անցնող

ժամանակահատվածի և դրսևորվող պայմանների, առանձնացվում է **բարոյահոգեբանական խանգարումների դրսևորման երեք շրջան: Առաջին շրջանը** պայմանավորված է ազդող գործոնների հանկարծակիությամբ (երկրաշարժ, պայթյուն, հրդեհ, փոթորիկ և այլն): Այն սկսվում է վտանգի ծագման պահից և **տևում է մինչև 5 ժամ:** Մարդկանց մոտ սթրեսի հետևանքով ձևավորվում են **վախի, խուճապի ռեակցիաներ (1):** **Երկրորդ շրջանը** իր դրսևորման ժամանակահատվածով համընկնում է **փրկարարական աշխատանքների իրականացման շրջանի** հետ: Այս շրջանում մարդկանց սթրեսային իրավիճակները պայմանավորված են հարազատների, մտերիմների, ունեցվածքի կորստի հետ (1): **Երրորդ շրջանը** սկսվում է ԱԻ-ի վերացումից հետո, որին բնորոշ է **հետվնասվածքային սթրեսային խանգարումները՝** ուղեկցվող վախով և անկարողության զգացումով (1):

4.6.3. ԱԻ-ում հնարավոր խուճապի դրսևորման ձևերը և դիմակայման հնարքները

Մարդկանց վրա ներազդող հոգեխանգարիչ պայմանները հնարավոր չէ կարճ ժամանակահատվածում ամբողջովին վերացնել, սակայն տուժածների հետ հոգեբանական և սոցիալական աշխատանքի միջոցով կարելի է զգալիորեն բարձրացնել մարդկանց հոգեբանական տոկունությունը (1): **Բնակչության հոգեկան վիճակի բարելավմանը մեծապես նպաստում է փրկարարական և անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքների ճիշտ և ժամանակին կազմակերպումը:** Տուժածներին պետք է վերաբերվել հարգանքով, **ցավակցության զգացումով:** Բսկ այն դեպքերում, երբ մարդիկ խուճապային իրավիճակում են, անհրաժեշտ է դրսևորել խիստ և **հրամայական կեցվածք (1):** **Խուճապը վախի զգացում է,** որը պատում է մարդկանց խմբերին, այնուհետև, փոխանցվելով շրջապատողներին, **վերածվում է անկառավարելի գործընթացի:** Մարդկանց մոտ

հաճախ տեղի է ունենում իրադրության ընկալման գերզգայնության բարձրացում, սեփական արարքի նկատմամբ պատասխանատվության նվազում: Անձը կարող է այդ իրավիճակում ոչ սթափ գնահատել սեփական արարքը և սխալ վերլուծել ստեղծված դրությունը: **Վախը կաշկանդում է մարմինը, առաջացնում է քրտնարտադրություն, աչքերը պղտորվում են, մարդը արգելակվում է, չի կարողանում ակտիվ գործողություններ ձեռնարկել: Վախի արտահայտման ձևերից է խուճապը:** Արտաքնապես այն կարող է լինել **ակտիվ կամ պասիվ:** Ակտիվ խուճապի դեպքում մարդը կատարում է բնագոյային պաշտպանական գործողություններ՝ արագ փախուստ, թռիչք, բղավոց և այլն, որոնք գիտակցաբար չեն հսկվում: Պասիվ կամ մեղմ խուճապը դրսևորվում է մարդու լրիվ անօգնական, անելանելի, դատապարտված վիճակի տեսքով: Մարդը դադարում է դիմադրել և հաճախ զոհվում է: Խուճապի առաջացմանը կարող է նպաստել նաև հավաստի տեղեկատվության բացակայությունը: Այս բացը անմիջապես լրացվում է ստահող, շինծու լուրերով, ասեկոսեներով ու ականատեսների չափազանցած պատմություններով:

Վելուծությունները ցույց են տալիս, որ դա ոչ միայն մարդկանց անիրազեկության հետևանք է, այլև ԱԻ-ում գործելու նրանց ցածր պատրաստության, հոգեբանական կոփվածության բացակայության արդյունք: Մարդկանց մեջ միշտ էլ գտնվում են թույլ անձնավորություններ՝ խուճապահար, պանիկյոր: Նրանց նույնիսկ աննշան վտանգը թվում է չափազանց վիթխարի: Խուճապի առաջացմանը անուղղակիորեն կարող են հանգեցնել նաև կոլեկտիվում կազմակերպվածության, կարգապահության բացակայությունը, դեկավար մարմնի թուլությունը, միջանձնային անվստահությունը, վատ փոխհարաբերությունները:

Խուճապի կանխման համար նախ և առաջ անհրաժեշտ է հավաստի տեղեկություններ հաղորդել ստեղծված

իրադրության մասին: Հարկավոր է խուճապը անհապաղ, վճռականորեն կանխել, երբ այն դեռ մակերեսային բնույթ ունի և մեծ զանգվածներ չի համակել: Դրա համար առաջին հերթին պետք է մարդկանց ուշադրությունը թեկուզև կարճ ժամանակով շեղել վախի աղբյուրից: Հնարավորություն տալ մարդկանց, որ մի պահ ուշքի գան և փորձեն ամբոխի կառավարումը վերցնել իրենց ձեռքը, ջանալ շեղել նրանց ուշադրությունը խուճապահար լիդերի գործողություններից մեկ այլ՝ սթափ խորհող, սառնասրտությամբ օժտված մարդու վրա: Հարկ է հիշել, որ մարդը օժտված է կամային ուժեղ բնավորությամբ, իշխելու ունակությամբ և հենց որ այդ կրիտիկական պահը անցնի, պետք է բոլորին անհապաղ ընդգրկել վտանգի դեմ պայքարի մեջ: Սովորաբար, երբ վախի առաջին զգացումը անցնում է, մարդկանց մեծ մասի մոտ նկատվում է բարձր ակտիվություն, կարծես իր մեղքը քավելու ձգտում: Հենց այս հանգամանքը պետք է օգտագործել բոլորին փրկարարական աշխատանքներում ներգրավելու համար՝ յուրաքանչյուրին հանձնարարելով կոնկրետ տեղամաս: Եթե այնուամենայնիվ խուճապը համակել է զգալի թվով մարդկանց, անհրաժեշտ է նրանց բաժանել փոքր խմբերի, որոնցից յուրաքանչյուրին կառավարելը շատ ավել հեշտ կլինի: Կարևոր հանգամանք է նաև հարգարժան, հեղինակավոր մարդկանց շփումը այն մարզի, համայնքի, քաղաքի բնակչության հետ, որտեղ տեղի է ունեցել աղետը:

Բարոյահոգեբանական պատրաստվածության հիմնական ուղղությունները

Մարդկանց մոտ զարգացնել՝

1. **հոգեբանական-իմացական գործընթացներ** (ընկալում, ուշադրություն, հիշողություն, մտածողություն, խոսելու, նկարագրելու ունակություն),
2. **հոգեբանական-կամային հատկանիշներ** (վճռականություն, նախաձեռնություն, ինքնուրույնություն որոշում ընդունելու ունակություն),

3. հոգեբանական-դրական հատկություններ

(նպատակաուղղվածություն, նպատակասլացություն, չընկճվելու կամք),

4. սոցիալ-քաղաքական, պետական մոտիվներ

(ընկերասիրություն, քաղաքացիական պարտքի զգացում, թույլին օգնելու ներքին մղում, հայրենասիրություն):

Մարդկանց մոտ ձևավորել՝

1. **բարոյահոգեբանական կրթվածություն** (սառը դատելու, սեփական կարծիք ունենալու և հայտնելու համարձակություն, թույլերին օգնելու ունակություն, խուճապային իրավիճակները կանխելու կամային ունակություն),

2. **հոգեբանական կայունության զարգացում**

(չնկճվելու, չհուսալքվելու, չբարոյալքվելու, հոգեբանորեն չկոտրվելու ունակություն) (1):

4.7. Արտակարգ իրավիճակները և ռիսկի գնահատումը

Մեկնաբանվող հարցեր՝

1. սեյսմիկ ռիսկի նվազեցման ծրագիր,
2. ռիսկի բնորոշումը, գնահատումը,
3. թույլատրելի և անթույլատրելի ռիսկ, ռիսկի ընկալում:

Ուսուցման նպատակը՝

1. ուկնդիրների մոտ ձևավորել պատկերացումներ ԱԻ-ում ռիսկի գնահատման կարևորության և արդյունավետության մասին:

Ուսումնական արդյունք՝

1. ներկայացնել ԱԻ-ում ռիսկի գնահատման կարևորությունը:

Կատարման չափանիշներ՝

1. ճիշտ է սահմանում ռիսկ հասկացությունը, կարողանում է գնահատել ռիսկը,
2. ճիշտ է մեկնաբանում ընդունելի և անընդունելի ռիսկերը, կարողանում է վերլուծել ԱԻ-ում ռիսկի գնահատման

կարևորությունը,

3. կարողանում է ներկայացնել սեյսմիկ ռիսկի նվազեցմանն ուղղված գործողությունների ծրագրերը:

4.7.1. Սեյսմիկ ռիսկի նվազեցման ծրագիր

Աղետի ռիսկ առաջանում է, երբ վտանգներն ազդում են ֆիզիկական, սոցիալական, տնտեսական և շրջակա միջավայրի խոցելի գործոնների վրա և հակառակը: Թեպետ աղետների ռիսկի նվազեցման և դրանց դիմագրավելու ունակությունների մեծացման անհրաժեշտության և կարևորության գիտակցումը հետզհետե խորանում է, աղետների ու մասնավորապես ռիսկերի կառավարումն ու նվազեցումը շարունակում են մնալ, որպես կարևորագույն երաշխիքներ գլոբալ մարտահրավերներին դիմակայելու գործում: Աղետների ռիսկի նվազեցումը դիտարկվում է ամբողջ հասարակության մեջ, որպես աղետների ռիսկն ու խոցելիությունը նվազագույնին հասցնելու խնդիր: Այն ներառում է քաղաքական և տեխնիկական տեսանկյունների, ինչպես նաև մասնակցության և ռեսուրսների մոբիլիզացիայի հետ կապված բաղադրիչներ: Անցած մի քանի տարիների ընթացքում աղետների ռիսկերի նվազեցման ուղղությամբ ձեռնարկվող քայլերի խթանման կարևորությունը ճանաչվել է միջազգային և տարածաշրջանային, ինչպես նաև պետական ու տեղական մակարդակներով ընդունված հռչակագրերում և գործողությունների ծրագրերում: ՀՀ-ում 2002-2012 թթ. ընթացքում ճապոնացիների աջակցությամբ.

- գնահատվել է Երևանի սեյսմիկ վտանգը, և մշակվել մայրաքաղաքում հնարավոր ուժեղ երկրաշարժի սցենարը,
- վերլուծվել է սեյսմիկ աղետի կառավարման պլանը,
- պատրաստվել է սեյսմիկ աղետի կառավարման պլան,
- ներդրվել է Երևանում սեյսմիկ ինտենսիվության բաշխման նոր համակարգ՝ հիմնված թվով 5 ժամանակակից թվային սեյսմոգրաֆների վրա:

Սեյսմիկ ռիսկի նվազեցման հիմնական խնդիրներն են՝

ա) տարածքների խոցելիության նվազեցումը.
 բ) բնակչության իրազեկության և պատրաստվածության բարձրացումը.
 գ) պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների նախապատրաստումը սեյսմիկ ռիսկի կառավարմանը.
 դ) բնակչության վաղ ահազանգման համակարգի ստեղծումը.
 ե) բժշկական պատրաստվածությունը.
 զ) արագ արձագանքման ուժերի զարգացումը.
 է) ապահովագրության համակարգի ստեղծումը.
 ը) ուժեղ երկրաշարժից տուժած գոտու վերականգնումը և բնակչության ռեաբիլիտացիան (7):
 Սեյսմիկ ռիսկի նվազեցումն իրականացվում է սեյսմիկ ռիսկի նվազեցման համալիր պետական ծրագրերի համաձայն:

ԱԻ-ի նախարարության սեյսմիկ պաշտպանության ազգային ծառայության (ՄՊԱԾ) կողմից մշակվել է Երևանի սեյսմիկ ռիսկի քարտեզի առաջին տարբերակը, ըստ որի՝ Հարավ-արևմտյան զանգվածը գտնվում է սեյսմիկ ռիսկի բարձր գոտում: Դա պայմանավորված է հետևյալ հիմնախնդիրներով.

- շենքերի նախագծման հիմքում ընդունված սեյսմիկ վտանգի և ՄՊԱԾ - ի կողմից հաստատված ՀՀ տարածքի սեյսմիկ վտանգի նոր քարտեզում արտացոլված մակարդակների տարբերությամբ,
- տեղանքի գրունտային պայմաններով,
- բնակչության խիտ բնակեցմամբ,
- կառուցապատված շենքերի թվում 9 հարկանի կարկաս պանելային շենքերի գերակայությամբ,
- շահագործման ընթացքում բնակչության կողմից շենքերում կատարված զանգվածային բնույթի ձևափոխություններով:

ՀՀ կառավարության 2010 թվականի դեկտեմբերի 30-ի N 1760-Ն որոշման հանաձայն՝ հանձնարարվել է ՀՀ

մարզպետներին, մարզերի և բնակավայրերի (համայնքների) զարգացման ծրագրերում սահմանված կարգով ներառել սեյսմիկ ռիսկի նվազեցման միջոցառումներ:

4.7.2. Ռիսկի որոշումը գնահատումը

Ռիսկ բառը ունի ֆրանսիական ծագում, որը նշանակում է վտանգ: Գոյություն ունի ռիսի սահմանման տարբեր մոտեցումներ: Օրինակ՝

ա. ռիսկը վտանգավոր երևույթի կամ շարժընթացի հավանական դրսևորման և նրանից բխող հետևանքների համադրումն է որոշակի տարածքում, որոշակի ժամանակահատվածում:

բ. ռիսկը որոշում կայացնելու գործընթաց է հավանական անորոշության պայմաններում (1).

գ. ռիսկը տվյալ օբյեկտի նկատմամբ որևէ վտանգավոր երևույթից, շարժընթացից սպասվելիք կորուստն է.

դ. ռիսկը վտանգի և նրա խոցելիության գնահատումն է և այլն:

Ռիսկը կարող է լինել անձնական և հասարակական: Անձնական, երբ սպասվող վտանգը վերաբերվում է առանձին անհատի: Հասարակական, երբ սպասվող վտանգը վերաբերվում է երկուսից ավելի կամ մի խումբ մարդկանց (1):

Բնական աղետի ազդեցության հետևանքով անհատի վրա թողած ռիսկի մակարդակը ավելի ցածր է միևնույն աղետի՝ հասարակության վրա ունեցած ազդեցության մակարդակից: Ուստի աղետների կառավարման տեսակետից նպատակահարմար է ուղղվածությունը բևեռել հասարակության վրա, ոչ թե անհատի: Ռիսկը կարող է չափվել տնտեսական կորուստներով, մահացածների թվով կամ սեփականության ֆիզիկական ոչնչացման մակարդակով: Ռիսկի գնահատումը սպասվող ռիսկի կարևորության որոշումն է նրանց համար, ովքեր ենթակա են վտանգի: Ռիսկի գնահատումը հանդիսանում է նաև ռիսկի

ըմբռնման տարր: Ռիսկի քանակը (R) հաշվում են հետևյալ բանաձևով՝ $R = n/N$, որտեղ n -ը գոհերի թիվն է, N -ը վտանգի ենթակա բնակչության թիվն է (1):

Դիտարկումները ցույց են տալիս, որ անձնական ռիսկի չափը, երբ փոքր է 1×10^{-6} -ից, հասարակությունը առանձնապես ջանքեր չի գործադրում այն նվազեցնելու ուղղությամբ (1): Ավելին՝ շատ երկրներում այդ թիվը ընդունված է օրենքով, որպես սահման, որին պետք է ձգտել: Ցանկացած գործառույթ, որը ուղղված է էքստրեմալ իրավիճակներում մարդկանց փրկելուն, պարունակում է որոշակի ռիսկ: Ռիսկը համարվում է թույլատրելի, երբ պահպանվում են անվտանգության կանոնները, օգտագործվում են պաշտպանական միջոցներ, այլ խոսքով՝ գործադրվում են նորմերով սահմանված բոլոր միջոցները և կանոնները ռիսկը առավելագույնս նվազեցնելու համար (1): Շատ դեպքերում ռիսկի թույլատրելիության խնդիրը համադրվում է շահույթի հետ: Ռենտգենյան ճառագայթների, հակաբիոտիկների և այլ որոշակի վտանգ պարունակող միջոցների օգտագործումը ընկալվում է որպես թույլատրելի, քանի որ արդյունքը շահավետ է (2): Ուստի կարող ենք եզրակացնել, որ ռիսկի թույլատրելիության մակարդակը աճում է ուղիղ համեմատական շահույթին:

Ռիսկի նվազեցման հաջողության հիմքում կարևոր նշանակություն ունի ռիսկի ընկալումը, այսինքն՝ այն վտանգի կարևորության ըմբռնումը, որի հետ կարող է բախվել հասարակությունը: Ռիսկի ընկալումը հասարակության կողմից կրում է սուբյեկտիվ բնույթ: Դիտարկումները ցույց են տալիս, որ փորձառությունը ու կրթվածությունը, սոցիալական պատկանելիությունը կարող են ընտրողաբար ազդել ռիսկի ընկալման վրա: Ռիսկի ընկալման վրա կարող է ներգործել նաև վտանգավոր երևույթի նկատմամբ անձնական փորձը, ռիսկի որակական մակարդակը, վտանգի բնույթը (կանխատեսելիություն, կանխարգելելու հնարավորություն և այլն):

4.8. Տեղեկատվության կազմակերպումը արտակարգ իրավիճակներում

Մեկնաբանվող հարցեր՝

1. տեղեկատվության ստացումը և ազդարարումը,
2. տեղեկատվության բանկ, նախնական և ընթացիկ տվյալներ:

Ուսուցման նպատակը՝

1. ուկնդիրների մոտ ձևավորել պատկերացումներ ԱԻ-ում տեղեկատվության կազմակերպման և ազդարարման մասին:

Ուսումնական արդյունք

1. ներկայացնել ՀՀ-ում ԱԻ-ում տեղեկատվության ստացման և ազդարարման գործընթացը կանոնակարգող իրավական հիմքերը,
2. ներկայացնել ԱԻ-ում տեղեկատվության ստացման և ազդարարման կարգը և նրա կարևորությունը ճգնաժամային կառավարման գործընթացում,
3. մեկնաբանել տեղեկատվության բանկ, նախնական և ընթացիկ տվյալներ հասկացությունը:

Կատարման չափանիշներ

1. ճիշտ է ներկայացնում ԱԻ-ում տեղեկատվության ստացումը և ազդարարումը,
2. ճիշտ է մեկնաբանում տեղեկատվության բանկ, նախնական և ընթացիկ տվյալներ հասկացությունները և նրանց կիրառման արդյունավետությունը:

Տեղեկատվությունը որևէ երևույթի, իրադրության գնահատումների վերաբերյալ տվյալների ամբողջությունն է: Տեղեկատվությունը անգնահատելի տեղ է զբաղեցնում ԱԻ-ի ժամանակ. այն կենսական նշանակություն ունեցող բաղադրիչ է, որը կարող է էապես նվազեցնել մարդկանց վրա ԱԻ-ի ազդեցությունը: ԱԻ-ում տեղեկատվությունը պետք է տրվի ժամանակին և անհրաժեշտ քանակով (1): Չգիտենալով նախնական տեղեկություններ ԱԻ-ի տեսակի, ուժգնության,

վնասման օջախի վիճակի, առկա ռեսուրսների և այլնի մասին՝ անհնար է արդյունավետ իրականացնել փրկարարական և անհետաձգելի

վթարավերականգնողական աշխատանքներ խոցված օջախում: ԱԻ-ի ժամանակ ստեղծվում է տեղեկատվության բանկը, որը ունենում է նախնական և ընթացքում ստացվող, ճշգրտվող տվյալներ (1): Նախնական տվյալ է հանդիսանում ԱԻ-ի տեսակը, ուժգնությունը, վնասված օջախի մասշտաբները, վտանգի գոտում հայտնված մարդկանց թվաքանակը, վտանգավոր օբյեկտների առկայությունը, ավտոճանապարհների, կապուղիների և կամուրջների վիճակը, նախնական վնասի չափերը, նյութատեխնիկական ապահովածության վիճակը և այլն: Տեղեկատվությունը ճշգրտվում է փրկարարական և անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքներին զուգընթաց:

ՀՀ կառավարության թիվ 51 կարգադրության (14.02.1994թ.) համաձայն՝ ՀՀ-ում ԱԻ-ի վերաբերյալ օպերատիվ տեղեկատվության հավաքման, հաղորդման և կենտրոնացման գործընթացի ապահովումը, ինչպես նաև այդ աշխատանքների կազմակերպումն ու իրականացումը դրված է ԱԻՆ-ի վրա:

Տեղեկատվությունը ստացվում է ՔՊ մարմիններից, քաղաքացիներից, տեղական ինքնակառավարման մարմիններից, հետախուզության միջոցով և այլ ճանապարհով (1): ՀՀ պետական կառավարման հանրապետական, տարածքային, տեղական ինքնակառավարման մարմիններին հանձնարարված է ստեղծել շուրջօրյա գործող օպերատիվ կառավարման շտաբներ: Կապի համակարգում “Срела” նշանաբանով արտոնյալ կապ է տրամադրվում ՀՀ ԱԻՆ-ը, պաշտպանության նախարարությանը, ոստիկանությանը, ազգային անվտանգությանը, առողջապահության, գյուղատնտեսության, տրանսպորտի, էներգետիկայի նախարարություններին, ավիացիայի գլխավոր

վարչությանը, օպերատիվ կառավարման շտաբների հերթապահներին (1):

Ճիշտ և ժամանակին ստացված ստույգ տեղեկատվությունը թույլ է տալիս՝

- ժամանակին ազդարարել բնակչությանը,
 - արդյունավետ կազմակերպել բնակչության պաշտպանությունը,
 - ճիշտ օգտագործել առկա ռեսուրսները,
 - որոշել, թե ինչպիսի որակավորման փրկարարական ուժեր ուղղորդել խոցված օջախ,
 - արդյունավետ կազմակերպել փրկարարական տեխնիկայի, միջոցների տեղաբաշխումը խոցված օջախում,
 - բնակչությանը իրազեկել իրավիճակի և իրականացվող միջոցառումների մասին, որը իր հերթին կանխարգելում է ստահող լուրերի տարածումը և հավանական խուճապը:
- Որոշ տեղեկատվական տվյալներ փոխանցվում են օտարերկրյա պետություններին, միջազգային կազմակերպություններին՝ անհրաժեշտ օգնություն ստանալու ակնկալիքով:

ՀՀ տարածքում ԱԻ մասին տեղեկատվության ստացումը և ազդարարումը կանոնակարգվում է ՀՀ Կառավարության 2003 թ հոկտեմբերի 16-ի N 1304-Ն որոշումով հաստատված «ՀՀ տարածքում ԱԻ առաջացման մասին տեղեկատվության ստացման և ազդարարման» կարգի համաձայն:

ԱԻ սպառնալիքի և առաջացման մասին պետական կառավարման մարմինների ազդարարումն իրականացվում է ԱԻՆ-ի կողմից:

Պետական կառավարման մարմինների ղեկավարներն ԱԻ-ի մասին տեղեկատվությունը հաղորդում են ՀՀ վարչապետին և ԱԻՆ նախարարին: ԱԻ-ի սպառնալիքի և առաջացման մասին ԱԻՆ նախարարը բանավոր զեկուցում է ՀՀ վարչապետին, որից հետո սեղմ ժամկետում ներկայացնում է գրավոր առաջարկություն ԱԻ կանխարգելման և հետևանքների վերացման վերաբերյալ:

ԱԻ-ի սպառնալիքի և առաջացման մասին ՀՀ պետական մարմիններին ու բնակչությանը տեղեկատվության և ազդարարման նպատակով ՀՀ կառավարությանն առնթեր ԱԻՆ-ում կազմակերպվում է շուրջօրյա օպերատիվ հերթապահություն:

ԱԻ սպառնալիքի և առաջացման մասին տեղեկատվությունը հաղորդվում է՝

ա) տեղական նշանակության ԱԻ-ի դեպքում կազմակերպության ղեկավարը՝ համայնքի ղեկավարին (Երևան քաղաքի թաղային համայնքի ղեկավարին) և մարզպետին:

Հատուկ, կարևորագույն նշանակության օբյեկտի ղեկավարը՝ մարզպետին (Երևանի քաղաքապետին), բ) համայնքային նշանակության համապատասխան ոլորտի լիազոր պետական կառավարման մարմնի ղեկավարին և ԱԻՆ տարածքային ստորաբաժանման պետին:

ԱԻ դեպքում համայնքի ղեկավարը՝ մարզպետին և ԱԻՆ տարածքային ստորաբաժանման պետին, իսկ Երևան քաղաքի թաղային համայնքի ղեկավարը՝ Երևանի քաղաքապետին և ԱԻՆ տարածքային ստորաբաժանման պետին,

գ) մարզային և համայնքային նշանակության արտակարգ իրավիճակի դեպքում մարզպետը (Երևանի քաղաքապետը)՝ ԱԻՆ նախարարին և ՀՀ վարչապետին,

դ) հանրապետական և անդրսահմանային նշանակության ԱԻ-ի դեպքում ՀՀ պետական կառավարման լիազոր մարմինների ղեկավարները՝ ՀՀ Նախագահին և ՀՀ վարչապետին:

ԱԻ առաջացման և դրանց հետևանքների վերացման ընթացքում տեղեկատվության հաղորդման տեխնիկական ապահովումն իրականացնում է ՀՀ տրանսպորտի և կապի նախարարությունը:

4.9. Հումանիտար օգնություն և սոցիալական աշխատանք ԱԻ-ում և պատերազմի ժամանակ

Մեկնաբանվող հարցեր՝

1. հումանիտար օգնության տեսակները, ստացման և բաշխման կարգը ԱԻ-ում,
2. միջազգային մարդասիրական կազմակերպությունների դերը հումանիտար օգնություն իրականացնելիս,
3. սոցիալ-հոգեբանական աջակցություն:

Ուսուցման նպատակը՝

1. ուկրաինների մոտ ձևավորել պատկերացումներ ԱԻ-ում հումանիտար օգնության իրականացման վերաբերյալ:

Ուսումնական արդյունք՝

1. մեկնաբանել ԱԻ-ի ժամանակ աղետյալ երկրի կողմից հումանիտար օգնության ստացման և բաշխման կարգը,
2. ներկայացնել ԱԻ-ում միջազգային կազմակերպությունների դերը հումանիտար օգնություն իրականացնելիս,
3. ներկայացնել սոցիալ-հոգեբանական աջակցության հիմնական սկզբունքները:

Կատարման չափանիշներ՝

1. ճիշտ է մեկնաբանում հումանիտար օգնության բնույթը, ձևերը և բաշխումը,
2. ճիշտ է ներկայացնում հումանիտար օգնությանը էապես աջակցող միջազգային կազմակերպությունները,
3. ճիշտ է մեկնաբանում սոցիալ - հոգեբանական աջակցության սկզբունքները:

4.9.1. Հումանիտար օգնություն

ԱԻ-ի ժամանակ, երբ կորուստները կրում են մասշտաբային բնույթ, զարգացած երկրներն անգամ ի գործ չեն միայն սեփական ուժերով դիմակայել աղետին: Օգնություն ստանալու ակնկալիքով տուժած երկիրը դիմում

է հանրությանը, տնտեսապես զարգացած երկրներին, միջազգային կազմակերպություններին (1): Աղետյալ երկիրը հայտարարում է աղետի մասշտաբների և տուժած բնակչության մոտավոր քանակների մասին, նշում է առաջին անհրաժեշտության միջոցների ցանկը: Դրանք կարող են լինել դեղորայք, բժշկական սարքավորումներ, առաջին անհրաժեշտության պարագաներ, վրաններ, փրկարարական միջոցներ և այլն: Օգնությունը կարող է իրականացվել նաև հատուկ մասնագիտական խմբեր գործուղելով: Որոշակի երկրներ, մասնավորապես հարևան երկրները կարող են վերավորներին տեղափոխել իրենց բուժօգնություններ: Պետությունների մեծ մասը, միջազգային մարդասիրական կազմակերպությունները՝ Կարմիր խաչ, Կարմիր մահիկ, Բժիշկներ առանց սահմանների և այլ կազմակերպություններ ամենատարբեր մարդասիրական օգնություն են կազմակերպում աղետի ենթարկված տարածքներում՝ անտեսելով քաղաքական, ազգային, կրոնական և այլ բնույթի տարաձայնություններ (1): Օգնությունը կրում է անշահախնդիր, մարդասիրական բնույթ: Ժամանակին ցուցաբերած հումանիտար օգնությունը զգալիորեն բարձրացնում է փրկարարական աշխատանքների արդյունավետությունը, տուժածների մոտ ամրապնդում է հույսը և հավատ ապագայի նկատմամբ, կանխարգելում է հնարավոր խուճապային իրավիճակները: Մարդասիրական օգնություն ցուցաբերելու համար ֆինանսական միջոցները կարող են գոյանալ տարբեր աղբյուրներից՝ միջազգային կազմակերպությունների կամ և պետությունների ֆինանսական հիմնադրամների միջոցով, մասնավոր անձանց հանգանակություններից, բարեգործական համերգներից, միջոցառումներից: Ստացված բարեգործական միջոցները կուտակվում են հատուկ հաշվեհամարներում և կարող են օգտագործվել բացառապես աղետից տուժածների կարիքների համար (1): Գումարի մի մասը կարող է օգտագործվել նաև աղետի գոտին

վերականգնելու նպատակով:

Աղետյալ երկրում կառավարության որոշմամբ ստեղծվում են հումանիտար օգնություն ստացող և բաշխող մարմիններ, հանձնաժողովներ, որոնց կազմում կարող են ընդգրկվել նաև օգնություն ցուցաբերող երկրների ներկայացուցիչներ: Կազմակերպությունները պետք է բաց լինեն իրենց ծրագրերի գնահատման և արտաքին վերահսկողության համար: Մարդասիրական օգնությունը բաշխելու ժամանակ ղեկավարվում են ըստ կարիքավորության աստիճանի: Ճգնաժամային իրավիճակներում կարևոր նշանակություն է ստանում տարբեր արձագանքների վաղ գնահատման անհրաժեշտությունը: ԱԻ-ում օգնություն ցուցաբերողները պետք է հասկանան ու հարգեն այն փաստը, որ տարբեր մշակույթների պատկանող անձանց արձագանքները կարող են տարբեր լինել: Շատ կարևոր է հաշվի առնել այն հանգամանքը, որ համայնքների ընտանիքները և անհատները տարբեր տարիքի և սեռի, ինչպես նաև տարբեր կարողությունների տեր անձիք են, որոնցից ոմանք ունեն հատուկ կարիքներ, սակայն ունեն նույն իրավունքները: Յուրաքանչյուր խմբի անդամները տարբեր վտանգների են ենթարկվում և տարբեր ազդեցություններ են կրում աղետներից: Անհրաժեշտ է ճանաչել անհատին համայնքային համատեքստում, ինչպես նաև հասկանալ վերջիններիս սոցիալական մշակութային բարդությունները: Կարող են գոյություն ունենալ արտաքին ազդեցություններ, ցնցումներ և այլն, որոնք բացահայտում են կյանքի այլ ոլորտներում գործելու մարդկանց կարողությունները:

Համայնքի համար կարևոր բաղադրիչներից մեկը ԱԻ-ում մատուցվող ծառայությունները հասանելի դարձնելն է: Շատ կարևոր է, որ դրսից եկած օգնությունը հասանելի լինի համայնքի բոլոր անդամներին և վերջիններիս վերականգնման և հետագա զարգացման հնարավորություն ընձեռնի: Գործողությունները պետք է ուղղված լինեն բոլոր խմբերի տարբեր կարիքների բավարարմանը: Որոշ

անհատներ լրացուցիչ ուշադրության մեծ կարիք ունեն, ինչպիսիք են ծնողագուրկ երեխաները, երեխաների կամ միայնակ կանանց կամ տղամարդկանց կողմից ղեկավարվող ընտանիքները: Անհրաժեշտ է սոցիալ-հաջակցություն ցուցաբերել խոցելի խմբերին՝ երեխաներին, հաշմանդամ ծեղերին, կերակրող կամ հղի կանանց: Արդյունավետ մարդասիրական օգնություն ցուցաբերելու համար անհրաժեշտ է արձագանքման աշխատանքների բոլոր ոլորտներում հավասարապես ընդգրկել կանանց և տղամարդկանց, աղջիկների և տղաների: Ընդգրկվածության և պատասխանատվության զգացումն առաջանում է արձագանքման բոլոր փուլերում՝ ակտիվորեն ընդգրկելով տուժած բնակչությանը որոշումներ կայացնելու գործընթացին: Փոխհարաբերություններ հաստատելու ունակությունը, գործընկերությունը և տեղի համատեքստի իմացությունը կարևոր դեր են խաղում ԱԻ-ում ցուցաբերվող օգնության տրամադրումը տուժած բնակիչներին հասանելի դարձնելու գործում:

4.9.2. Սոցիալ-հոգեբանական աջակցություն

Բարեկեցության որոշակի մակարդակ ձեռք բերելու համար մարդիկ ձգտում են սոցիալական փեխհամագործակցության, մտավոր ազդակների և ուսուցման, ֆիզիկական ապահովության, կրոնական և հոգևոր հավատքի: Սակայն ԱԻ-ում մարդկանց սոցիալ-հոգեբանական բարեկեցությունը կախված է շատ գործոններից: Պետք է բավարարվեն այնպիսի նյութական, կենսաբանական և սոցիալ-հոգեբանական կարիքներ, ինչպիսիք են սնունդը, ջուրը, կացարանը, սանիտարահիգիենիկ պայմանները, ֆիզիկական և հոգեբանական առողջությունը: Տուժածները կարիք ունեն նաև տնտեսական կայունության:

Սոցիալ-հոգեբանական աջակցությունը մոտեցում է, որտեղ մարդասիրական օգնությունը ընդգրկում է

սոցիալական, հոգեբանական գործընթացներ արձագանքման գործողություններում:

Համայնքային սոցիալ-հոգեբանական աջակցության հիմքում ընկած է համայնքների տուժած բնակչության դիմակայման, վերականգման և հետագա զարգացման կարողությունների ճանաչումը և նպաստել դժվարությունների հաղթահարմանը: Բոլոր համայնքներն և անհատներն ունեն ճգնաժամային իրավիճակների հաղթահարման միջոցներ և ռազմավարություն: Համայնքային զարգացման կայունություն ապահովելու համար կարևոր նշանակություն ունի ինքնակառավարման և խմբային որոշումներ կայացնելու կարողությունների խթանումը: Մարդասիրական օգնության արդյունավետությունը կտրուկ բարձրանում է այն համայնքներում որտեղ համայնքի ներկայացուցիչներն, անհատ քաղաքացիները վերականգնման ջանքեր են գործադրում: Երբ համայնքները վստահում են սեփական ուժերին, նրանք վերականգնման, վերակառուցման և զարգացման երկարատև ու կայուն հեռանկարներ են ունենում: Ճգնաժամային իրավիճակների հաղթահարման ռազմավարությունների օժանդակմանը մեծապես նպաստում է նաև տուժած բնակչության հիմնարար իրավունքների պահպանությունը: Համայնքային սոցիալ-հոգեբանական աջակցությունը վստահ է, որ տուժած համայնքները կըմբռնեն իրենց իրավունքները, իրավունքի պահանջը և կարողությունները ԱԻ-ում տրամադրվող մարդասիրական օգնությունից օգուտ ստանալու համար:

4.9.2.1. Համայնքային սոցիալ-հոգեբանական աջակցության հիմնական սկզբունքները

Սկզբունք 1. Առանց խտրականության դրսևորումների խթանել կանանց, տղամարդկանց, աղջիկների ու տղաների հիմնարար իրավունքների՝ պաշտպանությունը հանուն ընդհանուր բարեկեցության խուսափելով ավելորդ

տառապանքից, վախից ու ցավից:

Հնարավոր գործողություններ.

1. ԱԻ-ում մարդու իրավունքների պաշտպանությունը, հատկապես այն անձանց, ովքեր վտանգված կամ խարանված են, դարձնել սոցիալ-հոգեբանական ծրագրերի նախագծման, իրականացման, մոնիտորինգի և գնահատման անբաժանելի մասը: Այլանսի անդամները, և կամ նրանց տեղական գործընկերները պետք է ծանոթ լինեն տեղական այն օրենքներին ու կանոնակարգերին, որոնք պաշտպանում են մարդու իրավունքներն ԱԻ-ում: Անհրաժեշտ է ճանաչել և համապատասխան աջակցություն ցուցաբերել մարդկանց իրավունքների պաշտպանության համար պատասխանատու պետական մարմիններին,
2. առանց խտրականության ապահովել բազմակողմանի ծառայությունների մատուցում՝ խուսափելով հոգեկան խանգարումներով անձանց և անպաշտպան երեխաներին առանց հիմնավորման հատուկ հաստատություններ ուղղեգրելուց,
3. պաշտպանել խարանման վտանգից այն անձանց, որոնց իրավունքները ոտնահարվել են՝ վերջիններիս ընդգրկելով լայնածավալ ծրագրերում,
4. համագործակցել իրավապաշտպան և դոնոր կազմակերպությունների հետ՝ աղետից փրկվածներին սոցիալ -հոգեբանական աջակցություն ցուցաբերելու և վերջիններիս գոյություն ունեցող աջակցման կառույցների վերաբերյալ տեղեկատվություն տրամադրելու համար,
5. իրավունքի սուբյեկտի համար ապահովել հավասարապես մատչելի և հստակ բողոքարկման մեխանիզմներ:

Սկզբունք 2. Ներառել սոցիալ-հոգեբանական նկատառումները Այլանսի աշխատանքային բոլոր ոլորտներում (օրինակ՝ ջուր և հիգիենա, կենսապահովման միջոցներ, առողջապահություն և անվտանգություն):

Հնարավոր գործողություններ.

1. գնահատել սննդի անվտանգության, պարենային օգնության, ջրամատակարարման և սանիտարահիգիենիկ ծառայությունների, կացարանի և տեղանքի պլանավորման հետ կապված սոցիալ- հոգեբանական գործոնները,
2. ապահովել տուժածների մասնակցությունը գնահատման, պլանավորման և իրականացման աշխատանքներում՝ հատկապես ընդգրկելով կանանց և այլ ռիսկային խմբերի,
3. ջրամատակարարման և սանիտարահիգիենիկ ծառայություններ մատուցելիս ապահովել տուժածների արժանապատվությունը, անվտանգությունը ու պաշտպանությունը՝ տրամադրելով դռան փականներ ունեցող և համապատասխան լուսավորությամբ արտաքնոցներ և բաղնիքային տարածքներ,
4. կանխել և կառուցողական մոտեցում ցուցաբերել տուժած ընտանիքների, տեղահանված խմբերի, մշտական բնակիչների, տեղական գործընկերների և արտասահմանյան դոնորների միջև ծագած վեճերը լուծելու հարցում,
5. մարդասիրական օգնությունն իրականացնել տվյալ մշակույթի նորմերին համապատասխան՝ պաշտպանելով շահագրգիռ անձանց ինքնությունը, միասնությունն ու արժանապատվությունը:

Սկզբունք 3. Համայնքային ինքնապաշտպանության ռազմավարությունների մշակում՝ խթանելով համայնքային սեփականության և ռեսուրսների վերահսկման գաղափարը և օգտագործելով ներգրավման և որոշումներ կայացնելու մասնակցային գործընթացները:

Հնարավոր գործողություններ.

1. նպաստել համայնքներում առաջնահերթ գործողությունների սահմանմանը՝ մասնակցային գնահատման և այլ մեթոդներով, ուշադրություն դարձնել լեզվային արգելքներին, հատկապես եթե դրանք սահմանափակում են տեղաբնակների մասնակցությունն օգնության աշխատանքներին,

2. խուսափել տվյալ հասարակական կազմակերպության աշխատանքային լեզվով խոսող անձանց լիազորություններ տալուց, եթե համայնքի անդամներն ավելի բանիմաց են այդ աշխատանքները կատարելու համար:

Սկզբունք 4. Օժանդակել տուժված համայնքների բնակչությանը, իրենց բնականոն կյանքին վերադառնալու համար՝ մասնակից դարձնելով վերջիններիս տեղական կառույցներում՝ դպրոցներում, համայնքային կենտրոններում, եկեղեցիներում և տեղական կազմակերպությունում իրականացվող սոցիալական գործընթացներին և հավաքություններին:

Հնարավոր գործողություններ.

1. աջակցել համայնքային նախասիրություններին՝ ակտիվորեն խրախուսելով նրանց, ովքեր նպաստում և օժանդակում են համայնքի ողջ տուժած բնակչությանը, այդ թվում միայնակ կանանց կամ տղամարդկանց կողմից ղեկավարվող ընտանիքներին և ռիսկային խմբերին,

2. խրախուսել խմբերի կազմավորմանը, մասնավորապես այն խմբերի, որոնք համալրում են գոյություն ունեցողներին՝ ինքնաջակցման և պլանավորման տարբեր գործողություններ իրականացնելու նպատակով:

Սկզբունք 5. Ընդունել և խրախուսել համայնքների հավատը սեփական ուժերի և կարողությունների նկատմամբ՝ իրենց իսկ միջոցներով սեփական բարեկեցությունը բարելավելու և պաշտպանելու համար:

Հնարավոր գործողություններ.

1. աշխատանքների սկզբնական փուլում ապահովել անվտանգ և բավարար պայմաններով տարածք՝ նախնական պլանավորման քննարկումներին աջակցելու և բոլոր անհատներին հասանելի լեզուներով տեղեկատվություն տրամադրելու համար,

2. ճանաչել և կարևորել տուժած բնակչության կողմից ինքնուրույն իրականացվող սոցիալ-հոգեբանական աջակցությունը,

3. ԱԻ-ին արձագանքել գոյություն ունեցող միջոցներին համապատասխան՝ խուսափելով գերազանցել անհրաժեշտ օգնության սահմանը,

4. ապահովել Այլանսի անդամների ֆիզիկական ներկայությունը տուժած բնակավայրերում, վստահ լինել, որ տուժած բնակչության պաշտպանության անհրաժեշտությունը ըմբռնում են բոլոր մակարդակներում, ինչպես նաև ապահովել բողոքներ ներկայացնելու մեխանիզմների աշխատանքը:

Սկզբունք 6. Խթանել համայնքի վերականգնման լավագույն փորձի կիրառումը՝ կարևորելով ընտանիքի և համայնքի աջակցության կառույցների այն աշխատանքները, որոնք հոգում են անհատների ու տարբեր խմբերի կարիքները:

Հնարավոր գործողություններ.

1. նպաստել աղետից տուժած մարդկանց վերականգնման համար կարևոր համապատասխան պայմանների ստեղծմանը, ինչպիսիք են ծեսերն ու թաղումները, սոցիալական աջակցության ցանցերը, որոնք համատեղելի են մարդու իրավունքների միջազգային չափանիշների հետ:

Սկզբունք 7. Պատշաճ ուշադրություն դարձնել մարդկանց հոգևոր կարիքներին՝ վերջիններիս հոգեկան առողջությանը, ինչպես պաշտպանվածության ու կապվածության զգացումը պահպանելու համար:

Հնարավոր գործողություններ.

1. կապ հաստատել տեղական կրոնական, հոգևոր և այլ մշակութային առաջնորդների հետ՝ նպատակ ունենալով պարզել վերջիններիս տեսակետը աղետի ազդեցության, ինչպես նաև այն փորձի վերաբերյալ, որը կարող է կիրառվել տուժածներին օգնություն ցուցաբերելու համար,

2. գիտելիքներ ձեռք բերել մշակութային, կրոնական, հոգևոր աջակցության, ինչպես նաև դժվարությունների հաղթահարման մեխանիզմների վերաբերյալ,

3. համապատասխան տեղեկատվություն տարածել

մարդասիրական օգնության դերակատարների շրջանում՝ ոլորտային և համակարգման հարցերի շուրջ հանդիպումների ժամանակ,

4. առաջնորդների հետ քննարկումներ անցկացնել այն վնասակար ավանդույթների և փորձի շուրջ, որոնք կարող են խոչընդոտել համայնքների արագ վերականգնման գործընթացին,

5. աջակցել հոգևոր խնամակալներին՝ առավել արդյունավետ գործողություն ծավալելու համար:

Սկզբունք 8. Մեծացնել համայնքների վերականգնման հնարավորությունը և հույսը վերականգնման և երկարատև կայունության նկատմամբ՝ օժանդակելով նրանց զարգացման կարողությունների աճին:

Հնարավոր գործողություններ.

1. նպաստել համայնքներում իրականացվելիք գործողությունների առաջնահերթության սահմանման գործընթացին՝ կիռառելով մասնակցային գնահատման և մասնակցային այլ մեթոդներ,

2. աջակցել համայնքային այն նախաձեռնություններին և կառույցներին, որոնք խրախուսում և ընդգրկում են կանանց որոշումներ կայացնելու գործընթացում,

3. հիշել, որ ԱԻ-ը ողբերգություն լինելով հանդերձ կարող է դրական փոփոխությունների իրականացման հարթակ հանդիսանալ: Այն կարող է խթանել նոր առաջնորդների և դերակատարների ասպարեզ գալը, նպաստել հավասար պայմանների ստեղծմանը ծառայություններից օգտվելու և որոշումներ կայացնելու գործընթացում,

4. ակտիվորեն ընդգրկել տեղական գործընկերներին և դիտարկել նրանց ոչ թե որպես լոկ մեր գաղափարները իրականացնողներ, այլ որպես արձագանքման գործողությունների արդյունավետության և կայունության հիմնական պատասխանատուներ:

ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ

Ձեռնարկում ներկայացված ուսումնական նյութի յուրացումը թույլ է տալիս տարաբնույթ արտակարգ իրավիճակներում և պատերազմի ժամանակ.

1. իրական պատկերացում ունենալ բնակչության պաշտպանվածության աստիճանի մասին,
2. տեղյակ լինել ՔՊ ոլորտում, օրենքով սահմանված կարգով, քաղաքացիների իրավունքներին և պարտականություններին,
3. դրսևորել նախընտրելի վարքագիծ,
4. արդյունավետ օգտագործել ՔՊ անհատական և կոլեկտիվ պաշտպանական միջոցները,
5. իրազեկված լինել բնակչության ազդարարման կարգին և բնակչության գործողություններին,
6. դիմակայել բնակչության բարոյահոգեբանական խանգարումների հնարավոր դրսևորումներին, հաղթահարել խուճապը,
7. որոշակի պատկերացումներ ունենալ հումանիտար օգնության և սոցիալական աշխատանքի վերաբերյալ:

Անշուշտ, ԱԻ-ում և պատերազմի ժամանակ, բնակչության պաշտպանությանն ուղղված հիմնախնդիրները, կախված լոկալ և գլոբալ բնույթի մարտահրավերներից, ենթակա են լրացուցիչ ուսումնասիրման և վերլուծության:

Առաջարկվող գրականության ցանկ

1. ԵՊՀ Քաղաքաշտպանության ամբիոն, ՔՊ և ԱԻ հիմնահարցեր, ուսումնական ձեռնարկ, Երևան-2006, «Երևանի համալսարանի հրատարակություն»:
2. Ս. Ա. Հարությունյան, ԱԻ և ՔՊ հիմնահարցեր, ուսումնական ձեռնարկ, Երևան-2003, «Տնտեսագետ» հրատարակություն:
3. Հ. Ասրյան, Յու. Մամիկոնյան, Հ. Մաթևոսյան, Կ. Սարաֆյան Ավանգարդ Հումանիտար հետազոտությունների կենտրոն, Ռազմական և ԱԻ - ում վարվելակերպի կանոնների մասին, ուսումնական ձեռնարկ, Երևան-2001, «Ստամպա» ՍՊԸ-ի տպագրատուն:
4. ԱԻՆ, Երբ մոտենում է փորձության ժամը, ուղեցույց արձագանքող կազմակերպությունների համար, «Արտակարգ ալիք» լրատվական կենտրոն:
5. ՀՀ օրենքը ԱԻ-ում բնակչության պաշտպանության մասին (1998 դեկտեմբեր):
6. ՀՀ օրենքը ՔՊ մասին (2002 մարտ):
7. ՀՀ օրենքը սեյսմիկ պաշտպանության մասին (2002 հունիսի):
8. ՀՀ օրենքը Հայաստանի փրկարար ծառայության մասին (2005 հուլիսի):
9. ՀՀ օրենքը հրդեհային անվտանգության մասին (2001 ապրիլ):
10. ՀՀ օրենքը փրկարար ուժերի և փրկարարի կարգավիճակի մասին (2004 մայիս):
11. ՀՀ-ը օրենք «Ահաբեկչության դեմ պայքարի մասին» (2005 մարտ) :
12. ՀՀ քրեական օրենսգրիք (2003 ապրիլ):
13. ՀՀ կառավարություն որոշում՝ Վտանգավոր տարածքներից բնակչության տարահանման կարգը հաստատելու մասին (2011 օգոստոս):

14. ՀՀ կառավարության որոշումը՝ ՀՀ տարածքում ԱԻ-ի առաջացման մասին բնակչության ազդարարման կարգը հաստատելու մասին (2005 նոյեմբեր):
15. ՀՀ կառավարության որոշում՝ ՀՀ տարածքում ԱԻ առաջացման մասին տեղեկատվության ստացման և ազդարարման կարգը հաստատելու մասին (2003 հոկտեմբեր):
16. ՀՀ կառավարության որոշումը՝ բնակչությանն անհատական պաշտպանության միջոցներով ապահովելու կարգը հաստատելու մասին (2000 հոկտեմբեր):
17. ՀՀ կառավարության որոշում՝ բնակչության պատսպարման կարգը հաստատելու մասին (2000 սեպտեմբեր):
18. ՀՀ կառավարության որոշում՝ ՔՊ վտանգավոր տարածքների բացահայտման, ճառագայթային, քիմիական և մանրէաբանական միջոցներից վնասագերծման ու վարակագերծման կարգը սահմանելու մասին (2012 հոկտեմբեր):
19. ՀՀ Կառավարության որոշում՝ ՀԱԷԿ-ի միջուկային և կամ ճառագայթային վթարների դեպքում բնակչության պաշտպանության ազգային պլանը (ՀԱԷԿ-ի արտաքին վթարային պլան) հաստատելու մասին (2005 դեկտեմբեր):
20. ՀՀ կառավարության որոշում՝ «Հայաստանի հանրապետության տարածքում Սեյսմիկ ռիսկի նվազեցման համալիր ծրագրի մասին (1999 հունիս):
21. ՀՀ Կառավարության որոշում՝ Ճառագայթային անվտանգության նորմերը հաստատելու մասին (2006 օգոստոս):
22. Ռ. Ա. Մեժլումյան, Հ. Մ. Սարգսյան, Հ. Թ. Հակոբյան, Քաղաքացիական պաշտպանություն և անվտանգությունն արտակարգ իրավիճակներում, Երևան 2009:
23. Ա. Ա. Գևորգյան, Ռ. Զ. Մարուխյան, Ատոմային էլեկտրական կայաններ, Եր.,-2012:

24. Մ. Մինասյան, Է. Շատվորյան, Ինչպես պաշտպանվել
բազմաբաղադրական զենքից, Գրքույկ, Երևան-1986,
«Հայաստան» հրատարակություն
25. ՀՍՍՀ Քաղաքացիական պաշտպանության շտաբ,
Մեթոդական հանձնարարումներ մասնաշաղկի խոցման
զենքից պաշտպանվելու վերաբերյալ բնակչության
գիտելիքների համընդհանուր պարտադիր մինիմումի
ծրագրով պարապմունքներ անցկացնելու համար,
Երևան-1975, Պոլիգրաֆիայի և գրքի առևտրի գործերի
պետական կոմիտեի N-6 տպարան:
26. Учебное пособие по мониторингу при ядерных или
радиационных аварийных ситуациях. МАГАТЭ Вена,
Австрия 1999.
27. И. Т. Егоров, И. А. Шляхов, Н. И. Алабин Гражданская
обарона, учебник для студентов высши учебных заведений,
Москва «Высшая школа» 1977.
28. Ф. В. Петров, Ядерное оружие, сборник, Москва-1965,
«Военное издательство».
29. Гушер А. И. Проблема терроризма на рубеже третьего
тысячелетия новой эры человечества, М.. 2002-N-12.
30. Справочник офицера по ЗОМП, ГСВГ, Москва-1984,
«Военное издательство».
31. Справочник по поражающему действию ядерного
оружия, МО СССР, Часть вторая, Выявление и
оценка наземной радиационной обстановки,
Москва 1975, «Военное издательство».
32. Это должен знать и уметь каждый, ГО СССР,
Москва-1985, «Военное издательство».

Բովանդակությունը

Ներածություն	3
ԳԼՈՒԽ 1. ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ ԽՆԴԻՐՆԵՐԸ	5
1.1. ՔՊ համակարգը	6
1.2. Համակարգի իրավական ապահովման հիմքերը..	7
1.3. ՀՀ քաղաքացիների իրավունքները, պարտականությունները ՔՊ բնագավառում.....	8
1.4. ՔՊ և ԱԻ համակարգի գլխավոր խնդիրները.....	9
1.5. ՔՊ միջոցառումները.....	10
ԳԼՈՒԽ 2. ԽՈՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՄԻՋՈՑՆԵՐ.....	13
2.1. Հարձակման ժամանակակից սովորական միջոցներ.....	14
2.2. Զանգվածային ոչնչացման զենքեր.....	20
2.2.1. Միջուկային զենք (ատոմային զենք).....	20
2.2.2. Քիմիական զենք	26
2.2.3. Կենսաբանական զենք	32
2.2.3.1. Վարակիչ հիվանդությունների հակիրճ բնութագիրը.....	37
ԳԼՈՒԽ 3. ԱՀԱԲԵԿՉՈՒԹՅՈՒՆ.....	42
3.1. Ահաբեկչության պատմություն	44
3.2. Ահաբեկչության աճի պատճառները, 20-21 դդ. ահաբեկչության առանձնահատկությունները....	45
3.3. Վարքագծի կանոնները պատանտի կարգավիճակում.....	56
ԳԼՈՒԽ 4. ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԱԻ ԵՎ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԺԱՄԱՆԱԿ.....	58
4.1. Բնակչության պատսպարում ՔՊ պաշտպանական կառույցներում.....	60
4.2. Բնակչության պաշտպանություն ՔՊ անհատական պաշտպանական միջոցներով.....	68

4.3. Բնակչության տարիանում	83
4.4. Փրկարարական և անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքների կազմակերպումը ԱԻ և պատերազմի ժամանկ...	91
4.4.1. ՔՊ ուժերը և մասնակցությունը փրկարարական և անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքներին.....	94
4.4.2. Փրկարարական և անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքների իրականացման փուլերը.....	96
4.4.3. Վարակազերծում և սանիտարական մշակում (վնասազերծում)	97
4.4.3.1. Վարակազերծման ու վնասազերծման գործընթացում ներգրավված մարմիններ և գործառույթներ.....	98
4.5. ԱԻ և պատերազմի ժամանակ բնակչության ազդարարման կարգը.....	100
4.5.1. Բնակչության գործողությունը «Օդային տագնապ» և «Օդային տագնապի ավարտ», ազդանշանների ազդարարման դեպքում	102
4.6. ԱԻ-ում բնակչության բարոյահոգեբանական պատրաստվածություն.....	106
4.6.1. ԱԻ-ում բնակչության բարոյահոգեբանական վիճակի վրա ազդող գործոններ.....	107
4.6.2. ԱԻ-ում բնակչության բարոյահոգեբանական խանգարումների դրսևորումները ըստ ժամանակահատվածի.....	108
4.6.3. ԱԻ-ում հնարավոր խուճապի դրսևորման ձևերը և դիմակայման հնարքները.....	109
4.7. ԱԻ-ները և ռիսկի գնահատումը	112
4.7.1. Սեյսմիկ ռիսկի նվազեցման ծրագիր.....	112
4.7.2. Ռիսկի բնորոշումը, գնահատումը	114
4.8. Տեղեկատվության կազմակերպումը ԱԻ-ներում.....	116

4.9. Հումանիտար օգնություն և սոցիալական աշխատանք ԱԻ-ում և պատերազմի ժամանակ.....	120
4.9.1. Հումանիտար օգնություն.....	121
4.9.2. Սոցիալ-հոգեբանակա աջակցություն.....	124
4.9.2.1. Համայնքային սոցիալ-հոգեբանական աջակցության հիմնական սկզբունքները.....	125
ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ	130
ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ	132